

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԳՅԱՆ

# ՉԱՏԻԿ ԼԵՈՆ



ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 891.981-3 Շահվերոյան  
ԳՄԴ 843-4  
Շ 241

Շահվերոյան Ա.  
Շ 241 Զատիկ Լեոն: Հեքիաթ/Ա. Շահվերոյան.-  
Եր.: Լիմուշ, 2008.- 104 էջ:

«Զատիկ Լեոն» հեքիաթը պատմում է միջատների  
զարմանահրաշ աշխարհի մասին: Գիրքը նախատեսված է  
բոլոր տարիքի ընթերցողների համար:

ԳՄԴ 843-4

ISBN 978-9939-805-45-0

© Ա. Մ. ՇԱՀՎԵՐՈՂՅԱՆ, 2008

© «ԼԻՄՈՒՇ» հրատարակչություն, 2008

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի՛ ընթերցող:

Ներկայացնում եմ իմ արձակ ստեղծագործություններից մեկը՝ մի հեքիաթ-վիպակ կենդանական աշխարհի և, հատկապես՝ միջատների գրավիչ դասի մասին:

Լինելով մեծ բնասեր՝ հեքիաթի միջոցով փորձել եմ ներկայացնել մեր մոլորակի զարմանահրաշ ու հիասքանչ բնության բազմաթիվ բնակիչներին, նրանց տեսակային բազմազանությունը, կենսակերպը, առանձնահատկությունները, խորհրդավորությունն ու անսահման գեղեցկությունը: Այսինքն՝ գիրքն ունի ոչ միայն գեղարվեստական, այլև ուսումնաճանաչողական բնույթ: Այն նպատակ ունի արթնացնել ու մեծացնել սերը բնության, կենդանական աշխարհի հանդեպ:

Բարի այս հեքիաթը մերօրյա իրականության արտացոլման յուրօրինակ փորձ է. կենդանիների կերպարների տակ իրականում թաքնված են մարդկային կերպարներ, որակներ, բնավորության գծեր:

Գիրքը նախատեսված է ոչ միայն նախադպրոցական, միջին և բարձր դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների, այլև ընթերցասեր բոլոր անձանց համար:

Փոքրիկ գատիկի արկածների մասին պատմող այս հեքիաթն ունի հետաքրքիր նախապատմություն: Նախքան գրքի տեսքով լույսընծայումը, հեքիաթի էլեկտրոնային տարբերակը, «Փոքրիկ գատիկի մեծ ճամփորդությունը» վերնագրով, սկավառակի տեսքով՝ որպես մատուցման ժամանակակից և յուրօրինակ ձև, ընծայվել է բազմաթիվ ընթերցողների՝ արժանանալով ջերմ արձագանքների: Տարբեր տարիքի, մասնագիտության տեր մարդկանց այդօրինակ անկեղծ գնահատականն ու հիացական խոսքերը ոչ միայն անչափ ոգևորիչ էին, այլև խիստ պարտավորեցնող: Շատերը նշեցին, որ հեքիաթը կարող է պատրաստի

սցենար հանդիսանալ մուլտիպլիկացիոն լիամետրաժ կինոնկարի համար: Որպես լավագույն գնահատական կուզենայի նշել ևս մի փաստ. շատերը հեքիաթը սիրով ընթերցել են նաև իրենց երեխաների համար, վերջիններս էլ՝ մեծ հետաքրքրությամբ լսել են այն: Սա ոչ միայն խիստ շոյիչ և պարտավորեցնող է ինձ համար՝ որպես հեղինակի, այլև վառ վկայություն այն բանի, որ այս հեքիաթն արդեն ապրում է: Հավելեմ, որ էլեկտրոնային փոստի միջոցով հեքիաթը տարածում է գտել թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

Ուզում եմ ի սրտե շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում ոգևորիչ գնահատականները մեծ խթան են ցանկացած ստեղծագործող մարդու համար:

Հավելեմ, որ գիրքը միտումնավոր կերպով գերծ է մանկական նկարագրողումներից, որպեսզի ընթերցողին ոչ թե հրամցնի հեքիաթի հերոսների արդեն պատրաստի պատկերներ, այլ հնարավորություն ընձեռի՝ պատկերացնել հերոսներին, տեղի ունեցող դեպքերն ու բնության տեսարանները իր իսկ՝ ընթերցողի երևակայության շրջանակներում: Որպես արդյունք՝ ընթերցողի մտքում հեքիաթը կպատկերանա գուներ, հետաքրքրաշարժ մուլտֆիլմի տեսքով:

Շապիկի ընտրությունը ևս պատահական չէ: Այն գիրքն առավել տրամադրող և գրավիչ է դարձնում: Այն մտահղացել ու ստեղծել եմ՝ զատիկի արտաքին տեսքը խորհրդանշական, ինքնատիպ, կենդանի և խոսուն կերպով արտացոլելու նպատակով:

Խորին շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն անձանց, որոնք իրենց գործուն մասնակցությունն են ունեցել գրքի խմբագրական և տեխնիկական ձևավորման աշխատանքներում:

Ամփոփելով՝ ուզում եմ ի սրտե մաղթել հաճելի ընթերցում: Երջանիկ կլինեմ, եթե այս ստեղծագործությունն արժանանա Ձեր սիրուն ու գնահատանքին:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

*Որտեղ ծանոթանում ենք այս պատմության հերոսի ու նրա արտասովոր երազանքի հետ*

Աշխարհում անթիվ-անհամար միջատներ կան, սակայն նրանցից մեկն այնքան արտասովոր էր, որ նրա մասին է այս պատմությունը:

Սովորաբար սկսում են այսպես. «Լինում է, չի լինում...»: Սակայն մեր հերոսի համար դա շատ սովորական սկիզբ կլիներ, քանի որ արկածները, որոնք նա ունեցավ, հեռու էին սովորական լինելուց: Իսկ ամեն բան սկսվեց այն ժամանակ, երբ Լեոն պատահաբար տեսավ մի մեծ մայիսյան բզեզի, որն այդ առավոտ բզզալով թռավ-եկավ ու նստեց հենց այն ծառի ճյուղին, որի վրա ապրում էր նա:

Իսկ ո՞վ էր Լեոն: Նա մի գեղեցիկ, յոթկետանի, կլորիկ գատիկ էր: Ճիշտ է, չափերով շատ փոքր էր, սակայն նրան չնկատել հնարավոր չէր, քանի որ գատիկի առջևի կարծր, ալ կարմիր վերնաթևերն իրենց սև-սև բծերով նրան շատ էին գեղեցկացնում: Ի դեպ, առջևի կարծր թևերը բոլոր բզեզներին բնորոշ հատկանիշ են, դրա համար էլ նրանք կոչվում են կարծրաթևավորներ:

Եվ ահա, ամեն բան հարթ էր ընթանում մինչև այն արտասովոր օրը, երբ Լեոն տեսավ այդ բզեզին: Նա ապշահար ու հիացական հայացքով նայեց իր համար վիթխարի մայիսյան այդ հսկային և մտածեց. «Տեսնես ես մի օր կդառնա՞մ այդքան մեծ»: Փոքրիկ Լեոն ի՞նչ իմանար, որ այդ հարցը բեկումնային նշանակություն կունենար իր համար ու սկիզբ կդներ մեծ մի պատմության:

Այդ գիշեր Լեոն չքնեց: Անհանգիստ էր: Նրան տանջում էր

չարաբաստիկ հարցը: Մտածում էր, թե ինչո՞ւ է ինքն այդքան փոքր և երազում էր այն բզեզի պես մեծ լինել: Էլ իրեն դմբուզ կամ ճստիկ չէին ասի, հաշվի կնստեին իր հետ, կասեին. «Տեսե՛ք, ինչ մե՛ծ, ի՛նչ գեղեցիկ բզեզ է»:

Հաջորդ առավոտյան Լեոն հաստատակամորեն որոշեց հանդիպել իր ընկերոջը՝ Ինքնիրիեստիկ անունով ծղրիդին: Ինչու Ինքնիրիեստի՞կ: Այդ՝ ավելի շատ մականունը, քան անունը ծղրիդը ստացել էր այն բանից հետո, երբ իր արտացոլումը տեսել էր դաշտում ընկած հայելու կտորի մեջ ու իրեն թվացել էր, թե հարազատ եղբայր ունի: Այդ օրվանից խեղճն անծի երկատում էր ստացել, անընդհատ խոսում էր ինքն իր հետ՝ կարծելով, թե եղբոր հետ է խոսում: Ահա, այստեղից էլ նրա անսովոր, զվարճալի անունը՝ Ինքնիրիեստիկ:

Լեոն իջավ ճյուղից, թռավ նոր բացված երիցուկների վրայով, որոնց այդքան սիրում էր և հասնելով մասրենու թփին՝ կանչեց.

– Ինքնիրիեստի՞կ:

– Ողջո՛ւյն Լեո, – լսվեց թփի միջից, և մի ակնթարթ անց, Լեոյի դիմաց մի ցատկով հայտնվեց ծղրիդը:

– Չե՞ս տեսնում, Լե՛ոն է, բարևի՛ր նրան, շա՛տ անբաղաքավարի ես, – դեմքը շրջելով ու կողք նայելով ասաց Ինքնիրիեստիկը՝ ասես հանդիմանելով կողքին եղած մեկ ուրիշի, մինչդեռ կողքին ոչ ոք չկար: Նա շարունակեց, այս անգամ՝ իբր եղբայրն է խոսում.

– Բարև Լեո, մենք զբաղված էինք, ներիր, հավանաբար երկար ժամանակ է, ինչ կանչում ես մեզ:

Լեոն արդեն սովորել էր այն բանին, որ Ինքնիրիեստիկը փոքր-ինչ տարօրինակ պահվածք ունի և չէր շփոթվում կամ

աշխատում էր չչփոթվել ընկերոջ, ավելի ճիշտ՝ «ընկերների» հետ շփվելիս:

– Ինքնիրիտտիկ, լսիր, մի բան պիտի հարցնեմ Քեզ, կներես՝ Ձեզ...

– Ասա, լսում եմ: Լսիր, տես՝ ի՞նչ է ասում մեր զատիկ եղբայրը: Դե, հերի՛ք է այդ խոտը ծամես, ի՛նչ բկլիկն ես, – մե՛կ Լեոյի, մե՛կ իր թվացյալ, երևակայական եղբոր հետ խոսելով՝ նկատեց Ինքնիրիտտիկը:

– Ես երեկ մի մեծ բզեզ տեսա, – շարունակեց Լեոն, – շա՛տ մեծ բզեզ: Գիտես, ես էլ եմ ուզում այդպես մեծ լինել: Ինչպե՞ս անեմ, որ այդպես մեծանամ:

– Այդպես մեծ բզե՞զ, այդպես մեծ բզեզ, այդպես մեծ բզեզ, – բարձրաձայն մտածելով կրկնեց Ինքնիրիտտիկը:

– Հա, այդպես մեծ: Ինչո՞ւ եմ ես այսքան փոքր, ե՞րբ եմ մեծանալու:

– Ի՞նչ իմանամ: Մի բան ասա, եղբայր: Դու կիմանաս: Ե՞ս, ես չգիտեմ: Ինձ այնպես ես հարցնում, ասես ես գիտեմ: Ախր, ես այդ մեծ բզեզներին երբևէ չեմ տեսել: Տեսել ես: Չե՛մ տեսել: Տեսել ես:

– Դե, լավ, լավ, տղաներ, – Լեոն շտապեց միջամտել ու հանգստացնել Ինքնիրիտտիկին, որն արդեն վեճի էր բռնվել իր թվացյալ եղբոր հետ: – Լավ, հանգստացե՛ք, ոչի՛նչ, մի՛ անհանգստացե՛ք, ես կփորձեմ ի՛նքս իմանալ:

– Կներես, Լեո, եղբայրս շատ անքաղաքավարի է: Ե՞ս: Ե՞ս եմ անքաղաքավարի, անքաղաքավարին դո՛ւ ես, – շարունակեց ինքն իր հետ խոսել ծղրիդը:

– Էլի սկսեցի՞ր, ավելի ճիշտ՝ էլի սկսեցի՞ք, – վրա բերեց Լեոն: – Ինքնիրիտտիկ, շատ շնորհակալ եմ, ես հիմա գնում եմ լճակի մոտ, երեկոյան կհանդիպենք: Լավ մնացե՛ք:

Լեոն գնաց, իսկ Ինքնիրիեստիկը դեռ շարունակում էր պարզաբանել իր «եղբոր» հետ, թե ինչո՞ւ իրենք չկարողացան մտերիմ ընկերոջ՝ Լեոյի մոտ իրենց լավ պահել, որ Լեոն չգնա:

Իսկ Լեոն արդեն դեպի լճակը տանող ճանապարհին էր և հանկարծ, կանաչ խոտի վրա տեսավ մի մեծ սպիտակ խխունջի, որը մտել էր իր խեցու մեջ:

– Ներեցե՛ք, – ասաց Լեոն՝ հայացքն ուղղելով խեցու անցքի ուղղությամբ: – Է՛յ, տանը մեկը կա՞:

– Էդ ո՞վ է այդպես աղմկում, լսո՛ւմ եմ, լսո՛ւմ, – խեցու միջից լսվեց խուլ մի ձայն:

– Ներեցե՛ք, այդ ես եմ՝ Լեոն:

– Լե՞ոն:

– Չատիկ Լեոն:

Հանկարծ, սև այդ անցքի միջից հայտնվեց մեկ, հետո երկու բեղիկ, իսկ հետո էլ՝ խխունջի գլուխն ու մի հատված:

– Լե՛ո, – ասաց ծերունի Տրիստանը:

– Բարև, Տրիստան պապի, ինչպե՞ս ես:

– Լավ եմ, փոքրի՛կս, մի քիչ մեջքս է բռնվել:

– Դա նրանից է, որ քիչ ես շարժվում:

– Ես արդեն ծեր եմ: Առաջվա նախանձելի աշխուժությունը չունեմ:

– Առաջվա աշխուժությունը, – քմծիծաղով հարցրեց Լեոն և շարունակեց, – Տրիստան պապի, ո՞նց անեմ, որ մեծ բզեզ դառնամ, այն բզեզների պես, որ մեծ բեղեր ունեն, շատ կարծր առաջին վերնաթևեր, հաստ ոտքեր ու բզզում են այնպես ուժեղ, որ հեռվից իրենց ձայնը լսվում է:

Ծերունին զարմացավ ճատիկ Լեոյի անսպասելի հարցից:

– Եթե իմ հիշողությունը ինձ չի դավաճանում՝ ես դեռ չեմ



հիշում մի դեպք, որ քո պես պատիկ բզեզը քո նկարագրած մե՛ծ բզեզ դառնա: Բայց ո՞վ գիտի: Ես ապրում եմ այս բարձր խոտերի մեջ, ամբողջ կյանքս անցել է այս տարածքում, սա է իմ աշխարհը, ո՞վ գիտի, թե ինչ է կատարվում այս խոտերից այն կողմ: Լսի՛ր փոքրիկ, ծերունի Տրիստանը քեզ հագիվ թե օգնի այդ հարցում, բայց ես ճանաչում եմ մեկին, ով քեզ իսկապես կարող է օգտակար լինել: Նա շատ է շրջում այս ու այն կողմ և շատ տեղերում է եղել, անգամ այնպիսի տեղերում, ուր ո՛չ խոտեր կան, ո՛չ տերևներ, ո՛չ ձյուղեր, ո՛չ ցողուններ ու ծաղիկներ, այլ խի՛տ, երկա՛ր... մազեր:

–Մազե՞ր,— զարմացավ Լեոն:–Ո՞վ է այդ խորհրդավոր ճամփորդը:

–Դա անկուշտ Դադոն է՝ շան տիզը: Իրենից հարցրու, նա իմ վաղեմի ընկերն է ու անպայման կօգնի քեզ:

Լեոն շարունակում էր զարմացած նայել Տրիստանին՝ այդպես էլ չհասկանալով, թե ինչպես կարող էին վաղեմի ընկերներ լինել խխունջը և տիզը: Այդ ինչպե՞ս, որտե՞ղ և ե՞րբ էին նրանք ծանոթացել: Բայց ծերունին հո չէ՞ր ստի: Նա բարի էր ու անկեղծ:

–Շնորհակալ եմ, Տրիստան պապի:

–Խնդրեմ փոքրիկս: Փնտրի՛ր Դադոյին բացատից այն կողմ:

–Շնորհակալ եմ,— հեռանալով ասում էր Լեոն:

–Լսի՛ր,— ասաց խխունջը:– Նա մի թերություն ունի:

–Ի՞նչ թերություն:

–Շա՛տ մեծամիտ է, բայց սրտանց կօգնի: Իսկ ես մի քիչ քնեմ,— հորանջելով շարունակեց ծեր խխունջը:–Այսօր շատ շարժվեցի, լավ հոգնել եմ ու քունս էլ տանում է:

–Բարի երազնե՛ր,— ասաց արդեն բավականին հեռացած

Լեոն: Նա ուրախացել էր, քանի որ կգտներ Ղադոյին ու նրանից կհմանար իր հարցի պատասխանը:

Լեոն բավական թռել էր խոտից խոտ, ծաղկից ծաղիկ, երբ արդեն մթնշաղ էր, և շուտով մթնեց: Արևի լույսը, որ լուսնի վրա էր ընկել, արծաթագույն փայլով լուսավորել էր խավար գիշերը: Երկինքը մուգ, շատ մուգ կապույտ էր, համարյա՝ սև, իսկ խոտն իսկապես սև էր. թփերի ու ծառերի ուրվագծերից բացի ոչինչ չէր նշմարվում խավարում: Չքնաղ խաղաղություն էր տիրում: Լեոն նստել էր մի տերևի վրա և նայում էր հեռվում, անհուն երկնքում փայլող աստղերին ու լուսնին և մտածում, թե արդյոք կհմանա՞ մի օր՝ ինչպես դառնալ մեծ բզեզ: Դաշտային ճռիկի ձայնն էր լսվում խավարում, և շուտով Լեոն՝ իր մտորումներից ու ճռիկի ձայնից թմրած, հոգնած քուն մտավ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

*Որտեղ Լեոն փրկում է թիթեռնիկի կյանքը*

Երկար ու խաղաղ գիշերից հետո բացվեց պայծառ առավոտը: Շուրջբուլոը լցվեց արևի տաք շողերով: Բնությունն արթնացավ: Լճի վրա թռչում էին ձպուռները, մեղուները լցվել էին մարգագետին ու ծաղկափոշի էին հավաքում, իսկ գիշերային թիթեռներն ու մլակները, արևի առաջին ճառագայթների հետ, թաքնվել էին՝ սպասելով հաջորդ գիշերին: Համընդհանուր զվարթություն էր տիրում: Շատ թույլ գեփյուռը օրորում էր դաշտի կանաչ խոտը, իսկ խոտերի հետ էլ օրորվում էին դրանց վրա նստած տարբեր տեսակի որդերը, բզեզներն ու մանր մորեխները:

Լեոն արթնացավ անտառաբնակ փոքր թռչունների անուշ դայլայլից: Նրանց ձայներն ականջ էին շոյում ու, ասես, արթնանալու կոչ անում: Լեոն որոշեց նախ նախաճաշել, որպեսզի ուժ հավաքի: Թռչելով մի ճյուղի վրա՝ նա սկսեց ուտել մատղաշ բույսի հյութը ծծող մանր միջատներին՝ լվիճներին: Լեոն, ինչպես և մյուս բուլոր գատիկները, նախանձելի ախորժակ ուներ. նա գտավ ու միանգամից կերավ մի քանի տասնյակ լվիճ: Էլ չեմ ասում, որ գատիկի թրթուրը, հասուն բզեզի համեմատ, ուտում է գրեթե երկու անգամ շատ: Այնպես որ, երբ փոքրիկ գատիկները մեծ եռանդով վազվզում են բարակ ճյուղերի ու տերևների վրայով, ապա դա հենց այնպես չի արվում. նրանք կեր են որոնում՝ իրենց սիրած լվիճներին:

Եվ այսպես, լավ նախաճաշելուց հետո Լեոն շարունակեց իր ճանապարհը: Նա կոնկրետ չգիտեր, թե ուր գնար: Հիշում էր միայն, որ Դադո անունով տիզն ապրում էր բացատից այն կողմ: Լեոն հետ նայեց ու տեսավ, որ իր տանից, իր հայրենի վայրերից արդեն բավականաչափ հեռացել է: Ի՞նչ աներ, հե՞տ գնար, թե՞ շարունակեր ճանապարհը՝ լի վտանգներով ու գաղտնիքներով: Մի պահ գատիկը երկմտեց, սակայն հիշելով ծերուկ խխունջի խոսքերը, թե Դադոն հաստատ կիմանա իրեն տանջող հարցի պատասխանը, շարունակեց ճանապարհը:

Օդի ջերմաստիճանը շատ էր բարձրացել, շատ շոգ էր, ու Լեոն ստիպված սկսեց թռչել խոտերի ու թփերի արանքով՝ պատսպարվելով կիզիչ ճառագայթներից: Լեոն ճանապարհին նկատեց, որ արևն արդեն մյուս կողմում է և հասկացավ, որ բավական ժամանակ է, ինչ շարունակում է որոնել Դադոյին: Եվ հանկարծ հերթական թփից մյուս թուփը թռչելիս նա լսեց.

– Օգնեցե՛ք:

Լեոն անմիջապես նստեց մի բարակ ճյուղի վրա և ականջ դրեց՝ փորձելով պարզել, թե որտեղի՞ց էր գալիս օգնության այդ կանչը:

– Օգնեցե՛ք, խնդրո՞ւմ եմ, օգնեցե՛ք, – լսվում էր ինչ-որ տեղից, և, այդ աղերսագին ճիչերին զուգընթաց, լսվում էր նաև ինչ-որ չար ծիծաղ:

– Ո՛չ ոք քեզ չի՛ օգնի, հա՛, հա՛, հա՛, լա՛վ ընկար թակարդս:

– Ո՛չ, խնդրում եմ, ինձ ձեռք չտա՛ք, թողե՛ք ինձ, – շարունակում էր այդ ձայնը:

Լեոն, փորձելով օգնության հասնել, արագ ցած թռավ մի քանի ճյուղի ու տերևի վրայից և, շտապելով ձայնի ուղղությանը, հայտնվեց խիտ մի թավուտում: Գլխավերևում աճող ծաղիկների ու տերևների ստվերները մթնեցրել էին թփերի այդ հատվածը: Սակայն ձայնն էլ ավելի մոտ էր, և Լեոն չվախեցավ ավելի խորանալ խիտ ճյուղերի մեջ: Եվ ահա՛ ինչ տեսավ. ահռելի մի սարդոստայն, մեծ մի որսացանց, որ ձգվում էր մի ճյուղից մյուսը: Այդ սարդոստայնի մեջտեղում գալարվում էր փոքրիկ մի թիթեռ: Նա շարունակում էր թփրտալ: Որսացանցի կենտրոնից դեպի մոտակա տերևը ձգվում էր ազդանշանային մի թել, որը սկսեց տատանվել՝ այդպիսով իմաց տալով որսացանցի տիրոջը, որ իր հյուսած թակարդը զոհ է ընկել: Այդ ազդանշանի համաձայն, սարդոստայնի տերն իր թաքստոցից հարձակվում էր որսի վրա և արագ փաթաթում նրան մահաբեր ուտայնով:

Լեոն թռավ դեպի թիթեռը:

– Ես քեզ կօգնեմ, – վախից քար կտրած, ուժասպառ թիթեռին ասաց գատիկը:

– Թի՛ր, գնա՛ այստեղից, նա քե՛զ էլ կբռնի, փրկվի՛ր, –  
 ասաց թիթեռը և ահավոր սարսափի մեջ շարունակեց, – նա իր  
 ծնոտների ճանկերը խրում է մարմնիդ մեջ և թույն ներարկում:  
 Հետո նա վերադառնում և ծծում է քո արդեն համարյա  
 մարսված հեղուկ պարունակությունը:

– Ո՞վ նա, – հարցրեց Լեոն:

Ջատիկը դեռ չգիտեր, թե ովքեր են պատրաստում  
 այդպիսի սարդոստայններ: Եվ հենց Լեոյի հարցից հետո, նրա  
 հետևից հանկարծ լսվեց չորս զույգ ոտքերի ձայն: Ինչ-որ մեկը  
 խիստ, ահարկու ձայնով ասաց.

– Այդպե՛ս, այդպե՛ս, դո՞ւ ով ես:

Լեոն շրջվեց ու ի՛նչ տեսնի՝ սարդոստայնի մի ծայրին  
 մի ահռելի, մազոտ ու շատ սարսափելի խաչասարդ: Նրա  
 մեջքի վրա նշմարվում էր խաչի ձևով բաց գույնի մի պատկեր,  
 և այստեղից էլ, ի դեպ, առաջացել է խաչասարդ անունը:  
 Հարձակման, որսը սպանելու և պաշտպանվելու համար  
 նախատեսված սարդի ծնոտները պարզապես սարսափելի  
 էին, իսկ ծնոտների հիմքում տեղավորված բերանի երկրորդ  
 զույգ օրգանները՝ կարճ ոտնաշոշափուկները, որ շատ նման  
 էին քայլող ոտքերի, ուղղակի զարհուրելի էին: Այդ շոշափուկ-  
 ները շարժելով՝ սարդը սկսեց մոտենալ:

– Այդ ո՞վ է համարձակվել խանգարել իմ նախաձառը, –  
 գոչեց նա և սկսեց արագորեն շարժել որսացանցի թելերը,  
 որպեսզի և՛ թիթեռնիկն էլ ավելի խճճվի ոստայնի մեջ, և՛  
 զատիկը թակարդն ընկնի:

– Մի՛ կեր նրան, – գոչեց Լեոն: – Ես թույլ չե՛մ տա:

– Իսկ դու ո՞վ ես, որ ինձ թույլ չտաս: Հիմա քե՛զ էլ  
 կբռնեն, – ասաց զայրացած սարդը և ճյուղի վրայից սկսեց  
 շարժվել դեպի սարդոստայնի կենտրոնը:

– Փախի՛ր, – ճչաց սարսափած թիթեռնիկը, – փախի՛ր, փրկվի՛ր, – կրկնում էր նա իր քնքուշ ձայնով:

– Ո՛չ, ես քեզ պիտի փրկեմ, – ասաց Լեոն:

Նա ինքն էլ էր վախեցել, սակայն չէր կարող թողնել այդ թիթեռնիկին ակնհայտ կործանման վտանգի մեջ: Լեոյի ոտքերը խոնավացան. երբ զատիկն զգում է մոտալուտ վտանգը, նրա փոքրիկ ոտքերի ծալքերում հայտնվում են նարնջագույն հեղուկի մանր կաթիլներ: Այդ հեղուկն, ի միջի այլոց, շատ անդուր համ ունի ու վանում, խրտնեցնում է բզեզի բոլոր թշնամիներին: Սակայն, այս մեկը լրիվ ուրիշ դեպք էր, այսպիսի հակառակորդ նրան դեռ չէր հանդիպել: Լեոն առաջին անգամ էր սարդ տեսնում, այդ կենդանին նրա համար մի մե՛ծ հրեշ էր, որը մոտենում էր, և որից անհրաժեշտ էր փրկվել ամեն գնով ու փրկել նաև թիթեռին: Լեոն, բռնելով թիթեռնիկի թաթիկներից, սկսեց քաշել նրան, որ ազատի սարդոստայնի կաչուն թելերից: Մինչդեռ սարդն ավելի ու ավելի էր մոտենում: Ինչքան ուժ ուներ՝ զատիկը քաշում էր պատանդին: Եվ հենց այն վայրկյանին, երբ սարդն արդեն ճանկելու էր երկուսին էլ՝ Լեոն դուրս քաշեց թիթեռնիկին, և նրանք երկուսով գլորվեցին ցած:

– Դու դեռ կտեսնե՛ս, – գոռաց զայրացած խաչասարդը: – Ես քեզ ցո՛ւյց կտամ, այդպես հեշտ չե՛ս պրծնի:

Լեոն վայր ընկավ, թիթեռնիկն էլ՝ նրա վրա: Ուշքի գալով՝ երկուսն էլ հասկացան, որ փրկվել են: Թիթեռնիկը ուրախությունից գրկեց Լեոյին:

– Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, դու փրկեցիր իմ կյանքը, դու հերո՛ս ես:

– Ինչ լավ է, որ կարողացա օգնել քեզ, – ասաց Լեոն:

– Դու ինձ փրկեցիր: Շնորհակալ եմ:

– Դե լավ, չարժի, իմ փոխարեն յուրաքանչյուրն այդ կերպ կվարվեր,– համեստորեն ասաց Լեոն:

– Ո՛չ, ինչ ես ասում, ոչ բոլորն այդպես կվարվեին: Գիտե՞ս, թե քանի բզեզ ու ճանճ անտարբեր թռան ու անցան կողքովս, երբ ես օգնություն էի կանչում, և միայն դու՛ օգնեցիր:

– Դե, արի ծանոթանանք:

– Արի ծանոթանանք, ի՛մ հերոս,– ուրախացավ թիթեռնիկը:

– Ինչպե՞ս է անունդ,– հարցրեց Լեոն:

– Ես Քեթրինն եմ, կապտաթիթեռ Քեթրինը:

– Շատ հաճելի է, Քեթրին, իմ անունը Լեո է, ես գատիկ եմ:

– Ես գիտեմ, որ դու գատիկ ես, ես էլի եմ գատիկ տեսել:

– Ճի՞շտ,– ուրախացավ Լեոն:

– Հա, բայց շատ վաղուց, դու իմ կյանքում 2-րդ գատիկն ես, որին հանդիպում եմ այս մեծ դաշտում:

– Կարծում եմ՝ ինձնից բացի այստեղ ուրիշ գատիկ հիմա չի էլ լինի, քանի որ ես հեռվից եմ թռել-եկել ու հասել այս վայրերը:

– Իսկ ի՞նչն է քեզ բերել այստեղ,– հարցրեց Քեթրինը:

– Հասկանո՞ւմ ես, Քեթրին, ես ունեմ մի մե՛ծ երազանք, և քանի որ դու հրաշալի թիթեռ ես, ապա ես հաճույքով կկիսվեմ քեզ հետ ու կպատմեմ իմ երազանքի մասին:

Եվ Լեոն պատմեց այն օրը տեսած մայիսյան հսկա բզեզի, ծերուկ խխունջի մասին, Ինքնիրիեստիկի մասին էլ չմոռացավ պատմել: Վերջում էլ, իհարկե, անդրադարձավ Դադոյին: Քնքուշ ու նուրբ թիթեռնիկ Քեթրինը, իր գեղեցիկ աչուկներով զարմացած ու հափշտակված նայելով Լեոյին, լսեց այդ զարմանահրաշ պատմությունը, և երբ գատիկն

ավարտեց պատմությունն իր ճամփորդության մասին, ասաց.

– Ես գիտեմ, թե որտեղ է բացատը: Այդ տիզը, որի մասին քեզ ասել է ծերուկը, այնտեղ է ապրում, որովհետև մարդիկ իրենց շներին հաճախ են բերում այդտեղ ու ման տալիս:

– Մարդի՞կ, – զարմացած հարցրեց Լեոն, – իսկ ի՞նչ է «մարդիկ»:

– Նրանք շատ մեծ արարածներ են, որ...

Հազիվ էր Քեթրինը սկսել նկարագրել, թե ովքեր են մարդիկ, երբ մի մեծ կաթիլ ընկավ ուղիղ իր ու Լեոյի մեջտեղում: Երկուսը վախեցած նայեցին իրար ու հասկացան, որ հիմա տեղի է ունենալու իրենց համար շատ վտանգավոր մի բան՝ անծրև է տեղալու: Չէին հասցրել կողմնորոշվել, թե ինչ անեն, երբ կաթացին երկրորդ, երրորդ, չորրորդ կաթիլները, և հաջորդ ակնթարթին արդեն սկսվեց տեղատարափ մի անծրև: Լեոն և Քեթրինը մի կերպ թռան դեպի մոտակա ճյուղը, բայց կաթիլները շատ խիտ էին, և նրանք չէին կարողանում կողմնորոշվել, թե ինչ անեն հետո: Իրար ձեռք բռնած՝ նրանք սկսեցին խուճապահար թռչել կաթիլների արանքով: Իրենց դիմացից, կողքից, հետևից արագ ցած էին սուրում անծրևի մեծ կաթիլները:

– Քեթրին, սա ի՞նչ է, – սարսափած գոչեց Լեոն, երբ հանկարծ մի մեծ կաթիլ, ուղիղ իր վրա կաթալով, պոկեց նրան Քեթրինից ու ցած տարավ՝ դեպի թաց գետին:

– Լե՛ո, – ճչաց թիթեռնիկը և շտապեց նրա հետևից: – Լե՛ո, Լե՛ո, – կանչում էր նա, սակայն չէր գտնում:

Քեթրինն այլևս անկարող էր թռչել: Անծրևից նրա թևերը խոնավացել էին ու ծանրացել, և եթե մի քիչ էլ օդում մնար, ապա կամ ինքը վայր կընկներ, կամ կաթիլը նրան կտաներ: Նա մի կերպ իջավ ցած՝ հույս ունենալով, որ կգտնի Լեոյին:



Իսկ անծրևն այնքան էր ուժեղացել, որ ջուրը կուտակվել էր գետնին: Փոքրիկ թիթեռնիկի համար դա իսկակա՛ն, մե՛ծ ջրհեղեղ էր:

– Լե՛ո, որտե՞ղ ես, Լե՛ո, – լացակումած և հուսալքված կանչում էր Քեթրինը, բայց անօգուտ էր:

Տեսնելով, որ այլևս անկարող է շարունակել, նա թռավ մի տերևի տակ, ամուր բռնեց ցողունից ու սպասեց մի քիչ, որ անծրևը թեթևանա, որպեսզի շարունակի որոնումները: Սակայն ուժեղ քամի փչեց, որը պոկեց Քեթրինին իր ցողունից ու քշեց հեռու:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

*Որտեղ Լեոն ծանոթանում է անծրևաորդի դժբախտ ճակատագրին*

Երկար տեղաց անծրևը: Երկնքում ամպերի դղրոյուն էր: Մերթ ընդ մերթ կայծակ էր փայլատակում: Դաշտը լցվել էր ջրով, ու թրջվել էր ամեն ինչ: Քամին շարժում էր բարձր խոտը: Մութն աստիճանաբար ընկնում էր:

Անծրևը մեղմացավ միայն ուշ գիշերը:

Որտե՞ղ էր Լեոն, ո՞րջ էր, թե՞ ոչ՝ հայտնի չէր: Ջուրը նրան շատ ցած էր տարել՝ դեպի խոտածածկ ու ջրի մեջ թաթախված գետին:

Բացվեց առավոտը: Խոտի վրա, արևի լույսի տակ, դեռ շողում էր անծրևացողը: Հորդառատ անձրևից հետո դաշտը վերջապես հանդարտվել էր, լցվել անուշահոտությամբ: Շատ բույսեր, լավ սնվելով անծրևաջրից ու թաց հողից, ավելի վեր էին սլացել, և դաշտը պատվել էր կանաչ սաղարթով:

Ներքևում, բարձր խոտերի տակ, գետնին ընկած էր Լեոն: Բարեբախտաբար, երբ նա վայր էր ընկել, ջուրը նրան տարել էր մի մեծ տերևի տակ, և կաթիլները չէին հարվածել նրան, այլապես Լեոն էլ չէր լինի: Ջատիկը ողջ էր, սակայն ուշագնաց ընկած էր գետնին:

Հանկարծ գետինը Լեոյի տակ սկսեց շարժվել, բարձրանալ: Այդ շարժումից Լեոն ուշքի եկավ: Նա դեռ գլխի չէր ընկնում, թե որտեղ է, ինչ է իր հետ կատարվում և վախեցավ, երբ զգաց, որ ինչ-որ բան իրեն վեր է հանում:

– Վայ, վայ, թողե՛ք, – վախեցած ասաց Լեոն:

Նա զգաց, որ իր տակի հողը վերև է բարձրանում, և գետնին թումբ է գոյանում: Մեկ էլ հողի միջից դուրս եկավ մի մեծ անձրևաորդ, իսկ Լեոն մնաց նրա մեջքին: Ջատիկը փորձեց վեր թռչել, սակայն ուժասպառ էր, ու թևերն էլ թաց էին: Նա բացականչեց.

– Հե՛յ, սպասե՛ք ցած իջնեմ:

– Այդ ո՞վ է մեջքիս, – հարցրեց մի ալարկոտ, հանդարտ ձայն:

– Այդ ե՛ս եմ Ձեր մեջքին ու խնդրում եմ, որ կանգ առնեք, որպեսզի իջնեմ:

– Կանգ չեմ առնի, քանի որ այն օրվանից, ինչ հազիվ եմ փրկվել՝ էլ կանգ չեմ առնում հողի մակերես դուրս գալուց հետո:

– Փրկվե՞լ, ինչի՞ց եք փրկվել, – հետաքրքրվեց Լեոն:

– Մարդկանցից, – ասաց անձրևաորդը:

– Մարդկանցի՞ց, – զարմացավ Լեոն:

Նա երկրորդ անգամ էր լսում այդ բառը: Առաջին անգամ մարդկանց մասին խոսեց Քեթրինը: «Ի դեպ, որտե՞ղ է նա», – անհանգստացած, շուրջբոլորը նայելով, մտածեց Լեոն:

– Պարոն, – համբերությունը հատած ասաց Լեոն, – երեկ ես անձրևի տակ եմ մնացել, ընկել գետնին ու հրաշքով ողջ եմ մնացել, սակայն կորցրել եմ իմ բարեկամուհուն, չգիտեմ, թե որտեղ է նա, չգիտեմ՝ որտեղ եմ ես, չգիտեմ, թե ինչու եք այդպես շտապում, չգիտեմ, թե ուր եք գնում և այսքանից հետո՝ չգիտեմ, թե ինչպես համոզեմ Ձեզ, որ վերջապես կանգ առնեք, որ իջնեմ:

– Չէ՛, ճստիկ, վախենում եմ երկար մնալ հողի վրա և դրա համար եմ շտապում:

– Լավ, ինչի՞ց եք փրկվել, Ղուք չասացիք, թե ինչի՞ց եք փրկվել, միգուցե խոսե՞ք հետս, կիսվե՞ք, այդ ի՞նչ մարդկանց մասին եք խոսում, ումի՞ց, ինչի՞ց եք փրկվել:

– Վախճանից եմ փրկվել, – սկսեց պատմել անձրևաորդը: – Ես առաջ ապրում էի մի տեղ, ուր հողի վերին շերտը շատ կարծր էր, երկաթի պես: Այդ շերտը կոչվում էր ասֆալտ:

– Ասֆա՞լտ, – հարցրեց Լեոն, – ինչ տարօրինակ անուն է, ի՞նչ է դա:

– Ղա մարդիկ են սարքում գետնի վրա: Նրանք ասֆալտապատում են հողի շերտը, որպեսզի հանգիստ ու մաքուր քայլեն և անվտանգ ու հարմարավետ վարեն իրենց մեքենաները:

Լեոն լսում էր՝ աչքերը լայն բացած: Ինչքա՞ն բան չգիտեր: «Մարդիկ», «ասֆալտ», «մեքենաներ» բառերն այնքան նոր, անծանոթ էին իր համար, որ մի պահ իրեն թվաց, թե անձրևաորդը ուրիշ մոլորակից է:

– Մենք շատ էինք, – տխուր շարունակեց որդը, – հողի շերտը տեղատարափ անձրևից թրջվել էր, ու թաց հողում թթվածին չկար: Այդ պատճառով, ինչպես միշտ դուրս էինք

եկել հողից՝ մի կերպ ծակելով ասֆալտը կամ ճեղք գտնելով նրա միջից: Եվ ի՞նչ կատարվեց...

– Ի՞նչ, – զարմացած ու ապշած հարցրեց Լեոն:

– Մարդիկ քայլում էին ասֆալտի վրա ու այդպես քայլելով՝ տրորում-անցնում էին իմ եղբայրներին ու քույրերին: Նրանց համար մենք աննշան որդեր էինք: Նրանք չեն էլ պատկերացնում, թե ինչքան կարևոր ենք մենք: Լսի՞ր, Ճաստի՛կ, մենք հողում անցքեր ենք փորում, փխրեցնում ենք այն, և այդպիսով օդն ու ջուրը թափանցում են հողի մեջ: Իսկ դու գիտես, որ օդն ու ջուրը, բնականաբար, անհրաժեշտ են բոլոր բույսերի զարգացման համար: Մեր արտադրած յուրօրինակ լորձը սոսնձում է հողի մասնիկները, նույնիսկ՝ ամենափոքրերը և դրանով խոչընդոտում հողի փոշիացմանն ու լվացմանը: Բուսական մնացորդները քաշելով հողի մեջ՝ մենք նպաստում ենք նրանց քայքայմանը, ինչի հետևանքով առաջանում է բերքատու հողի շերտը: Այնպես որ, մեզ պետք է խնամքով պահպանել, քանի որ մենք շատ օգտակար կենդանիներ ենք: Սակայն՝ եղավ հակառակը, մարդիկ քայլում էին ու անխնա տրորում իմ ցեղակիցներին: Ոմանք՝ պատահաբար, իսկ նրանցից ոմանք էլ՝ դիտավորյալ:

Լեոն ուշադիր և նաև զարհուրած լսում էր: Նախ, նա իմացավ, թե որքան կարևոր են անձրևաորդերը հողագոյացման հարցում, ինչքան մեծ դեր ունեն նրանք բնության մեջ, իսկ հետո էլ նրան սարսափելի հետաքրքրեցին մարդ կոչված այդ արարածները, ում մասին այդպես մանրամասն պատմում էր անձրևաորդը: Լեոն լսում էր ու մտածում, թե տեսնես ովքե՞ր են այդ մարդիկ, որ այդքան մեծ ու ահավոր են:

– Աչքի՛ս առաջ, – շարունակեց անձրևաորդը, – ոչնչացավ մեր ամբողջ գերդաստանը: Ես հազիվ փրկվեցի: Բախտի

բերմամբ՝ ինձ չտրորեցին: Գիտես, երբ հայտնվում ես ասֆալտապատ ճանապարհին, ուր բազմաթիվ մարդիկ գնում ու գալիս են, ապա շատ մեծ է հավանականությունը, որ քեզ կտրորեն, և իսկապես հրաշք էր, որ ես ողջ մնացի: Ես, փաստորեն, հրաշքով փրկվեցի ու այդ օրվանից որոշեցի տեղափոխվել դաշտ: Այստեղ ո՛չ մարդիկ կան, ո՛չ ասֆալտ, ո՛չ էլ մեքենաների անիվներից՝ հողի դղրոյուն:

Լեոն լսեց, լսեց ու բարձրաձայն մտածեց.

– Այ, երբ ես մեծ բզեզ դառնամ՝ մարդիկ չեն համարձակվի ինձ ձեռք տալ:

– Գիտես, կան և լավ մարդիկ, – չլսելով Լեոյի խոսքերը՝ շարունակեց անձրևաորդը: – Նրանց մեջ պատահում են անցորդներ, ովքեր ուշադիր են քայլում ու չեն սպանում քեզ:

– Անձրևաորդ քեռի, – արդեն համակրանքով ու հարգանքով լցվելով դառը անցյալ ունեցած անձրևաորդի հանդեպ՝ դիմեց նրան Լեոն, – իսկ Դուք չե՞ք ասի, թե որտեղ է բացատը:

– Բացա՞տը:

– Այո՛, այո՛, բացատը, ես այնտեղ պիտի գտնեմ մեկին:

– Ցավոք, ես չգիտեմ, փոքրի՛կս, – ասաց որդը, – ես աշխատում եմ շատ չհեռանալ իմ դուրս եկած վայրից: Բայց, այ, եթե դու ճանապարհո՞ շարունակես այս եռատերևուկների ուղղությամբ, կարծում եմ, որ կհասնես բացատ: Իսկ ես այստեղ նորից պիտի հողի մեջ մտնեմ, սա քո վերջին կանգառն է:

– Շնորհակալություն, Անձրևաորդ քեռի: Մի՛ տխրեք շատ, ամեն ինչ լավ կլինի, այ՛ կտեսնեք, Դուք դեռ նոր ազգականներ կունենաք, – ասաց Լեոն, իջավ որդի վրայից, որն արդեն հետ էր մտնում հողի մեջ, և որովհետև իր թևերը դեռ բավականաչափ չոր չէին, քայլելով շարունակեց ճանապարհը:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

*Որտեղ Լեոն հայտնվում է ստորգետնյա դատարանում*

Արևն արդեն նորից շողում էր երկնքում: Ցողերը գոլորշիացել էին, խոտի կանաչը պսպղում էր լույսի տակ, ծաղիկներն, ասես, փթթել էին՝ դեպ իրենց գրավելով հազարավոր միջատների: Նրանց միջոցով ծաղիկները փոշոտվում էին ու բազմանում:

Լեոն հիացած նայում էր ճանապարհին աճող ամեն խոտի ու ծաղկի: Նա երբեք այսպիսի վայրերում չէր եղել: Ի՞նչ զարմանահրաշ, գեղեցիկ էր բնությունը, որքա՞ն գունեղ էր շուրջբոլորը և գվարթ: Մերթ ընդ մերթ Լեոյի կողքով արագ անցնում էին մանր-մունր բլոճներ, թռչում էին մլակներ, իսկ մի թփի վրա Լեոն նկատեց մի քանի փոքր խխունջների, որոնք դանդաղ շարժվում էին ճյուղի վրա: Շուրջը տիրում էր մի հրաշալի ու հիացնող խաղաղություն:

– Բռնի՛ր դրան, – հանկարծ լսվեց Լեոյի հետևից:

Հազիվ էր նա հասցրել շուռ գալ, երբ ինչ-որ անծանոթ, արտաքուստ իր համար արտասովոր մի քանի կենդանի հասան Լեոյի վրա, գրկեցին նրան ու արագ սկսեցին տանել ինչ-որ ուղղությամբ:

– Բա՛ց թողեք, ինձ, խնդրում եմ, բա՛ց թողեք, – գոչեց Լեոն:

– Դու խախտել ես մեր թագավորության սահմաններն ու պիտի պատժվե՛ս, – ասացին առևանգիչները, որոնք ամուր բռնել էին Լեոյին և շարունակ շտապում էին:

– Թողե՛ք ինձ, ի՞նչ թագավորություն, ես ոչ մի սահման չգիտեի ու չեմ խախտել: Ո՞ր եք ինձ տանում, բա՛ց թողեք:

– Լռի՛ր, օրինախախտ,– բացականչեց նրանցից մեկը,– քո նմանները պետք է իրենց պատիժը կրեն ստորգետնյա կալանավայրում:

Բանն այն է, որ Լեոյին բռնել էին մի քանի աշխատավոր մրջյուններ, որոնք ջանադրաբար աշխատում էին այդ տարածքում և նաև հսկում դեպի մրջնանոց տանող ճանապարհը՝ պահպանելով այն անժանոթ եկվորներից ու բոլոր տեսակի թշնամիներից:

– Ես վատ բան չէի ուզում,– ասում էր Լեոն:– Թողե՛ք ինձ: Էլ չեմ անի, թեև չգիտեմ, թե ինչ եմ արել:

– Արե՛լ ես, արե՛լ,– գայրացած ասաց մյուս մրջյունը,– շատ հանցանք ես գործել: Ո՞վ կուրեց մրջնանոցի պատուհաններից մեկը:

– Ո՞վ խաբեց մորաքրոջս տղային ու ձեռքից առավ պաղպաղակը,– ասաց երկրորդը:

– Ի՞նչ, ի՞նչ,– շփոթահար բացականչեց Լեոն:– Ի՞նչ մորաքրոջ տղա, ի՞նչ պաղպաղակ, ի՞նչ եք ասում:

– Ո՞վ մատնեց անտառային մրջյուններին, թե որտեղ է գտնվում մեր մրջնանոցը,– գայրացած ասաց երրորդը:

– Ո՞վ խժռեց պահեստի բոլոր տերևները,– ասաց մյուսը:– Գո՛ղ ես, գո՛ղ, ե՛ս եմ տեսել, իսկական գո՛ղ ես:

– Մի՞թե դու չէիր, որ փայտի կտորով խփել էիր մեր Դանդալոչ Հուգի գլխին: Դո՛ւ էիր, դե հիմա արժանի պատիժ կստանաս:

Լեոն չգիտեր ինչպես պաշտպանվել բոլոր այդ անհիմն մեղադրանքներից: Նա գաղափար անգամ չուներ, թե ինչի մասին է խոսքը, ո՞վ էր Դանդաշոլ Հուգը, ի՞նչ գողություն, ի՞նչ մորաքրոջ տղա: Հասկանալով, որ մրջյուններն հենց ճանապարհին փորձում են միտումնավոր կերպով

մեծացնել ու թանձրացնել իր թվացյալ հանցանքը՝ Լեոն շփոթված բացականչեց:

– Դե, վերջ տվեք, թողե՛ք ինձ, երևի ինձ ուրիշի տեղն եք դրել:

– Դատարանը կորոշի, թե քեզ ում տեղն ենք դրել,– հաղթանակողի հրճվանքով ասաց մրջյուններից մեկը:

Հասնելով մեծ մրջնանոցին՝ մրջյունները կանգ առան ներս տանող անցքերից մեկի առաջ, իհարկե՝ Լեոյին բաց չթողնելով:

– Ո՞ւմ եք բերել,–լուրջ, խիստ ձայնով հարցրեց պահակ մրջյուններից մեկը:

– Հանցագործի՛,–խրոխտ ձայնով ասաց առևանգիչներից մեկը: – Մենք հազիվ բռնեցինք նրան, դիմադրում էր:

Լեոն զարմացած, նաև՝ զավեշտով, նայում էր մրջյուններին:

– Դուք, հավանաբար, խենթացել եք: Լսե՛ք, ես հանցագործ չեմ,–կրկնեց նա:

– Էս աղջիկները, երևի, էլի ուրիշի են բերել,–մյուս պահակի ականջին շնչաց առաջին պահակ մրջյունը՝ գլխով ցույց տալով Լեոյին բերած մրջյուններին:

Ուրեմն սրանք աղջիկներ են,–մտածեց Լեոն:–Ա՛յ, քեզ աղջիկներ: Այսպես էլ մարտական աղջիկներ՞ը կլինեն, սրանցից ի՞նչ աղջիկներ: Լեոն վերջապես գլխի ընկավ, իհարկե, որ իրեն բռնած մրջյուններն աշխատավոր մրջյուններ են, իսկ մրջյունների աշխարհում աշխատավոր բոլոր մրջյուններն էգեր են: Նրանք կատարում են մրջնանոցի ողջ աշխատանքը՝ կառուցում են մրջնանոցը, պաշտպանում, ապրելու համար կեր կուտակում, սննդարար խյուսով կերակրում որդանման թրթուրներին, որոնք հետագայում



կերպարանափոխվում են ձվեր հիշեցնող հարսնյակների:

– Դե, ներս մտեք,– քմծիծաղով ասաց պահակներից մեկը:

– Տարանք սրան,– գոչեց աղջիկներից մեկը, և Լեոյին մտցրեցին մրջնանոցի անցքից ներս՝ դեպի մուօ ու խորհրդավոր թագավորությունը:

Ո՞վ գիտի, թե քանի՜ հոգու էին շփոթմունքով այս անձնվեր աղջիկ պահապանները բռնել ու մրջնանոց բերել: Միննույն ժամանակ, հակառակվելը կամ պայքարելն այլևս անօգուտ էր, որովհետև մրջյուններն իրենց բերանով ու ոտքերով ամուր բռնել էին զատիկին:

Թունելը գնալով մթնեց ու շուտով կատարյալ մթություն էր: Մրջյունները արագ հասցրեցին Լեոյին մի խաչմերուկ, որտեղից շատ արագ կողմնորոշվեցին, թե որ միջանցքով շարժվեն առաջ: Հետո էլի մի խաչմերուկ, էլի մի երկար ու մուօ թունել: Վերջապես, նրանք հայտվեցին մի մեծ, ստորգետնյա սրահում: Լեոն նկատեց, որ դա, ավելի շուտ, դահլիճի պես մի բան էր, որովհետև ամբողջ սրահը լցված էր մրջյուններով, որոնք ասես հանդիսականներ լինեին, իսկ կենտրոնում յուրահատուկ բեմահարթակ էր, որի վրա լուրջ դեմքերով նստած էին թևավոր՝ արու մրջյունները: Հավանաբար նրանք դատավորներ էին: Նրանցից մեկը, որի գլխին գլխարկ հիշեցնող ինչ-որ բան կար և որը, հավանաբար, գլխավոր դատավորն էր, ասաց.

– Բերեք այստեղ մեղադրյալին:

Մրջյուններն առաջ հրեցին ապշած Լեոյին:

– Մեղադրյա՞լ, ի՞նչ է մեղադրյալ,– գարմացած հարցրեց նա:

– Այդ դո՛ւ ես,– գայրացած ասաց դատավորը:

– Ներեցեք, պարո՛ն, ես ոչ մի մեղք չեմ գործել,–ասաց գատիկը:

– Հիմա կպարզենք,–ասաց գլխավոր արու մրջյունը:– Խնդրում եմ մեղադրող կողմին ներկայացնել գործի բոլոր մանրամասները:

Մոտեցավ լուրջ դեմքով մեկ այլ մրջյուն, նստեց իր սեղանի մոտ, բացեց ինչ-որ մատյան, մի քանի վայրկյան նայեց դրանում գրված տողերին, հետո վեր կացավ, մաքրեց կոկորդը ու սկսեց.

– Տիկնա՛յք և պարոնա՛յք, աշխարհին թող խաղաղություն լինի...

Բոլորը զարմացան, թե սա ի՞նչ է ասում:

Գլխավոր դատավորը շուռ եկավ իր կողքին նստած օգնականին ու հարցրեց.

– Ի՞նչ է պատահել մեղադրող կողմի փաստաբանի հետ:

– Պարո՛ն դատավոր,– շփոթված ասաց օգնականը,– երեկ նա ամբողջ օրը անցկացրել է խաղողի ողկույզի վրա. մի քիչ քեֆը լավ է:

– Պարո՛ն,– գայրացած ձայնով դիմեց դատավորը մեղադրող կողմին,– խնդրում եմ խոսեք գործի բուն էությունից:

– Ախ, այո՛, ներեցեք,– գկրտալով ասաց մրջյունը:– Հիմա՛, հիմա՛:

– Եվ հետո,– շարունակեց դատավորը,– բարի եղեք այսպիսի վիճակում այլևս չներկայանալ դատարանի դահլիճ:

– Այո՛, այո՛,– իրեն զգաստացնելով ասաց ակնհայտորեն թեթևակի օրորվող մրջյունը:– Եվ այսպես, տիկնա՛յք և պարոնա՛յք, այս միջատը խախտել է գրված ու չգրված բոլոր օրենքները:

– Ախր, ես...– փորձեց պաշտպանվել Լեոն:

– Լռություն դահլիճում,–ասաց դատավորը՝ մուրճով խփելով սեղանի հարթակին:

– Քաղաքացի մեղադրյալը,– շարունակեց մեղադրող կողմի մրջյունը,– կատարել է մի շարք գողություններ, խուլիգանական արարքներ, անգամ ահաբեկել է մի քանի մրջյունների՝ խաբելով, թե շուտով անձրև է գալու: Նա նաև ոտնձգություն է կատարել մեր սննդի պաշարների վրա, գողացել ու վաճառել ծմեռվա համար պահված մեր բոլոր սննդատեսակները:

Լեոն հասկացավ, որ ևս մի քանի վայրկյան ու նրան կմեղադրեն նաև եղանակային փոփոխությունների, տեղումներ կազմակերպելու, երաշտ իրագործելու և այլ անհեթեթ բաների մեջ:

– Ներեցեք, ախր ես մեղավոր չեմ,– բացականչեց Լեոն:

– Քաղաքացի մեղադրյալ, եթե մի անգամ էլ աղմկեք, ապա մենք Ձեզ կկալանավորենք,– միաձայն ասացին դատավոր մրջյունները:

– Աթոռին նստած այս հանցագործը կողոպտել, խաբել ու վիրավորել է մի քանի մրջյունների: Նա նաև հարբեցող է, նրան մշտապես նկատել են ոչ սթափ վիճակում,– շարունակեց իր տեղում հազիվ կանգնող մեղադրող կողմի մրջյունը:

Դահլիճում հավաքվածների շրջանակում բողոքի ու զայրույթի ալիք բարձրացավ: Բոլորը սկսեցին վանկարկել պատժի տեսակներ:

– Նա պիտի կրի իր արժանի պատիժը,– ասաց հարբած մրջյունը:

– Ո՞ր են վկաները,– հարցրեց դատավորը:

– Այստեղ են, Ձերդ մեծություն,– բացականչեցին դահլիճի մուտքի մոտ կանգնած դռնապանները և ներս հրավի-

րեցին մի քանի ահաբեկված մրջյունների, որոնք նախապես ցուցմունք էին տվել քննիչներին: Նրանք շարվեցին Լեոյի դիմաց ու, նայելով զատիկին, դահլիճում հաստատեցին, թե հենց նրան են տեսել՝ այս կամ այն հանցանքը կատարելիս:

– Ախր սա անհեթեթություն է, – բացականչեց Լեոն: – Այս մրջյուններին ես կյանքում չեմ տեսել, ոչ էլ նրանք են ինձ տեսել: Ինչի՞ն են վկայություն տալիս:

– Քաղաքացի մեղադրյալ, փորձեք զսպել Ձեզ, – ասաց դատավորը: – Ես հասկանում եմ Ձեզ, սակայն բոլոր փաստերը Ձեր դեմ են: Ի դեպ, հիմա, երբ Ձեր դեմ փաստերն արդեն այսքան շատ են, Ձեզ խոսքի լիարժեք իրավունք է տրվում, խոսե՛ք:

– Պարո՞ն դատավոր, – շփոթված ասաց Լեոն, – ես մեղավոր չեմ: Ես որևէ կապ չունեմ այն ամենի հետ, ինչում ինձ մեղադրում են:

Լեոն խոսում էր ու նաև մշտապես մտաբերում Քեթրինին: Նա շատ անհանգիստ էր թիթեռնիկի համար: Սակայն, ցավոք սրտի, հիմա այնպիսի մի պատմության մեջ էր ընկել, որ ոչ մի հնարավորություն չունեիր տեղեկանալու, թե ի՞նչ եղավ Քեթրինի հետ, որտե՞ղ է նա: Ջատիկը տխուր ու անկեղծ պատմեց դատավորին, որ իր միակ ցանկությունը մեծ բզեզ դառնալն է: Նա դրա համար է տանից դուրս եկել, լքել իր հայրենի տարածքը ու ճամփա ընկել՝ իր հարցի պատասխանը գտնելու նպատակով:

– Ահա՛, – բացականչեց մեղադրող կողմի մրջյունը, – խնդրում եմ գրանցեք ևս մեկ հանցանք. մեղադրյալը բարձրաձայն հայտարարեց իր կասկած հարուցող, վտանգավոր ու արտասովոր ցանկության մասին:

– Դե, լա՛վ, լա՛վ, – ասաց դատավորը, – մի չափա-

զանցրեք, առանց այդ էլ՝ այնքան մեղադրանք եք ներկայացրել, որ մեղադրյալին կարող է սպառնալ ցմահ բանտարկություն: Քաղաքացի մեղադրյալ, Ղուբ ընդունո՞ւմ եք Ձեր մեղքը:

– Ո՛չ, ես մեղավոր չեմ, ես պահանջում եմ դատապաշտպան: Ես իմ փաստաբանն եմ պահանջում,–խիզախություն առած՝ ասաց զատիկը:

– Դատապաշտպա՞ն,– զարմացած բացականչեցին նիստերի դահլիճում գտնվող բոլոր ներկաները: Միևնույն ժամանակ, նրանք հասկացան, որ, իսկապես, դատական նիստը լիարժեք անցկացնելու համար պետք է լինի նաև դատապաշտպան, որ ներկայացնի զատիկի շահերը: Չէ՞ որ գոյություն ունի «անմեղության կանխավարկած» հասկացությունը: Բոլորը սկսեցին մտածել, թե միգուցե զատիկն իսկապե՞ս անմեղ է:

– Այո՛, այո՛, դատապաշտպան բերեք, ես պահանջում եմ իմ անմեղությունը հաստատող մեկին, ով կապացուցի Ձեզ, որ ես մեղավոր չեմ: Ինձ Ղուբ չեք հավատում, զոնե նրան կհավատաք:

– Կանչե՛ք դատապաշտպանին,– ականհայտ դժգոհ ձայնով ասաց դատավորը:

Եկավ մեկ այլ մրջյուն: Բարեբախտաբար, նա հարբած չէր: Մոտենալով Լեոյին, նա միանգամից սկսեց.

– Իմ պաշտպանյալն անմեղ է:

Դահլիճում վրդովմունքի ալիքն ուժգնացավ: Ներկաները բարձրաձայն սկսեցին գոչել, թե դա այդպես չէ, անգամ սուլոցներ լսվեցին, մթնոլորտն ավելի թեժացավ:

– Լռություն դատարանի դահլիճում, լռություն,– մուրճով հերթական անգամ սեղանին հարվածելով՝ գոչեց դատավորը

և շարունակեց,– պարոն փաստաբան, իսկ Դուք ինչպե՞ս կարող եք ապացուցել մեղադրյալի թվացյալ անմեղությունը:

Ակնհայտ էր, որ դատավորը դժգոհ էր դատապաշտպանի ներկայությունից և դրա համար էր այդպիսի տոնով խոսում:

– Ե՞ս, ե՞ս, ինչպես կարող եմ ապացուցե՞լ,– կմկմաց փաստաբանը:– Չգիտեմ:

Լեոն հուսահատված ձեռքերի մեջ առավ գլուխը: Նա հասկացավ, որ եթե այսպես շարունակվի, ապա այս մրջյուններն իրեն կհասցնեն մինչև ստորգետնյա կալանավայր, որտեղից էլ երբեք չի վերադառնա, կամ էլ կենթարկեն մահապատժի:

– Լսե՛ք,– մի տեսակ դերասանական խաղի մեջ մտնելով՝ անսպասելի ասաց դատապաշտպանը: Նա իրեն սկսեց այնպես պահել՝ ասես բեմում լիներ:– Ինչո՞ւ դատել այս խեղճ արարածին, որին մեղադրում ենք հայտնի չէ, թե ինչքան հանցագործությունների մեջ: Մի նայե՛ք այս զատիկին, այս փոքրի՛կ, խե՛ղճ, հուսահա՛տ, շփոթվա՛ծ, անօգնակա՛ն զատիկին: Նայե՛ք նրան: Մի՞թե նա մեղավոր է:

Բոլորը, այդ թվում և՛ Լեոն սկսեցին զարմացած նայել փաստաբանին: Վերջինս այդպիսով ուզում էր ազդել ատենակալների զգացմունքների վրա, որպեսզի նրանք հուզվեն և այդպիսով կամ անմեղ ճանաչեն Լեոյին, կամ գոնե մեղմ պատիժ սահմանեն: Ավելին, հնարամիտ փաստաբանը մեկ այլ բան էլ տեղում մտահղացավ.

– Ես կարծում եմ, պարոն դատավոր, որ մենք պիտի մեղադրյալին ներկայացնենք Ձերդ Պայծառափայլությանը՝ Նորին Մեծություն Ադա թագուհուն:

Դահլիճում հիացական հոգոց լսվեց:

– Թագուհու՞ն, – հարցրեց դատավորը:

– Այո՛, Թագուհուն, – կրկնեց ինքն իրենից և իր առաջարկից շատ գոհ դատապաշտպանը: – Ովքե՞ր ենք մենք, որ որոշենք մեղադրյալի ճակատագիրը, եթե կա մեզանից ավելի բարձր աստյան: Չէ՞ որ ոչինչ այս մրջնանոցում չի որոշվում ու կատարվում առանց Թագուհու գիտության:

– Իհարկե, – ասաց դատավորը, – զգալով, որ դուրս էր եկել իր իրավասություններից՝ իրեն շատ ավելի կարևոր կարծելով, քան իրականում կա: Նա հասկացավ, որ ավելի լավ է համաձայնվի դատապաշտպանի առաջարկին, եթե չի ուզում կորցնել դատավորի իր պաշտոնը:

Նիստը տեղում ավարտվեց, հայտարարվեց փակված: Լեոյին հիմա էլ զոռով տարան մեկ այլ երկար միջանցքով:

## ԳՆՈՒՆ ՀԻՆՔԵՐՈՐԴ

*Որտեղ իմանում ենք, թե որքան բարի են թագուհիները*

Ճանապարհին Լեոն զգաց, որ դատարանի դահլիճն առաջին աստիճանն էր այս վիթխարի թագավորությունում: Նրան սպասում էին ավելի մեծ սրահներ:

Որքան մոտենում էին Թագուհու նստավայրին, այնքան ամեն բան ավելի պաշտոնական ու բարձրադաս էր թվում: Ճանապարհին կանգնած էին զինված ու մարզված արու մրջյուններ և այսպես կոչված «զինվորներ»՝ խոշոր և ուժեղ ծնոտներ ունեցող մրջյուններ, որոնք նույնպես զբաղված են մրջնանոցի պաշտպանությամբ: Նրանք միջանցքի պահապաններն էին ու խիստ հայացքներով հետևում էին Լեոյին և նրան ուղեկցող պահակախմբի անդամներին: Այնուհետև

հայտնվեց Թագուհու թիկնազորը, հետո ևս մի թիկնազոր անցավ միջանցքով:

Երկար գնալուց հետո Լեոյի առջև բացվեց հիասքանչ, ընդարձակ մի սրահ՝ բարձր առաստաղով, գեղեցիկ կամարներով, շքեղ կահույքով, որը պատրաստված էր չոր, գունեղ տերևներից, ծղոտներից: Պատերին կախված էին մանր, գույնզգույն քարերից պատրաստված գեղեցիկ նկարներ: Շքեղ այդ սրահի վերջում բեմահարթակի պես մի բան էր, որի վրա դրված էր լայն մի բազմոց: Եվ ահա, այդ բազմոցի վրա նստած էր ինքը՝ Թագուհին:

Լեոյին մոտեցրին Մայր մրջյունին: Մյուս մրջյունները խոնարհվեցին Թագուհու առջև ու Լեոյին էլ նշան արեցին, որ խոնարհվի: Ջատիկն էլ խոնարհվեց: Երբ նա բարձրացրեց գլուխը, սկսեց ուշադիր գննել գեղեցկուհի Մայր մրջյունին: Նրա բարեկազմ մարմինը ընդգծում էր երկար իրանը, իսկ ահա իզական արտահայտիչ կոնքերը վկայում էին այն մասին, թե քանի՛-քանի՛ սերունդ է լույս աշխարհ բերել Թագուհին՝ համալրելով վիթխարի մրջնանոցի շարքերը: Նա տիրուհի էր, մրջնանոցի միանձնյա տիրուհին: Նրա բազմոցի կողքին բազմաթիվ ձվեր կային, որոնք ածել էր ինքը, և այդ ձվերից պիտի դուրս գային տասնյակ նոր թրթուրներ:

– Լսում եմ, – վեհ ձայնով ասաց Թագուհին:

– Ձերդ Մեծություն, այս զատիկը հանցանք է գործել, մե՞ծ հանցանք, – ասացին մրջյունները:

– Ի՞նչ է արել, – հարցրեց Թագուհին:

Մրջյուններից մեկը ներկայացրեց Լեոյի կողմից իբր կատարված հանցագործությունների մի ամբողջ ցուցակ:

– Ձերդ Մեծություն, – կամաց ձայնով ասաց Լեոն, – ամենայն հարգանք տածելով Ձեր հանդեպ, թույլ տվեք ասել, որ



ես անմեղ եմ, ինձ անհիմն են մեղադրում, ես հանցագործ չեմ:

– Դու հասկանո՞ւմ ես, որ եթե քեզ մեղավոր ճանաչեմ, ապա կան քեզ կզլխատեն, կան կկալանավորեն մեր ամենախորը փորված բերդում: Այնպես որ, մի՛ ստիր, ազնի՛վ եղիր:

– Ձերդ Մեծություն, ես ազնվությամբ եմ ասում, չեմ ստում: Ես ոչ մի հանցագործություն չեմ կատարել մրջյունների ու մրջնանոցի հանդեպ, միշտ հիացել եմ մրջյունների ժրաջան աշխատանքով: Ինձ ճանաչողները կվկայեն, որ երբևէ հանցագործություն չեմ կատարել և թյուրիմացաբար եմ հայտնվել այստեղ: Բանն այն է, որ ես երազում եմ մեծ բզեզ դառնալ, և իմ երազանքն իրականցնելու ճանապարհին պատահաբար հայտնվել եմ ձեր մրջնանոցում: Խնդրում եմ, հավատացեք ինձ:

– Դառնալ մեծ բզե՞զ, երազա՞նք, ես էլ ժամանակին մեծ երազանք ունեի,– անսպասելիորեն անկեղծանալով՝ բարի ձայնով ասաց Թագուհին:– Երբ փոքր էի, շատ էի ուզում թիթեռ դառնալ, թիթեռների պես գույնզգույն թևեր ունենալ ու ճախրել արևի լույսի տակ՝ ծաղկից ծաղիկ իջնելով: Ժամանակին ես մի թիթեռ ընկերուհի ունեի, շատ գեղեցիկ մի կապտաթիթեռ էր: Ցավոք, երկար ժամանակ է, ինչ նրան չեմ հանդիպել ու լուր չունեմ, թե ինչպես է:

– Կապտաթիթե՞ռ,– զարմացած հարցրեց Լեոն:

– Այո,– հետաքրքրված հաստատեց Թագուհին,– Քեթրին էր նրա անունը:

– Քեթրի՞ն, դա Քեթրի՞նն է,– ուրախացած բացականչեց Լեոն:– Ձերդ Մեծություն, Քեթրինը Ձեր ընկերուհի՞ն է:

– Այո և ես միշտ հիացել եմ թիթեռի իր գեղեցկությամբ ու թեթևությամբ: Իսկ դու ճանաչո՞ւմ ես Քեթրինին:

– Դե, իհարկե, սակայն, ցավոք, նրանից տեղեկություն չունենմ ու շատ անհանգիստ եմ նրա համար:

Եվ Լեոն, ամենայն մանրամասնությամբ, պատմեց Թագուհուն, թե ինչպես է հանդիպել Քեթրինին, պատմեց չար խաչասարդի ու սարդոստայնի մասին, պատմեց հորդառատ անձրևի ու Քեթրինի անհետ կորչելու մասին, Անձրևաորդ քեռու մասին էլ չմոռացավ պատմել: Պատմեց, նաև Դադոյի մասին, ում պիտի գտներ:

– Ի՞նչ դժբախտություն է պատահել իմ սիրելի ընկերուհու հետ: Մանկության ընկերուհիս կորել է, և հիմա հայտնի չէ, թե ուր է: Ի՞նչ դժբախտություն: Ապրեն, որ ազատել ես նրան սարդոստայնից ու չես թողել սարդի ճիրաններում: Ես համոզված եմ, որ նման հերոսական արարքին ընդունակ մեկը չի կարող հանցագործ լինել, – ասաց Թագուհին:

Եվ իսկապես, հենց այն ժամանակ, երբ Թագուհին ի լուր սրահում գտնվող բոլոր մրջյունների, հայտարարեց, թե Լեոն անմեղ է, նրան մոտեցավ մի սուրհանդակ մրջյուն ու հայտնեց, որ մրջնանոցի ոստիկանությունը, երկար որոնումներից հետո, կես ժամ առաջ վերջապես բռնել է իսկական հանցագործին, որը զատիկ Լեոյին արտաքին նախշերով շատ նման ուրիշ բզեզ է: Բոլորն ուրախացան, որ բռնել են իսկական հանցագործին: Որքա՞ն մեծ էր Լեոյի ուրախությունը. բոլորը վերջապես հասկացան ու հավատացին, որ նա անմեղ է:

– Ջատիկ, – ասաց Թագուհին, – վտանգելով քեզ՝ դու փրկել ես ուրիշի կյանքը: Դա հրաշալի արարք է: Ես հրամայում եմ, որ քեզ ազատ արձակեն և, բացի այդ, տրամադրում եմ քեզ հազար մրջյուն, որպեսզի օգնեն քեզ՝ Քեթրինին գտնելու հարցում: Եվս երեք հազար մրջյուն ուղարկում եմ մրջնանոցի հյուսիսային հատվածը, հինգ

հազար մրջյուն էլ թող ուղևորվեն մրջնանոցից արևելք: Բոլորը թող փնտրեն Քեթրինին:

– Շնորհակալ եմ, բարի՛ Թագուհի, – երախտագիտությամբ ասաց Լեոն և մի խումբ մրջյունների հետ դուրս եկավ սրահից:

## ԳՆՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

*Որտեղ որոնումները տալիս են իրենց արդյունքը*

Մրջնանոցից դուրս գալուց հետո, Լեոն և հազարավոր մրջյուններ սկսեցին փնտրել Քեթրինին: Մրջյուններն արագորեն շրջում էին գետնի վրա, իսկ Լեոն մերթ ընդ մերթ թռչում էր վեր, որպեսզի վերևից տեսնի, թե որտեղ կարող է լինել Քեթրինը:

– Քեթրի՛ն, որտե՞ղ ես, Քեթրի՛ն, – կանչում էր Լեոն:

Երկար որոնեցին: Ճանապարհին Լեոն զրույցի բռնվեց մի քանի մրջյունների հետ: Նրանք շատ բան պատմեցին գատիկին իրենց մրջնանոցի մասին: Գտնվելով մրջնանոցում՝ Լեոն շատ բան տեսավ ու հասկացավ: Տեսավ, թե ինչպես են աշխատում մրջյունները, ինչպես են խնամում իրենց սերնդին, նկատեց նրանց մոտ մի հետաքրքիր առանձնահատկություն. երբ հանդիպում են կուշտ ու քաղցած մրջյունները, ապա իրենց նուրբ բեղիկներով կարելի է ասել՝ զրույցի են բռնվում իրար հետ: Նրանք այդպիսով ազդանշաններ են հաղորդում միմյանց: Բացի այդ, կուշտ մրջյունը սննդարար կաթիլ է փսխում, իսկ սոված մրջյունն այն հաճույքով լիզում է: Ստացվում է այնպես, որ ամբողջ մրջնանոցը մշտապես ու հավասար չափով ապահովված է լինում սննդով: Իրեն ուղեկցող այդ մրջյուններից նա իմացավ, որ մրջյունների որոշ

տեսակներ անչափ օգտակար են ու մեծ դեր ունեն բնության մեջ: Եվ իսկապես, դուք էլ կհամաձայնեք, որ մրջյունները մարդու մեծ բարեկամներն են. նրանք, օրինակ, բառիս բուն իմաստով, փրկում են անտառը: Ժրաջան մրջյունները վնասատու միջատների հարյուր հազարավոր թրթուրներ են տանում դեպի մրջնանոց՝ այդպիսով մաքրելով անտառը բոլոր տեսակի վնասատուներից: Ահա թե ինչու բոլոր այն վայրերում, որտեղ վեր են խոյանում փոքր աշտարակներ հիշեցնող մրջնանոցները, շուրջբոլորը մաքուր է:

Որոնումները շարունակվում էին: Լեոն ու մյուսներն արդեն հույսը կորցրել էին, մրջյուններից մի քանիսն էլ արդեն ուզում էին հետ վերադառնալ, երբ նրանցից մեկը խոտերի միջից բացականչեց.

– Գտա՛, այստե՛ղ է, եկե՛ք, գտա՛:

Բոլորը շտապեցին այդ մրջյունի ուղղությամբ, որը կանգնել էր Քեթրինի մոտ: Թիթեռն անգիտակից ընկած էր խոտերի մեջ: Մի ամբողջ օր նա այդպես մնացել էր գետնին:

Լեոն շտապ մոտեցավ:

– Քեթրի՛ն, Քեթրի՛ն, – ասում էր նա թիթեռնիկին: Վերջինիս ուսերը թափ տալուց հետո, ուժասպառ թիթեռնիկը կամաց-կամաց ուշքի եկավ:

– Լեո, – կամաց ասաց Քեթրինը, – դու ո՛ղջ ես:

– Ո՛ղջ եմ, ո՛ղջ, իմ անուշ քույրիկ, կարևորը, որ դու էլ ես ողջ:

– Որքա՛ն անհանգիստ էի քեզ համար: Երկար ժամանակ է, ինչ փնտրում ենք քեզ: Ի՛նչ լավ է, որ գտանք, – ուրախացած բացականչում էր Լեոն: Նա դարձավ դեպի մրջյունները ու խորին շնորհակալություն հայտնեց նրանց՝ օգնության համար և խնդրեց նաև իր երախտագիությունը հայտնել Թագուհուն:

Մրջյունները կազմեցին շարասյուններ ու մի մրջյունի պես գնացին հետ՝ դեպի մրջնանոց:

– Արի՛, Քեթրին, ես քեզ կօգնեմ վեր կենալ, – ասաց Լեոն և գրկեց Քեթրինին: Ջատիկը տերևներ փռեց Քեթրինի համար, որպեսզի նա վեր կենա խոնավ հողի վրայից ու հարմար տեղավորվի փափուկ տերևների անկողնում, այնուհետև թռավ ու ծաղկափոշի բերեց, որպեսզի Քեթրինը սնվի, վերականգնի ուժերն ու կազդուրվի:

Երեկոյան զատիկը պատմեց այն ամենի մասին, ինչ իր հետ պատահեց թիթեռնիկին կորցնելուց հետո: Քեթրինը շատ ուրախացավ՝ լսելով Ադա թագուհու մասին: Նա էլ երկար ժամանակ չէր տեսել իր մտերիմ ընկերուհուն: Ուրախացավ, երբ իմացավ, որ Ադայի գործերը լավ են, ու նա չի մոռացել իրենց երբեմնի ընկերությունը:

Նրանք երկար զրուցեցին, իսկ երբ մութն ընկավ, մուշ-մուշ քնեցին տերևների մեջ, որպեսզի առավոտյան ճամփա ընկնեն:

## **ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ**

*Որտեղ Քեթրինը վերադառնում է հայրենի բացատ*

Դուք, իհարկե, հիշում եք, որ Քեթրինն ասել էր, թե գիտի բացատի տեղը: Եվ, իսկապես, առավոտյան նրանք ուղևորվեցին բացատի ուղղությամբ ու կարճ ժամանակ անց հայտնվեցին կանաչով ծածկված մի գեղեցիկ, գողտրիկ անկյունում, որը հենց այդ բացատն էր: Այստեղ ամեն բան հրաշալի էր՝ խոտը կանաչ էր ու թարմ, շուրջբոլորը գույնզգույն ծաղիկներ էին, օդն էլ անուշաբույր էր, արբեցնող:

Բացատը շրջապատված էր փոքր ծառերով ու թփերով, իսկ ավելի հեռվում մի խումբ մեծ ծառեր էին: Ամբողջ բացատը մի կախարդական, փոքրիկ աշխարհ էր հիշեցնում, որտեղ կարելի էր հանդիպել ամենատարբեր միջատների: Առաջին հայացքից նրանց նկատելը դժվար էր, սակայն բավական էր զննել ուշադիր աչքով ու կտեսնեիր բոլորին՝ թե՛ ծաղկից ծաղիկ թռչող մեղուներին ու փոքրիկ թիթեռներին, թե՛ գետնին անվերջ շտապող բլոճներին, որդերին, գետնահոր միջատներին: Քանի որ ոչ շատ հեռվում մի փոքրիկ բնական ջրամբար կար, փոքրիկ մի լճակ, ապա բացատում մերթ ընդ մերթ նկատվում էին լճակից մի փոքր հեռացած ու բացատում թռչող գեղանի ճպուռներ, որոնք աննշան վտանգի դեպքում անգամ անմիջապես անհայտանում էին՝ իրենց չորս թևերով, ուղղաթիռի պես, արագ թռչելով ու հեռանալով: Բացատը մի այնպիսի վայր էր, ուր կարելի էր մշտապես մնալ ու էլ ուրիշ ոչ մի տեղ չգնալ: Կարելի էր հասկանալ այնտեղ ապրող բոլոր միջատներին, քանի որ բացատը նրանց համար իսկական դրախտ էր:

Լեոն շատ էր ուրախացել, նրանք երկուսով թռչում էին մի ցողունից մյուսը և հրճվում՝ ծաղիկների ու կանաչ խոտի մեջ:

Ինչպես ասացի, բացատում լի՞քը թիթեռներ կային, կապտաթիթեռներ՝ նույնպես, և Քեթրինը նրանց մեջ, վերջապես, գտավ իր ընկերոջը՝ Բերտրամին:

– Սիրելի՛ս, – գրկելով Քեթրինին՝ ասաց Բերտրամը, որն ավելի գունեղ և կապտաթույր թևեր ուներ, – ինչքա՛ն անհանգիստ էի քեզ համար, որքա՛ն եմ կարոտել: Որտե՞ղ էիր, սեր իմ, ես անդադար քեզ էի փնտրում և անհանգստությունից գլուխս կորցրել էի:

– Սիրելի՛ս, – ասաց Քեթրինը, – ես էլ եմ քեզ շատ կարո-

տել: Ինձ բռնել էր չար սարդը և նրա ճիրաններից Լեոն ինձ ազատեց: Ծանոթացի՛ր Բերտրամ, իմ փրկիչն է, Լե՛ոն:

– Շատ ուրախ եմ, Լեո, – ջերմորեն սեղմելով զատիկի ձեռքը՝ ասաց Բերտրամը: – Երախտապարտ եմ, որ փրկել եք իմ սիրելի, իմ միակ էակին, իմ կյանքի իմաստին:

– Ես ուրախ եմ, որ օգտակար եղա, – ասաց Լեոն:

Ձատիկը շատ ուրախացավ, որ Քեթրինը և Բերտրամը գտան իրար, ուրախ էր, որ զույգը վերամիավորվեց և կրկին շատ երջանիկ էր:

– Լեո, ինչո՞վ կարող եմ օգնել Ձեզ, – հարցրեց Բերտրամը:

– Սիրելի՛ս, նա Դադո անունով մի տղի է փնտրում, որն ապրում է այս բացատում:

– Այո, Բերտրամ, ինձ նրա մասին պատմել է ծերուկ խխունջը, – ասաց Լեոն:

– Դե, իհարկե՛, Դադո՛ն, ես գիտեմ նրա տեղը, այդ թմբիկը այստեղից քիչ հեռու է ապրում: Ես ցույց կտամ ճանապարհը: Ո՛րեմն Ձեզ մնացել է ուղիղ, առանց թեքվելու թռչել ևս մի քանի մետր ու Դուք կտեսնես մի թուփ, կիջնեք ներքև ու թփի տակ կգտնեք նրան:

– Շնորհակալ եմ, – ուրախացավ Լեոն և ջերմորեն հրաժեշտ տալով Քեթրինին ու Բերտրամին՝ երջանկություն մաղթեց նրանց և ուղևորվեց Բերտրամի ցույց տված ճանապարհով:

– Բարի ճանապարհի, Լեո, – կանչեցին Լեոյի հետևից երկու թիթեռները և թռան դեպի ծաղկաշատ բացատի մյուս կողմը: Նրանք ուրախացան, որ Լեոն վերջապես կգտնի իրեն այդքան հուզող հարցի պատասխանը:

Լեոն թռավ Դադոյի ուղղությամբ և կարճ ժամանակ անց իջավ այնտեղ, այն թփի մոտ, որտեղ պիտի լիներ տիզը:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

*Որտեղ իմանում ենք բացատում տեղի ունենալիք  
ճակատագրական դեպքերի մասին*

Այդ ընթացքում բացատի մյուս կողմում այլ դեպքեր էին ընթանում: Մշակվում էր մեծ մի գրոհի ծրագիր: Բացատի եզրին գտնվող ծառի բնին կառուցված կրետների բնի մեջ մեծ իրարանցում էր: Այստեղ բոլորը շտապում էին հավաքվել և տեղ զբաղեցնել՝ լսելու համար Գեներալ Կրետուս անունով իրենց կրետ հրամանատարի ելույթը, որը շատ չուշացավ, քանի որ Գերագույն հրամանատարը շուտով հայտնվեց բազմության առջև: Նրան շատ հեշտ էր ճանաչել, քանի որ չար հրամանատարի մի թևի ծայրը կտրված էր: Հավանաբար, նախկինում տեղի ունեցած ինչ-որ կռվի հետևանք էր դա:

– Իմ քա՛ջ մարտիկներ, – խրոխտ, հռետորական ձայնով դիմեց նա մյուս կրետներին: – Ժամն է եկել վճռորոշ: Մենք մեկ ամիս պատրաստվել ենք սրան, այս կարևոր քայլին: Ինչպես գիտեք, մեր թշնամիները՝ ընտանի, մեղրատու մեղուները, որոնց փեթակը մարդիկ տեղադրել են բացատի այն ծայրում, լցվել են ամբողջ տարածքում և հավաքում են ամբողջ ծաղկափոշին: Մենք պետք է վռնդենք նրանց բացատից: Սա մեր բացատն է, մենք ենք դրա տերը և եկվորներին պիտի ոչնչացնենք: Երեկոյան կհարձակվենք փեթակի վրա և կսպանենք բոլոր մեղուներին: Իմ քա՛ջ զինվորներ, սա մեր պատվի կռիվն է, մենք պիտի ապացուցենք, որ մենք ենք այստեղ տերը և ճանապարհին պիտի վերացնենք բոլոր թշնամիներին:

– Կեցցե՛ Գեներալը, – գոչեցին զինվորները: – Կեցցե՛ մեր



Կրեւստանը: Մենք բացատից դուրս կշարտենք մեղուներին: Փա՛ռք Պեներալ Կրեւստանին:

Բանն այն է, որ կրեւտները, մեղուների պես, նույնպես քաղցր շատ են սիրում ու չէին կարող հանդուրժել, որ բացատում ապրեն ու աշխատեն մեղրատու մեղուները: Կրեւտները ցանկանում էին տիրել ամբողջ բացատին՝ այդպիսով յուրացնելով բացատի ծաղիկներն ու դրանց ծաղկափոշին:

Իսկ ինչպիսի՞ն են սև ու ոսկեգույն զրահիկներ հագած այս մարտիկները: Նրանք բարեկազմ են, ճկուն ու գեղեցիկ, ունեն բարակ ու ամուր մեջք, սրածայր ու ամուր թևեր, իսկ փորիկի ծայրին էլ, ասես պինդ պատյանում, թաքնված է խայթը, որը կրեւտներին պարզապես ահեղ է դարձնում: Այն յուրաքանչյուր կրեւտի հպարտությունն է ու հուսալի գենքը: Կրեւտները մշտապես միասին են, հավաքական ուժերով նրանք հարձակվում են, պաշտպանվում, միասին թռչում ինչ-որ տեղ կամ բույն հյուսում: Ամբողջ ընթացքում՝ միասին: Նրանք մեծ զգոնությամբ պահպանում են իրենց հյուսած բույնը՝ Կրեւստանը: Եթե հանկարծ որևէ մեկը ունձգություն կատարի բնի հանդեպ, կամ ավելին՝ պատահաբար կամ էլ միտումնավոր քանդի կրեւտների հյուսած բույնը, ապա արկածախնդիր օտարականը պիտի շատ արագ փախչի, քանի որ տանտերերը ռազմաշունչ բզզոցով հարձակվում ու սկսում են խայթել: Ի դեպ, նրանք խայթում են ուր ասես, միայն թե խայթոցը հասնի իր նպատակին: Կրեւտների խայթի մոտ թունավոր գեղձեր կան, այդ իսկ պատճառով խայթած տեղը խիստ ուռչում է ու շատ ցավոտ է: Դե, իսկ մանր կենդանիները կրեւտի խայթոցից կարող են անգամ սատկել:

Թեև կրեւտները քաղցր սիրում են, նրանք, առհասարակ,

գիշատիչներ են ու իրենց թրթուրներին կերակրում են ծամծամած միջատներով:

Եվ ահա, ահարկու խայթով զինված այս միջատները բացատում ցանկանում էին իրենց ձեռքը վերցնել իշխանութունը:

Բացատի բնակիչները նրանց չէին սիրում: Ոչ ոք չէր ցանկանում գործ ունենալ կրետների հետ, նրանցից խուսափում էին, քանի որ վերջիններս շատ վտանգավոր են:

Վայրի ու կատաղած կրետների այդ մեծ խումբը երեկոյան պատրաստվում էր հարձակման: Իսկ բացատում այդ ժամանակ ամեն բան խաղաղ էր, ոչ մեկը չէր գուշակում սպասվելիք աղետի մասին:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոն վերջապես գտնում է Ղաղոյին*

Լեոն թռավ ու հասավ Բերտրամի ցույց տված թփի մոտ: Շուրջն աճում էին բազմատեսակ բույսեր, որոնցից մի քանիսն այնպիսի անուշ բույր ունեին, որ զատիկը հաճույքով շնչում էր դրանով լցված օդը: Եվ ահա, անուշաբույր այդ տարածքում նա շարունակում էր իր որոնումները, երբ խոտերի մեջ լսեց խշշոց:

– Հե՛յ, Ղաղո, այդ Դո՞ւք եք, – հարցրեց զատիկը:

– Ո՞վ է ինձ փնտրում, – լսվեց մի ձայն:

– Ես երկար ժամանակ է, ինչ Ձեզ եմ փնտրում: Սի հարցով պիտի Ձեզ դիմեմ: Ինձ Ձեզ մոտ է ուղարկել ծերուկ խխունջը:

– Սպասի՛ր, հիմա կիջնեմ:

Եվ բարձր խոստի վրայից իջավ մի մեծ, կլորիկ տիգ:

– Լսում եմ, փոքրիկ, ի՞նչ է պատահել: Դու ճի՛շտ ես եկել, էլ ո՞վ, եթե ոչ ես կարող եմ քեզ օգնել: Ե՛ս, ե՛ս, գիտես, չէ՞, թե ես ով եմ, – սկսեց գլուխը գովել տիգը:

Լեոն զարմացած նայում էր:

Մեկ էլ հանկարծ, բոլոր կողմերից, հայտնվեցին բազմաթիվ տզեր՝ փոքր ու մեծ, չաղ ու նիհար, քաղցած ու կուշտ: Բոլորը հիացած հայացքով նայում էին Դադոյին:

– Լսի՛ր, փոքրիկ, այս բացատում թե կա մեկը, ով քո բոլոր հարցերին կտա սպառիչ պատասխան, ապա դա ե՛ս եմ: Եվ այսպե՛ս, ո՞վ է բացատում ամենագետը... – հարցրեց Դադոն մյուս տզերին:

– Դադո՛ն, – հիացած ու միաձայն զոչեցին մյուս բոլոր տզերը: Ամեն ինչ վերածվեց մի երաժշտական հանպատրաստից ու շատ ինքնատիպ ներկայացման: Դադոն արդեն երգելով էր խոսում, իսկ մյուս տզերը ոնց որ երգչախմբի անդամներ լինեին, որ կատարում էին իրենց ամենասիրած երաժշտական համարը:

– Ո՞վ է ամենախելացին... – երգում էր տիգը:

– Դադո՛ն:

– Ո՞վ է ամենագիտունը...

– Դադո՛ն:

– Լսի՛ր, զատիկ, իմ բարեկամ, – շարունակեց Դադոն, – այստեղ ես եմ տեր ու տիրական: Քո բոլոր հարցերին ունեմ պատասխան:

– ՈՒՆԻ՛ պատասխան, – ինքնամոռաց երգում էին տզերը:

– Չկա մեկը ինձնից ավելի խելացի:

– Իրենից խելացի, – երգելով հաստատում էին տզերը:

– Ես եղել եմ շատ տեղերում, – ասաց Դադոն:

– Շա՛տ տեղերում, – շարունակում էին ձայնակցել հիացած տղերը:

– Ես տեսել եմ աշխարհը:

– Տեսել է աշխա՛րհը:

– Իմ նմանին դեռ չի ծնել դարը:

– Չի՛ ծնել դարը, – կրկնում էին տղերը:

– Տո՛ւր ինձ քո հարցը, տո՛ւր քո հարցը, քո հա՛րցը, – հնչեղ վերջաբանով երգը ավարտեց Դադոն:

– Պարոն Դադո, ես ի՞նչ անեմ, որ դառնամ մե՛ծ բզեզ, – համերգային կատարումից զարմացած ու շփոթված, հարցրեց զատիկը: – Ուզում եմ մեծանալ ու մեծ բզեզ դառնալ: Դուք կարո՞ղ եք ինձ օգնել:

– Իհա՛րկե կարող եմ, ճստիկ, – իրենից զոհ ասաց Դադոն:

– Իհա՛րկե, կարող է, – կրկնեցին տղերը:

– Լսի՛ր, ճստիկ, եթե Դու ուզում ես դառնալ կարգին, մեծ բզեզ, ապա պիտի խմես մի բան:

– Ի՞նչ, – հարցրեց Լեոն:

– Այն, ինչ խմում ենք ես ու իմ ընկերները: Դա համեղ հեղուկ է:

– Ի՞նչ հեղուկ է:

– Դա արյունն է, – հիացած ասաց տիգը:

– Ի՞նչ, արյո՞ւն, ի՛նչ եք ասում, ես արնախում չեմ, դա զգվելի բան է, չի կարելի արյուն խմել:

– Բայց, փոքրիկ մենք դրանով ենք սնվում, մենք մակաբույծ տղեր ենք, կոչվում ենք շան տղեր: Մենք հարձակվում ենք շատ կենդանիների, նույնիսկ մարդու վրա՝ արյուն ծծելու համար: Մարդու արյունը ծծելու ժամանակ մենք կարող ենք վարակել մարդուն տզային հիվանդություներով: Մարդու համար վտանգավոր են նաև մեր մյուս

եղբայրները՝ քոսի տղերը, որոնց պատճառով մարդը վարակվում է քոսով, քանի որ նրանք մտնում են մաշկի մեջ ու առաջացնում քոր: Մենք՝ շան տղերս, արնախում ենք ու դրա համար ենք այսպես մեծացել, ցմփորացել: Ռո՛ւ էլ խմիր:

– Չէ՛, շնորհակալություն, ես ավելի լավ է ուրիշ ելք գտնեմ:

– Լսի՛ր, դու չգիտես, թե ինչ համեղ բան է շան կամ մարդու արյունը, – շարունակեց Ռադոն:

Նա Լեոյի աչքում արդեն զզվելի էր թվում:

– Լսե՛ք, պարոն, ես ասացի, որ ես արնախում չե՛մ, – պնդեց Լեոն: – Ձեզ էլ խորհուրդ կտամ չխմել արյուն:

Բոլորը ծիծաղեցին:

– Եթե մենք չխմենք, ապա քաղցից կմեռնենք, – ասաց Ռադոն, – դա մեր սնունդն է: Տգրուկները, մոծակները նույնպես արյուն են խմում: Բնությունն է մեզ այդպիսին ստեղծել:

– Չէ՛, շնորհակալություն, ես արյուն չե՛մ խմի: Ղե լավ, ինձ կներեք, բայց ես պետք է գնամ, – ասաց շփոթված զատիկն ու հեռացավ:

Այ քեզ բան, այսքան երկար ճանապարհ կտրելուց ու տզին վերջապես գտնելուց հետո՝ այսպիսի՞ խորհուրդ պիտի տար նա: Լեոն հիասթափված էր ու տխուր: Նա թռավ մի ծառի վրա ու փորձեց ի մի բերել մտքերը, որպեսզի որոշի, թե ինչ անի: Ջատիկը նորից մտածեց մարդկանց մասին. «Ովքե՞ր են նրանք, ինչպիսի՞ արարածներ են»:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

*Որտեղ գատիկն իր համար բացահայտում է մեղուների  
գարմանահրաշ աշխարհը*

Հազիվ էր Լեոն ուշքի եկել տղերի հետ հանդիպումից, երբ լսեց կողքի ճյուղի վրա նստած երկու կրետի խոսակցություն.

– Այսօր, այսօր է վճռական օրը, մենք վերջ կտանք այդ մեղուներին:

– Իսկապես, այսօր դրանց վերջը կտանք: Ամբողջ խմբով կհարձակվենք և կվերացնենք դրանց:

– Խեղճ մեղուներ, – մտածեց գատիկը: – Հարկավոր է փրկել նրանց, պետք է նախազգուշացնել կրետների հարձակման մասին:

Ջատիկն արագ թռավ դեպի մոտակա ծաղիկները, որպեսզի մեղրատու մեղու գտնի: Մի քանի ծաղկի վրայից թռչելով նա, վերջապես, գտավ մի մեղվի, որը մեծ խնամքով և վարպետությամբ նեկտար էր հավաքում երիցուկից:

– Ներեցե՛ք, բարև ձեզ: Ներեցեք, Դուք ինձ լսո՞ւմ եք, – շփոթված ու շնչակտուր հարցրեց գատիկը՝ տեսնելով, որ մեղուն շատ է տարվել ծաղկափոշի հավաքելով:

– Հարգելիս, չե՞ք տեսնում, որ զբաղված եմ, – քիչ անց պատասխանեց մեղուն:

– Ներեցեք, որ խանգարում եմ, բայց շատ կարևոր բան ունեմ Ձեզ ասելու:

– Ի՞նչ է պատահել, – հետաքրքրվեց մեղուն:

– Ես ուզում եմ Ձեզ նախազգուշացնել, որ ձեր փեթակին վտանգ է սպառնում:

– Մեր փեթակի՞ն, – զարմացավ մեղուն: – Դու ո՞վ ես, բարի՛ ընկեր:

– Իմ անունը Լեո է, ես գատիկ եմ: Պատահաբար լսեցի երկու կրետոների խոսակցությունը:

– Ի՞նչ էին խոսում:

– Վայրի կրետոները ծրագրել են հարձակվել ձեր փեթակի վրա:

– Արի շուտ թռչենք փեթակ ու դու կպատմես բոլոր մանրամասները, – շփոթված ասաց մեղուն:

– Գնանք, – ասաց Լեոն:

Եվ նրանք արագ թռան դեպի փեթակը: Թռչելիս Լեոն հարցրեց.

– Ինչպե՞ս է Ձեր անունը:

– Ի՞նչ, – թևերի աղմուկից հարցը չլսելով՝ ասաց մեղուն:

– Ասում եմ՝ ինչպե՞ս է Ձեր անունը:

– Հա՛, Մակի է անունս:

– Շատ հաճելի է, – ուրախացավ Լեոն:

– Նմանապես:

Նրանք հասան փեթակ: Մուտքի մոտ պահակ մեղուները ներս թողեցին նրանց:

Լեոն առաջին անգամ էր մտել փեթակ ու նրա համար զարմանալի ու հետաքրքիր էր ամեն բան: Մակին կանչեց փեթակի նախասրահում գտնվող մեղուներին, ու Լեոն պատմեց բոլորին, թե ինչ է լսել: Մեղուները խառնվեցին իրար: Հարձակման մասին լուրը վախեցրեց նրանց:

– Խուճապի մատնվել պետք չէ, – լսվեց հանդարտ, խրոխտ ու վստահ մի ձայն. հավաքված բազմությանը մոտեցողը Մայր մեղուն էր, որպես փեթակի իսկական թագուհի՝ նա վեհ ու հպարտ տեսք ուներ ու իր չափերով էլ

ավելի խոշոր էր մյուս մեղուներից:–Մենք ամենակազմակերպված միջատներից ենք աշխարհում և արժանի հակահարված կտանք մեր թշնամիներին: Թող նրանք իմանան, որ մեղրատու մեղուներն ազնիվ, տքնաջան աշխատանքով ապրող ու օգտակար կենդանիներ են, որոնք քանի՜ դար է ապրում են մարդու կողքին ու պարզևու՜մ մեղր...

–«Մարդու կողքին»...–լսեց Լեոն և մտածմունքի մեջ ընկավ: Նա նորից լսեց մարդկանց՝ այդ անծանոթ ու իր համար զարմանահրաշ, առեղծվածային էակների մասին:

–Եվ այսպե՛ս,–բարձր ձայնով ասաց Մայր մեղուին:–Մեզ սպասում է կարևոր, ճակատագրական հանդիպում մեր թշնամիների հետ, և մենք պիտի պատվով հաղթահարենք այս խնդիրը, ցույց տանք բոլորին, թե ովքեր են մեղուները:

Այս խոսքերից հետո Մայր մեղուին հեռացավ՝ ցուցումներ տալու իր արու օգնականներին:

Փեթակն անցավ արտակարգ ռեժիմով ապրելուն. ռազմական պատրաստության բերվեցին բոլոր ստորաբաժանումները, հզորացվեց փեթակի մուտքը հսկող պահակախումբը, մի քանի հետախույզ մեղուներ դասավորվեցին փեթակից տարբեր հեռավորության վրա. մեկը՝ ծառի ճյուղին, երկրորդը՝ ծաղկի, երրորդը՝ թփերի մեջ, չորրորդը՝ հինգերորդի թիկունքում: Փեթակում ապահով պահվեցին բոլոր թրթուրները, որպեսզի կրետները չհասնեն ու չոչնչացնեն մատաղ սերնդին:

Այսպիսով՝ փեթակը պատրաստ էր դիմագրավելու վտանգին ցանկացած պահի: Ամբողջ օրվա ընթացքում փեթակի մեղուները՝ Մայր մեղվի գլխավորությամբ և հանձնարարությամբ, հասցրեցին նաև սննդի մեծ պաշար կուտակել, քանի որ գիտակցում էին, որ սպասվելիք մարտի



Ժամանակ դաշտում աշխատել՝ այսինքն ծաղկափոշի հավաքել, չի լինի:

Այս ընթացքում, մինչ փեթակը բերվում էր ռազմական պատրաստության, Մակին սկսեց ծանոթացնել իր հյուր Լեոյին փեթակի կառուցվածքին, բնակիչներին:

– Անկեղծ ասած, – ասաց Լեոն, – ես այդքան էլ լավ ծանոթ չեմ փեթակին, թեև գիտեմ, թե ինչքան օգտակար են մեղուները:

– Իմ լավ բարեկամ, – ասաց Մակին: – Ես գիտեմ, թե ինչպես կարելի է քեզ արագ ծանոթացնել մեղուների զարմանահրաշ աշխարհին: Գնանք, վերևի հարկում մեր դպրոցն է: Ճիշտ է՝ փեթակում հիմա անհանգիստ է, սակայն դասերն այնտեղ չեն դադարում, քանի որ թրթուրները և փոքրիկ մեղուները պիտի շատ բան սովորեն, որպեսզի փեթակի համար պատրաստի, կիրթ աշխատողներ լինեն: Այ, այս պահին դասն սկսվել է, ու մեր ուսուցիչ մեղուն առաջին դասարանցի մեր թրթուրներին սովորեցնում է, թե ի՞նչ է նշանակում մեղու, ինչպե՞ս պիտի նրանք դառնան հասուն մեղու ու ինչպե՞ս պիտի հետագայում մեղր հավաքեն: Երբ ես էլ էի թրթուր, ես էլ եմ հաճախել մեր դպրոցը ու ամեն բան սովորել: Այդ հետաքրքիր դասը քեզ կօգնի արագ ծանոթանալ մեղուներին:

Եվ Մակին Լեոյին տարավ մեկ հարկ վերևում գտնվող դպրոց, որտեղ ուսանում էին փոքրիկ թրթուրները: Նրանք մտան դասարան: Ուսուցչուհի մեղուն ասաց.

– Երեխաներ, մենք այսօր հյուրեր ունենք, ողջունեք նրանց:

– Բարև՝ ձեզ, – բարձրաձայն ասացին բոլոր փոքրիկ թրթուրները:

– Բարև ձեզ, – ասացին Լեոն ու Սակին:

– Մենք ձեզ չե՞նք խանգարի, – ամաչելով հարցրեց Լեոն ուսուցչուհուն:

– Ամենևին, ես և փոքրիկները շատ ուրախ ենք, որ Դուք այսօր ներկա եք մեր դասին: Եվ այսպես, իմ լավ փոքրիկներ, այսօր մենք ձեզ հետ կծանոթանանք մեղուների ով լինելուն ու նրանց կատարած աշխատանքին: Տաք օրերը սկսվելու հետ, առաջին ծաղիկների հայտնվելուն պես, մենք՝ մեղուներս, սկսում ենք դրանցից ծաղկափոշի հավաքել: Ծաղկավոր բույսերից նեկտար հավաքելու համար են նախատեսված մեր բոլոր օրգանները՝ և՛ հետին ոտքերի վրա եղած հատուկ խոզանակներն ու զամբյուղիկները, որոնց օգնությամբ օրվա ընթացքում մենք հավաքում ու փեթակ ենք տեղափոխում մեծ քանակությամբ ծաղկափոշի, և՛ երկար կնճիթը, և՛ ազդանշանային ուրույն համակարգը, որի օգնությամբ մենք միմյանց հաճույքով հայտնում ենք մեր գտած մեղրատու բույսի մասին բոլոր տվյալները: Ուշադրություն դարձրեք այս նկարին, – մատնացույց անելով գրատախտակից կախված ցուցապաստառը՝ ասաց ուսուցչուհին և շարունակեց: – Ծաղիկներից ծծած նեկտարը անցնում է մեղվի լայն կտնառքը:

– Ներեցեք, իսկ ի՞նչ է կտնառքը, – հարցրեց մի հետաքրքրասեր թրթուր:

– Դա մեր բերանի ապարատի մի մաս է: Եվ այսպես, ծաղիկներից ծծած նեկտարը անցնում է մեղվի լայն կտնառքը և խառնվում դրանում եղած գեղձերի արտադրության հետ: Իսկ հետո մեղուն այդ նեկտարը խնամքով լցնում է մեղրահացի բջիջների մեջ, որտեղ այն փոխակերպվում է մեղրի: Սակայն, որքա՞ն մեղր կարող է պատրաստել մեզանից յուրաքանչյուրը: Որպեսզի մեղուն ծաղիկներից այնքան

նեկտար հավաքի, որը հետո դառնա մեկ կիլոգրամ մեղր, նա պետք է կտրի անցնի ոչ ավել, ոչ պակաս՝ երեք հարյուր հազար կիլոմետր ճանապարհ՝ այդ ընթացքում «աշխատելով» գրեթե տասնինը միլիոն ծաղկի վրա:

– Չէ՛ հա, – գարնացած աչքերով միաձայն ասացին փոքրիկ թրթուրները՝ հասկանալով, թե ի՛նչ մեծ աշխատանք է իրենց սպասվում, երբ դառնան մեղու:

– Ձուր չէ, որ մեղուների աշխատասիրությունն իսկական ասացվածք է դարձել, – շարունակեց ուսուցչուհին: – Ժրաջան մեղուները՝ մեր փեթակի աշխատավոր բնակիչները, տանջվում են օրն ի բուն: Դուք, երևի, կհարցնեք, թե մեր ինչի՞ն է պետք այդքան մեղր: Բանն այն է, որ մեղրը մեր՝ մեղուներիս կերն է: Չմոռանը մենք չենք քնում, իսկ տարվա այդ եղանակին ոչ մի ծառ չի ծաղկում: Այդ պատճառով էլ ամռանը մենք այնքան ենք աշխատում, որ, որպես կանոն, անհամեմատ ավելի շատ մեղր է ստացվում, քան իրականում պետք է մեզ, և այդ դեպքում ստացված մեղրը բավականացնում է թե՛ մեզ, թե՛ մարդկանց: Հա՛, չմոռանամ նշել, որ մեղրահացերում եք աճում նաև դուք՝ թրթուրներդ, որ մեր ապագա մեղուներն եք դառնալու: Հասուն մեղուները ձեզ նաև կերակրում են ստացված այդ մեղրով ու նաև ծաղկափոշիով:

Թրթուրները ծափահարեցին և «ուռա՛» գոչեցին՝ ոգևորվելով, որ շուտով մեղու կդառնան ու իրենք էլ կթռչեն ծաղկից ծաղիկ՝ ի նպաստ փեթակի բարգավաճման:

– Եվ այսպես, հիշեք, որ մենք՝ մեղուներս, նախանձելի աշխատասիրություն ունենք: Հիմա նայեք այս մյուս նկարին: Այստեղ պատկերված է Մայր մեղուն՝ մեր փեթակի տիրուհին ու սերունդ ապահովողը: Դուք բոլորդ նրա զավակներն եք: Միայն Մայր մեղուն է, որ ոչ մի աշխատանք չի կատարում

փեթակում, և ինքն էլ մշտական հոգատարություն է պահանջում իր հանդեպ: Նա փեթակում միակն է, որ ձվեր է դնում, որոնցից հետո դուրս եք գալիս դուք ու դառնում մեղուներ: Այնպես որ, պիտի սիրենք ու պահպանենք մեր Մայր մեղվին: Իսկ հիմա անցնենք հարց ու պատասխանին: Հարցեր կա՞ն,– դասարանին դիմեց ուսուցչուհին:

– Ներեցեք, ես հարց ունեմ,– ասաց մի թրթուր:

– Խնդրեմ,– սիրալիր պատասխանեց ուսուցչուհին:

– Իսկ մեր փեթակը շա՞տ մեծ է,– հարցրեց փոքրիկը:

– Շա՛տ մեծ: Մեր փեթակում ապրում է շուրջ հիսուն հազար մեղու: Բոլորն էլ մեկ պտղատու էգի՝ մեր Մայր մեղվի կամ Թագուհու սերնդից են: Մեր Մայր մեղուն նոր է ընտրվել փեթակի տիրուհի: Մենք՝ մեղրատու մեղուներս, ի դեմս Մայր մեղվի, նոր ընտանիքներ կազմում ենք՝ մայիս–հունիս ամիսներին ձագ տալով: Դրա համար փեթակում բազմացվում են արու մեղուներ՝ բռռեր և հիմնադրում բջիջներ՝ նոր մոր համար: Փեթակի երիտասարդ, նորընտիր մայրը դուրս է թռչում բռռերի հետ, զվարճանում, օդում բեղմնավորվում, հետո վերադառնում փեթակ ու ջանասիրաբար ձեռնամուխ լինում ձվադրմանը:

– Իսկ ի՞նչ է «բեղմնավորում»,– հարցրեց հետաքրքրասեր մեկ այլ թրթուր:

– Սիրելի երեխաներ, բեղմնավորումը մի պրոցես է, որն իրականացնում են բնության բոլոր արարածները: Կենդանիների ու մարդկանց մոտ բեղմնավորման ժամանակ արական ու իգական առանձնյակները միանում են և փաղաքշում իրար՝ միմյանց սիրելու ու սերունդ տալու համար: Բեղմնավորման մասին ավելի մանրամասն ես ձեզ կպատմեմ, երբ ավելի մեծանաք, իսկ մեր դասի այս հատվածում այժմ

անդրադառնանք մեր արտադրանքին՝ մեղրին ու մեր նշանակությանը բնության մեջ: Մենք բոլորս սիրում ենք մեղր: Հավանաբար չկա նաև մի մարդ, որ չսիրի սննդարար, քաղցր ու անչափ համեղ մեղրը: Մարդիկ վաղուց են գնահատել մեղրի հրաշալի հատկությունները, մեղուների անգնահատելի որակները, նրանց ապրելաձևի գաղտնիքները, մեղվի թույնի բուժիչ հատկությունները և այլն: Մեղուներիս օգուտը մեծ է ու բազմազան: Նախ, մենք պարզեցինք, որ տալիս ենք սննդարար ու բուժիչ մեղր, ինչպես նաև մեղրամոմ, որը թե՛ մենք, թե՛ մարդիկ օգտագործում ենք տարբեր նպատակներով: Օգտակար հատկություններ ունի նաև խայթոցի համար նախատեսված մեր թույնը, որն օգնում է մարդուն՝ բուժելու շատ հիվանդություններ: Պիտի հպարտ լինեք, քանի որ դուք, որ ապագայում պիտի դառնաք փեթակի մեղուներ, մեծ օգուտ եք բերում մարդկանց: Մեղվապահությանը, մեղվաբուծությանը մարդկանց աշխարհում մեծ ուշադրություն են դարձնում: Այս ամենից բացի, մեղուները մի շատ կարևոր դեր էլ ունեն բնության մեջ: Հավաքելով ծաղկափոշին՝ մենք մեծ դեր ենք խաղում նաև շատ բույսերի փոշոտման հարցում, որպեսզի նրանք էլ նոր սերունդ տան ու բազմանան:

Այսքանը՝ այսօրվա համար: Սիրելի երեխաներ, հրաժեշտ տվեք մեր հյուրերին ու գնացեք դեպի ձեր բջիջները:

Դասն ավարտվեց: Թրթուրները, հրաժեշտ տալով ուսուցչուհուն և հյուրերին, վերադարձան իրենց վեցանիստ բջիջներն ու տեղավորվեցին այնտեղ:

Լեոն շնորհակալություն հայտնեց ուսուցչուհուն՝ մանկավարժի իր սուրբ ու շնորհակալ գործի համար: Մակիի ուղեկցությամբ գատիկը իջավ ներքև՝ ականատեսը լինելու մեղուների պատրաստության:

## ՉԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

*Որտեղ պատմվում է, թե ինչպես էին կրետները  
պատրաստվում գրոհի, իսկ մեղուները՝ պաշտպանության*

Փեթակն արդեն լրիվ պատրաստ էր կռվի: Չկար մի բան, որ մեղուները մոռացած լինեին, չկար մի անկյուն փեթակի մեջ, որ անպաշտպան լիներ: Մեղուները գիտեին, որ կրետները նենգ ու խորամանկ են ու հաշվի էին առել ամեն ինչ, անգամ փեթակի բոլոր այն հնարավոր անցքերն ու ճեղքերը, որոնք կրետները կփորձեին օգտագործել՝ ներս սողոսկելու համար: Որպեսզի այդպիսի բան տեղի չունենար, մեղուները թանձր մեղրով ծածկել էին բոլոր ճեղքերը:

Այս պահին ուղևորվենք դեպի կրետների բույնը և տեսնենք, թե այնտեղ ի՞նչ է կատարվում: Նրանք նույնպես լրջորեն պատրաստվում էին, սակայն ոչ թե պաշտպանության, այլ՝ հարձակման: Կրետների Պերագույն հրամանատարը՝ Պեներալ Կրետուսը, հավաքել էր իր սպայական լավագույն կազմը և ցուցումներ էր տալիս:

– Եվ այսպես, այսօր հարձակվում ենք: Մեղուները ոչինչ չգիտեն մեր մոտալուտ հարձակման մասին, և դա շատ լավ է: Հանկարծակիի բերելով՝ մենք կկարողանանք խուճապի մատնել նրանց, կազմալուծել նրանց պաշտպանական բանակը, ներս թափանցել փեթակ և գրավել այն: Իսկ փեթակում մենք միշտ կլինենք ապահով: Այնտեղ միշտ սնունդ կա, տաք է ու հարմարավետ: Փեթակը կդառնա մեր մշտական տունը և կլինի ամբողջովին մերը, անգամ մարդիկ երբեք չեն համարձակվի մոտենալ փեթակին:

– Պարոն Գերագույն հրամանատար, – ասաց կրետներից մեկը, – մենք ցերեօկն ենք հարձակվելու:

– Ո՛չ, հարգելիս, մենք կհարձակվենք երեկոյան, երբ նրանք մեզ բոլորից քիչ են սպասում: Լսե՛ք իմ հանձնարարությունները: Իմ աջ թևի հրամանատար Դելոյին կարգադրում եմ, զորքի հետ միասին, դիրքավորվել փեթակից աջ ընկած թփերի ու ծաղիկների մեջ: Իմ բանակի ձախ թևի հրամանատար Ֆեզին հրամայում եմ առնել իր զորքերը և թռչել ու դասավորվել փեթակից ձախ աճող լորենու ճյուղերին: Կենտրոնական գծում կլինեն ես, և ինձ հետ կգա լավագույն ստորաբաժանումը: Իսկ դու, Կոհո, կլինես թիկունքի հրամանատարը և քո տնօրինության տակ կունենաս հազար զինվոր:

– Լսում ենք, պարոն Գերագույն հրամանատար: Կեցցե՛ գեներալ Կրետուսը, – գոչեցին բոլոր ներկաները ու հատկապես հրամանատարներ Դելոն, Ֆեզը և Կոհոն:

– Լրտեսների խումբը, – շարունակեց Կրետուսը, – թող, ինչպես միշտ, ղեկավարի խորամանկ Լարթը: Լսեցի՞ր ինձ Լարթ:

– Ճիշտ այդպե՛ս, պարոն Գերագույն հրամանատար:

– Այսօր մենք մեղուներին ցո՛ւյց կտանք մարտական պատրաստության մեր բարձր մակարդակն ու ռազմական որակը, – գոչեց Գեներալը:

Եվ այսպես, կրետները ծրագրել էին հարձակվել փեթակի վրա երեկոյան, երբ մեղուները հանգիստ են ու չեն սպասում վտանգի: Նրանք, իհարկե, տեղյակ չէին, որ մեղուներն արդեն գիտեն իրենց մոտալուտ հարձակման մասին, այլապես երբեք չէին համարձակվի հարձակում գործել կազմ-պատրաստ, վտանգին սպասող ահեղ փեթակի վրա:

Երեկոն իջավ բացատի վրա:

Մեղուները դիրքավորված սպասում էին: Նրանք իրենց քանակով մի քանի անգամ գերազանցում էին կրետներին, ունեին լավ զինված պաշտպանական բանակ: Կռվին պատրաստ էին և՛ արուներից կազմված հատուկ ստորաբաժանումները, և՛ աշխատավոր մեղուներից կազմված մեծաքանակ վաշտերը, և՛ անգամ Մայր մեղուն: Վերջինիս անվտանգությունն էլ ապահովում էր մի վիթխարի թիկնազոր՝ կազմված մի քանի տասնյակ ամրակազմ արու մեղուներից: Մեղուներն ամենայն լրջությամբ էին պատրաստվել, հաշվի էին առնվել բոլոր մանրուքները, կռվի ժամանակ հնարավոր բոլոր տիպի անակնկալները:

Բախման պահը մոտ էր. կրետների զորքը, որը կարելի է ավազակախումբ անվանել, ընդհուպ մոտեցել էր փեթակին: Ըստ մարտական պլանի՝ առաջինը պիտի հարձակվեին Ֆեզի զինվորները, այսինքն՝ կրետները ծրագրել էին փեթակը գրոհել, նախ, ձախ թևից: Մինչ մեղուները կհասկանային, թե ինչ է կատարվում՝ մարտին պետք է միանար կենտրոնական թևը, մեղուները խուճապի կմատնվեին, և այդ ընթացքում աջ թևի հզոր զորախումբը կներխուժեր փեթակ: Ռազմավարական առումով՝ փայլուն պլան էր. շեղել հակառակորդի ուշադրությունը և գրավել նրա հենակետերը՝ վերջինիս համար անսպասելի ուղղությունից հարձակում գործելով: Սակայն այդ ծրագիրը հրաշալի կիրագործվեց, եթե չլիներ մի «բայց». մեղուներն արդեն սպասում էին հարձակմանը, ընդ որում՝ և՛ ձախ, և՛ աջ, և՛ առջևի գծում, և՛ անգամ թիկունքում: Իսկ ահա փեթակի մեջ ավազակ կրետներին սպասում էր մեծ ու տիպի մեկ այլ անակնկալ ևս. այստեղ դիրքավորվել էին մի քանի հարյուր մեղվից կազմված պահեստազորը և Մայր մեղվի ահեղ թիկնազորը:



## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

*Որտեղ տեղի է ունենում սարսափելի պատերազմը*

Երբ արդեն երեկոն իջել էր, ու համարյա մթնշաղ էր, կրետները հարձակվեցին: Ձախ թևի մի քանի տասնյակ կրետ նետվեց դեպի փեթակը, սակայն, ի զարմանս իրենց, հանկարծ հայտնվեցին հարյուրավոր մեղուներ, և նրանք բախվեցին իրար: Հրամանատար Ֆեզը կարգադրեց անմիջապես զեկուցել Գեներալ Կրետուսին, որ մեղուներն իրենց սպասում էին ձախ թևում, և քանի որ նրանք քանակական գերակշռություն ունեն, ապա իր անունից անհապաղ օգնություն է խնդրում: Գերագույն հրամանատարն իր լավ զինված ստորաբաժանման հետ անմիջապես շտապեց օգնության: Սակայն, այստեղ էլ անակնկալ կար. չէին հասցրել կենտրոնական գծի կրետները հասնել մարտի թատերաբեմ, երբ թփերի միջից նրանց վրա հարձակվեց մեղուների երկրորդ զորախումբը՝ բաղկացած երկու հազար մեղվից: Թեժ պայքար սկսվեց: Շուրջբոլորը լցվել էր համատարած ու զայրագին բվվոցով ու բզզոցով: Կրետներն ու մեղուները խայթում էին իրար, հրում, հարվածում: Երկու կողմում էլ արդեն կային բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: Գեներալ Կրետուսը՝ տեսնելով, որ մեղուները չափազանց շատ են, նշան տվեց աջ թևի հրամանատարին, որպեսզի նա իր զորքով հարձակվի ծրագրվածից շուտ:

– Առա՛ջ, – գոչում էր նա: – Ինչ էլ լինի՝ առա՛ջ:

Աջ թևի հրամանատար Ղելոն իր զինվորների հետ հարձակվեց փեթակի վրա՝ կարծելով, թե բոլոր մեղուները մարտի դաշտում են, և նրանք հանգիստ կգրավեն անպաշտպան փեթակը: Սակայն, կրետները այստեղ էլ ստացան

արժանի հակահարված. նրանց աջ թևին դիմագրավելու ելան փեթակի աջ թևի, թիկունքի և պահեստագործի վճռականորեն տրամադրված բազմահազար մեղուներ: Նրանք պաշտպանում էին իրենց տունը, իրենց տարածքը, սահմանները, կարելի է ասել՝ հայրենիքը, իսկ հայրենիքի պաշտպանության համար կռվող ցանկացած մարտիկ կրկնակի զորեղ է, ուժեղ է և՛ ֆիզիկապես, և՛ ոգով:

Պայքարն իր գագաթնակետին էր հասել: Գերագույն հրամանատարի զորքում մեծ թվով կորուստներ կային: Կրետներն արդեն անկարող էին շարունակել գրոհը: Անգամ եթե կարողանային անցնել մեղուների պաշտպանական ամուր գիծը, ապա միևնույն է՝ փեթակի ներսում սպասող պահեստագործի կեսին ու զորեղ թիկնագործին այլևս չէին կարողանա հաղթել:

Շուրջը շարունակվում էր անտանելի բզզոցը: Օդում գոյացել էր կրետներից ու մեղուներից կազմված մի վիթխարի ամպ: Կռվում էին ու կռվում՝ խայթելով միմյանց:

Թիկունքի հրամանատար Կոհոն, որի զորքը, ստիպված, նույնպես միացել էր կռվին, թռավ ու հագիվ մոտենալով Գեներալին, գոչեց.

– Պարոն Գեներալ, մենք պարտվում ենք, զինվորները պակասում են, մեղուները չափազանց շատ են, այլևս անկարող ենք գրոհել:

– Ո՛չ, շարունակել գրոհը, – բացականչեց զայրացած Գեներալը, – շարունակել:

– Պարոն Գեներալ, թույլ տվեք տեղեկացնել, որ խորամանկ Լարթը դավաճանեց մեզ, նա վախկոտի պես վախսավ՝ իր հետ տանելով մի մեծ զորախումբ:

– Ի՞նչ, – զարմացած բացականչեց Կրետուսը: – Այդ

վախկոտը դավաճանե՞ց մեզ, գտնել և պատժել նրան:

– Նա արդեն շատ հեռու է, պարոն Գեներալ: Ավելի լավ է մտածեք կրվող զորքի մասին, մենք կործանվում ենք,– հուսահատված գոչեց Կոհոն:

Գեներալն իրոք տեսավ, որ այլևս հնարավոր չէ գրոհել և բացականչեց.

– Նահանջե՛լ, նահանջո՛ւմ ենք, հե՛տ, իմ հետևի՛ց:

Ողջ մնացած, վիրավոր կամ անվնաս բոլոր կրետները, որոնք արդեն ուժասպառ էին եղել, անմիջապես թռան ու փախան հուսահատված Գեներալի հետ միասին: Նրանց հետքն անգամ կորավ:

Կրետները տանուլ տվեցին այս պատերազմը, իսկ մեղուները հաղթեցին՝ շնորհիվ քաջարի ոգու, ուժի, համախմբվածության ու միասնականության, և, իհարկե, փոքրիկ Լեոյի օգնության, քանի որ զատիկի տեղյակ պահելուց հետո միայն հնարավոր եղավ այդպես պատրաստվել ու մարտնչել՝ պաշտպանելով սեփական փեթակը, դրանում ապրող մատղաշ թրթուրներին, այնտեղ կուտակված մեղրը, Մայր մեղվին և, վերջապես, սեփական պատիվն ու արժանապատվությունը:

## ԳՆՈՒՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

*Որտեղ պատմվում է մեծ տոնախմբության մասին*

Մութն ընկավ: Արդեն լսվում էին դաշտային ճռիկների ձայները: Բացատի բոլոր բնակիչները պատրաստվում էին քնելու: Փեթակը նույնպես հայտնվել էր մթության մեջ, սակայն ներսում բոլորը դեռ արթուն էին. պատերազմն ավարտվել էր,

և ողջ մնացած մեղուները շարունակում էին փեթակ բերել իրենց վիրավոր ցեղակիցներին: Փեթակում և՛ տխուր էին՝ կորցրած ընկերների, և՛ անչափ ուրախ՝ տարած հաղթանակի համար: Բոլորը հասկանում էին, որ հաղթանակը պետք է նշել ու սկսեցին պատրաստվել տոնախմբության:

Կարճ ժամանակ անց ներսում մեծ տոնախմբություն կազմակերպվեց: Բոլորը պարում էին, ուրախանում, հրձվում: Հյուրասիրությունը շքեղ էր: Մեղուները մեղրով լցված բաժակներով կենացներ էին ասում, շնորհավորում միմյանց, խմում Մայր մեղվի, երիտասարդ սերնդի՝ թրթուրների, ինչպես նաև իրենց փեթակի բարգավաճման կենացը: Ամենուրեք տիրում էր բարձր տրամադրություն, որը համակել էր փեթակի բոլոր մեղուներին՝ մեծ ու պստիկ, աշխատավոր, թե՛ արու:

Լեռն շատ էր ուրախանում՝ նայելով խանդավառված մեղուներին: Նա գիտակցում էր իր համեստ լուման, որ ունեցավ այդ հաղթանակի մեջ:

Տոնը տևեց մինչև ուշ գիշեր: Թվում էր, թե բոլոր խոսքերը, կենացներն ու բարեմաղթանքներն ասված են: Սակայն երբ տոնախմբությունն արդեն մոտենում էր ավարտին, Լեռյին և բոլորին սպասում էր մեծ անակնկալ. Մայր մեղուն զատիկի պատվին հատուկ միջոցառում էր կազմակերպել: Նախ բոլորի ներկայությամբ նա իր խոր երախտագիտությունը հայտնեց Լեռյին՝ փեթակին անշահախնդրորեն օգնելու համար, և հետո, հանդիսավոր կերպով, զատիկին շնորհվեց մեղրամոմից ձուլված հատուկ մի շքանշան, որը խորհրդանշում էր զատիկի արիությունը, ազնվությունն ու անսահման բարությունը: Լեռյին շնորհվեց նաև «Փեթակի պատվավոր բնակիչ» կոչումը, որն առաջին անգամ ստանում էր ոչ թե

մեղու, այլ ուրիշ մի միջատ: Լեոն հպարտ էր ու շատ ուրախ, որ կարողացավ օգնել աշխատասեր, ազնիվ ու բարի մեղուներին:

Մայր մեղուն մեկ այլ անակնկալ էլ ուներ: Մակիից նա իմացել էր, որ Լեոն ուզում է մեծ բզեզ դառնալ և հատուկ իր կողմից զատիկին նվիրեց նաև գեղեցիկ, փոքրիկ մի տակառ՝ մեջը լիքը մեղր, որպեսզի Լեոն ուտի սննդարար, անմահական ու անարատ մեղրը և շուտ մեծանա, լինի առողջ և ուժեղ: Լեոն խորին շնորհակալություն հայտնեց նվերների համար: Նա անհարմար էր զգում այդքան նվերներ ստանալու համար: Մայր մեղուն գոհունակությամբ նշեց, որ նա արժանի է, չէ՞ որ փաստորեն փրկեց մի ամբողջ փեթակ: Լեոն շարունակեց մեղուների հետ տոնել հաղթանակը կրետների դեմ: Ոչ ոք չնկատեց, թե ինչպես անցավ ժամանակը: Այդ գիշերն անմռանալի դարձավ ու անջնջելի հետք թողեց Լեոյի կյանքում: Նա այնքան շնորհակալական խոսքեր ու մաղթանքներ լսեց մեղուներից, որ արդեն ամաչում էր, իսկ մի քանի ժամ անց արդեն այնքան էր մերվել նրանց հետ, որ իրեն մեղու էր զգում:

## ԳՆՈՒՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոն նոր ընկեր է ձեռք բերում*

Հաջորդ առավոտյան, արևի առաջին ճառագայթների հետ Լեոն հրաժեշտ տվեց բոլորին և ուղևորվեց դեպի անտառ: Մեծ ու խիտ անտառը երևում էր հեռվում, սակայն մինչ նրան հասնելը Լեոն դեռ երկար պիտի թռչեր: Ճանապարհին նա մի քանի մրջյունների հանդիպեց, հանձնեց նրանց մեղրով լի տակառը, որը նա չէր կարող երկար տանել

իր հետ ու խնդրեց, որ մրջյունները տակառը տանեն մրջնանոցի պահեստ՝ որպես երախտագիտություն իր կողմից Ադա թագուհուն: Լեոն քաղցրի սիրահար չէր, փոխարենը գիտեր, որ մրջյունները քաղցր շա՛տ են սիրում:

Ջատիկը երկար թռավ՝ մինչև հասավ անտառամերձ ծառերին: Անտառի եզրին աճում էին վայրի խնձորենիներ ու մի քանի փոքր բարդիներ: Լեոն թռավ ու նստեց այդ բարդիներից մեկի ճյուղի վրա, որպեսզի մի քիչ հանգստանա: Իսկապես հոգնել էր. այսքան թռչել մեկ օրվա մեջ շատ հոգնեցուցիչ էր: Նրա մտքում անընդհատ պտտվում էր մի հարց, թե կգտնի՞ արդյոք նա մեծ բզեզ դառնալու իրեն այդքան տանջող հարցի պատասխանը:

Հանկարծ Լեոն լսեց մի յուրահատուկ ձայն.

– Խ՛րթ, խ՛րթ...

Այդ խրթխրթոցը հետաքրքրեց զատիկին: Ջգացվում էր, որ ինչ-որ մեծ ախորժակով ինչ-որ բան էր ուտում, ուտելն այն խոսքը չէ՝ ուղղակի խռժում էր: Ո՞վ կարող էր լինել այդ բկլիկը:

– Ո՞վ կա այստեղ, – բարձրաձայն հարցրեց Լեոն:

Խրթխրթոցի ձայնն անմիջապես ընդհատվեց: Այդ մեկը, ով այդպես կրծում էր ինչ-որ բան, լսեց Լեոնի ձայնն ու ինքն էլ չհապաղեց պատասխանել.

– Սա ի՞նչ ծառն է, սա ի՞նչ տերևն է, չե՞մ տա քեզ:

– Ներեցեք, ես չեմ ուզում Ձեր տերևը, ես տերև չեմ ուտում, – ժպտալով ասաց Լեոն:

– Չե՞ս ուտում, անկե՞ղծ ես ասում, տե՛ս է, ի՛նչ լավ է, ես էլ մտածեցի, թե աչք ես դրել նախաճաշիս վրա, – լսվեց տերևների արանքից, և արդեն հաստատ զգացվում էր, որ խոսողը բկլիկի մեկն է:

– Կներեք, միգուցե երևաք և տեսնեն Ձեզ, թե չէ խոսում ենք իրար հետ՝ առանց իրար տեսնելու:

Այդ պահին վերևի ճյուղից մի թմբիկ որդ, իր թելից կախված, օրորվելով իջավ ուղիղ Լեոյի դիմաց:

– Բարև, անծանոթ, անկեղծ ասած, չէի սպասում քեզ,– ասաց որդը:

– Բարև ձեզ, ես Լեոն եմ, գատիկ Լեոն,– քաղաքավարի ասաց գատիկը:

– Դու հաստա՞տ տերև չես ուտում, անկեղծ ասած՝ շատ անհանգստացա,– կրկին հարցրեց որդը:

– Դե, չէ՛,– ծիծաղելով պատասխանեց Լեոն:– Անհոգ եղիր:

– Հաստա՞տ,– տերևի մի կտոր դեռ ծամելով, նորից հարցրեց շատակեր որդը:

– Հաստատ եմ ասում, դու ի՞նչ է, երբեք գատիկ չե՞ս տեսել:

– Ոչ, չեմ տեսել և ուրախ եմ ծանոթության համար,– անսպասելի ասաց որդը:

– Ես էլ,– ուրախ ասաց Լեոն:– Անունդ ինչպե՞ս է:

– Զագու:

– Հետաքրքիր անուն է,– ասաց գատիկը:

– Հազվագյուտ՝ ես կասեի,– վրա բերեց որդը:– Ողջ անտառում իմ անունից էլ չկա: Ի՞նչ ես անում այս կողմերում, Լեո:

– Ես ճամփորդում եմ՝ փորձելով գտնել մի հարցի պատասխան,– հոգոց հանելով ասաց Լեոն:– Ես մի մեծ երազանք ունեմ, ուզում եմ դառնալ մե՛ծ բզեզ:

– Ինչպես պախրա-բզեզնե՞րը կամ ռնգեղջյուր-բզեզ-նե՞րը:

– Այո, ինչպես նրանք կամ էլ մայիսյան բզեզները, – տխուր ասաց զատիկը:

– Եղբայր, դա լուրջ երազանք է: Անկեղծ ասած, ես էլ մի մեծ ու նվիրական երազանք ունեմ, – ասաց որդը: – Ես ուզում եմ գեղեցիկ թիթեռ դառնալ: Որպես կանոն, վաղուց պիտի դարձած լինեի, մյուս բոլոր որդերն արդեն թիթեռ են դարձել, բայց ես չեմ կերպարանափոխվում, թիթեռ չեմ դառնում: Անընդհատ ուտում եմ, որ շուտ դառնամ թիթեռ, բայց չի ստացվում: Երևի սխալ որդ եմ:

– Իսկ միգուցե դա նրանից է, որ դու անհրաժեշտ չափից էլ շա՞տ ես ուտում, – ասաց Լեոն՝ նկատելով նաև, որ Ջագուն չափից շատ է օգտագործում «անկեղծ ասած» արտահայտությունը: Երևի Ջագուին թվում էր, թե այդպես ասելով իր խոսքն ավելի համոզիչ էր:

– Չգիտեմ, Լեո, արդեն ինչքան ժամանակ է՝ չեմ դառնում թիթեռ և, անկեղծ ասած, վշտից հա՛ կրծում ու կրծում եմ տերևները, – ասքերը լցնելով՝ ասաց հուսահատված որդը:

– Լսի՛ր, Ջագու, անկեղծ ասած, – ասաց Լեոն՝ զգալով, որ ինքն էլ վարակվեց որդից ու ակամա սկսեց օգտագործել «անկեղծ ասած» արտահայտությունը: – Ինձ թվում է, որ ես գիտեմ՝ քեզ ինչպես օգնել: Ես մի բարեկամուհի ունեմ, ինձ շատ մտերիմ թիթեռ է, Քեթրին է անունը: Նա ինձ պատմել է, թե ինչպես է դարձել թիթեռ, քանի որ ես էլ առաջ չգիտեի, թե դա ինչպես է տեղի ունենում: Բանն այն է, որ հիմա դու թրթուր ես, տերևակեր թրթուր: Բոլոր թիթեռները նախ լինում են թրթուր, հետո, երբ արդեն թրթուրը հասուն է դառնում, բարձրանում է ծառերի, ցանկապատերի կամ պատերի վրա, զցում վրայի մաշկը և դառնում հարսնյակ:

– Իսկ ի՞նչ է հարսնյակը, – հետաքրքրվեց Ջագուն:



– Դա յուրօրինակ պարկ է: Դրանում տեղի է ունենում քո առաջին կերպարանափոխությունը: Ուրեմն, դու կպատես քեզ թաղանթով և կդառնաս հարսնյակ: Անկեղծ ասած՝ չգիտեմ, թե ինչպիսի հարսնյակ կլինես: Քեթրինը նկարագրում էր, որ հարսնյակներն ասես զմռսված թիթեռներ լինեն՝ իրենց ծալված ոտիկներով, մարմնին կպած նուրբ բեղիկներով: Կան հարսնյակներ, որ շատ զարմանահրաշ են, նրանք ո՛չ թրթուրի են նման, ո՛չ էլ որևէ թիթեռի և ամբողջովին ծածկված են սրածայր ելուստներով ու փշերով: Ինչևէ, երբ լինես հարսնյակում, դու ո՛չ կուտես, ո՛չ կշարժվես, կարգն է այդպես: Այդտեղ ներսում կընթանա քո երկրորդ կերպարանափոխությունը. դու կնախապատրաստվես իսկական թիթեռ դառնալուն: Եվ ահա, հարսնյակից դուրս գալուց հետո դու կդառնաս գեղեցիկ ու նուրբ թիթեռ: Ճիշտ է, թևերդ սկզբում կլինեն փոքր ու փափուկ, բայց ոչինչ՝ դու մի քանի ժամ կնստես միևնույն տեղում, մինչև թևերդ ուղղվեն ու ամրանան: Գիտեմ, որ դժվար է, սակայն թիթեռ այդպես են դառնում, այլ կերպ հնարավոր չէ:

Ջագուն ուշադիր լսում էր: Նրան թվում էր, թե թիթեռ դառնալու համար նա պիտի որքան հնարավոր է շատ ուտի բարդու տերևները, մինչդեռ մինչև թիթեռ դառնալը դեռ երկար ճանապարհի կար: Նա լսե՛ց, լսե՛ց ու վերջում ուրախ ասաց.

– Ինչքա՛ն շնորհակալ եմ քեզ, եղբայր, ինչքա՛ն օգնեցիր ինձ, Դու ինձ անգին օգնություն ցույց տվեցիր: Վերջապե՛ս ես գտա թիթեռ դառնալու ճանապարհը: Այ, կտեսնես, որ ես անպայման կդառնամ մեծ ու գեղեցիկ թիթեռ: Սիրելի Լեո, իմ լավ եղբայր, ես էլ քեզ եմ ուզում օգնել, սակայն, անկեղծ ասած, չգիտեմ՝ ինչպես: Կարող եմ խորհուրդ տալ, որ իմ պես ծառի տերևներ շատ ուտես, սակայն դու դրանցով չես սնվում:

Գիտես, այս անտառում կա մեկը, մի մեծ բզեզ, ով հաստատ կիմանա քո հարցի պատասխանը: Նա անտառի իմաստունն է:

– Ո՞վ է նա: Գիտե՞ս ինչու եմ հարցնում: Ես այդպիսի մի «իմաստունի» գտա, մի տիզ էր, բայց պարզվեց, որ ոչ մի իմաստուն էլ չի, պարզապես պարծենկոտի մեկն է: Իսկ ես նրան գտնելու համար երկար ճանապարհ անցա:

– Չէ՛, չէ՛, իմ ասած իմաստունը կեղծ չի, նա բնակվում է ամենաիմաստուն, ամենագորեղ ու հաստաբուն ծառերից մեկում՝ կաղնու փչակում: Իմաստուն ծառի վրա իմաստուն բզեզ է ապրում: Անտառում նրան բոլորը գիտեն:

– Ի՞նչ տեսակի բզեզ է նա, – հարցրեց Լեոն:

– Նա կաղնու մեծ երկարաբեղիկ է կամ կաղնու մեծ փայտահատ, իսկ անտառում նրան բոլորը կոչում են Կաղնու իմաստուն:

– Իսկ ի՞նչ է նրա անունը:

– Ալեքսանդր, Ալեքսանդր իմաստուն, – ասաց որդը: – Գիտես, ես հպարտ եմ, որ ապրում եմ նրա հետ նույն անտառում: Բոլոր միջատների մեջ նա առանձնանում է: Այդ տարեց իմաստունը մեր անտառի միջատների պարծանքն է:

– Դե, ասա ինչպե՞ս գտնեմ նրան:

– Լեո, նա ապրում է հինավուրց, բազմադարյան ու մեծ մի կաղնու վրա, հենց որի կեղևում էլ ծնվել է: Կաղնու երկարաբեղիկները ձվերը դնում են ծառի կեղևի մեջ: Թրթուրը երեքից չորս տարի զարգանում է ծառի բնում: Նրա դեղին թրթուրը հասնում է առեղի չափերի՝ մինչև ինը սանտիմետրի:

– Իսկ դա ինչքա՞ն է:

– Դա քեզանից շա՛տ-շա՛տ մեծ է, սակայն, անկեղծ ասած, չգիտեմ, թե ինչքան է, – ասաց որդն ու շարու-

նակեց:– Հասուն փայտահատ բզեզն էլ է շատ մեծ՝ մինչև հինգ սանտիմետր: Չհարցնես, դա էլ չգիտեմ, թե ինչքան է, սակայն գիտեմ, որ էլի շատ մեծ է: Հասուն բզեզի փայլուն, սև վերնաթևերն ասես թիկնոց լինեն վրան, իսկ երկար բեղերը շոշափում են ամեն բան:

– Նա կիմանա՞ իմ հարցի պատասխանը:

– Անպայման, այդպիսի բան չկա, որ նա չիմանա: Եվ, բացի այդ, նա շատ բարեկիրթ, խելացի բզեզ է և երբեք չի նեղացնում իրենից փոքրերին:

– Ո՞րեմն ես անպայման պիտի գտնեմ Կաղնու իմաստունին,– վճռական ասաց Լեոն:

– Գտիր իմաստուն այդ հսկային: Ես համոզված եմ, որ Ալեքսանդր իմաստունը կօգնի քեզ:

Լեոն շատ ոգևորվեց, որ վերջապես կգտնի մեկին, ով իսկապես կօգնի՝ գտնելու իրեն այսքան ժամանակ տանջող հարցի պատասխանը:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

*Որտեղ գատիկն իմանում է Արևելքի մասին*

Շնորհակալություն հայտնելով Ջագուին և մաղթելով, որ նա որքան հնարավոր է շուտ թիթեռ դառնա, գատիկը թռավ մեծ կաղնու ուղղությամբ: Սակայն քանի որ մինչև կաղնուտը դեռ շատ կար, ուստի նա ճանապարհին վայր իջավ և նստեց մի թփի տերևին՝ հանգստանալու ու մի քիչ սնվելու համար: Դա մեծ մի թուփ էր, որի տերևների վրա վխտում էին մանրագույն լվիճներ: Հազիվ էր նա համտեսել մի քանի լվիճ, երբ թփի ներքևից լսեց.

– Լա՛վ է, առա՛ջ, մեկ քայլ հե՛տ, հարվա՛ծ, պաշտպանվի՛ր, ոտքո՛վ հարված, դեմքդ թաթով ծածկիր:

Լեոյին հետաքրքրեց, իհարկե, թե ինչ է կատարվում ներքևում, ու նա ցողունով ցած իջավ: Երբ հասավ գետնին, տեսավ, որ թփից քիչ հեռու արևելյան մարտարվեստի հագուստով մի մեծ աղոթարար դաս է տալիս փոքրիկ աղոթարարներին: Նրանք ուսանում էին մարտական արվեստ: Դե, իսկ աղոթարարների առջևի վերջույթները շատ հարմար էին այս կամ այն շարժումն անելու համար:

Լեոն մոտեցավ:

– Բարև ձեզ, – ասաց նա:

– Տղանե՛ր, մենք հյուր ունենք, ողջունեք հյուրին, – ասաց ուսուցիչը, և բոլորը գլուխները խոնարհեցին՝ ի նշան հարգանքի:

– Այդ ի՞նչ եք անում, – հարցրեց գատիկը:

– Փորձում ենք տիրապետել ինքնապաշտպանության և հարձակման արվեստին: Սա մարտարվեստի մեր դպրոցն է, – ասաց ուսուցիչը: – Ի դեպ, դպրոցը նորաբաց է, այնպես որ ընդունելությունը շարունակվում է, կարող ես միանալ մեզ:

– Չէ, շնորհակալ եմ, – ասաց գատիկը: – Ես փնտրում եմ կաղնու իմաստուն բզեզին, կասե՞ք ինձ, ինչպե՞ս կարող եմ գտնել նրան:

– Իհարկե, կասենք: Ալեքսանդր իմաստունին բոլորն են ճանաչում: Լսիր, ուրեմն, ճատիկ..., – սկսեց աղոթարար ուսուցիչը:

Մեկ էլ հանկարծ թփերի միջից մի ուժեղ շրշուն լսվեց ու դուրս եկավ այն չար խաչասարդը, որի ճիրաններից Լեոն փրկել էր Քեթրինին: Չայրացած խաչասարդը, չկարողանալով զսպել իր ցասումն ու չհամակերպվելով խայտառա-

կուրթանը, հետապնդել էր խեղճ գատիկին և միանգամից ճանկեց նրան ու բարձրացրեց վեր:

– Ահա՛, վերջապես բռնեցի քեզ, երկար ժամանակ է, ինչ հետապնդում եմ քեզ և հիմա ցույց կտամ, թե ինչ է նշանակում գայրացնել ինձ:

– Բա՛ց թողեք ինձ, – գոչում էր գատիկը: – Օգնեցե՛ք, օգնեցե՛ք:

– Էլ ոչ ոք քեզ չի օգնի, դու իմ ճանկերում ես, ես քեզ հիմա կխժռեմ:

Մեկ էլ այդ վայրկյանին իր գլխակրծքի վրա գտնվող չորս գույգ աչքերով խաչասարդը տեսավ, որ իր առջև կանգնած են մարտական դիրք ընդունած և իրեն արդեն գայրացած հայացքով նայող երկու տասնյակից ավելի աղոթարարներ: Դա դեռ բավական չէ, նրանցից մեկն էլ՝ խոշոր մի աղոթարար, թաթերով ինչ-որ շարժում արեց ու բացականչեց.

– Առա՛ջ տղաներ, փրկենք գատիկին և ցույց տանք այս անկոչ հյուրին արևելյան մարտարվեստի մեր վարպետությունը:

Եվ բոլոր այդ աղոթարարները հարձակվեցին սարդի վրա, որն ապշել ու վախից քար էր կտրել՝ գամվելով տեղում: Աղոթարարները թռչում էին նրա վրա, մարտական հարվածներ հասցնում՝ մեկ թաթերով, մեկ ոտքերով, մեկ իրանով, մեկ գլխով: Նրանք անհասկանալի ծայներ էին արձակում ու շարունակում հարվածել: Սարդը փորձում էր պաշտպանվել, սակայն դա իր ուժերից վեր էր: Բաց թողնելով գատիկին՝ նա մի կերպ փախավ վիրավոր վիճակում: Այնպես փախավ, որ հետքն անգամ կորավ:

Աղոթարարները բարձրացրին վայր ընկած Լեոյին:

– Շնորհակալ եմ, – ասաց Լեոն: – Դուք փրկեցիք ինձ, շատ շնորհակալ եմ:

– Չարժի, ճստիկ, ուրախ եմք օգնելու, – գոհ ասաց ուսուցիչը: – Տեսա՞ր, թե ինչ տղաներ ունեն, ինչ սաներ են, ամեն մեկը՝ մի Բրյուս Լի:

– Բրյուս Լի՞, – զարմացավ Լեոն, – ի՞նչ է նշանակում Բրյուս Լի:

– Դա մի մարդ էր, փոքրիկս, ով անգերազանցելի էր արևելյան մարտարվեստի իր վարպետությամբ: Նա այս մարտարվեստի բոլոր ժամանակների արքան է:

– Իսկ Դուք որտեղի՞ց գիտեք նրա մասին, – բնականաբար հարց ծագեց զատիկի մոտ:

– Լսիր փոքրիկ, բանն այն է, որ ես ժամանակին ապրում էի տեռարիումի մեջ, որտեղ մի ուրիշ աղոթարար էլ կար:

– Տեռարիո՞ւմ, դա ի՞նչ է:

– Դա ապակե, տարբեր չափերի ուղղանկյուն մի տարա է, կարելի է ասել՝ ապակե տուփ, որը պատրաստում են մարդիկ և իրենց հաճույքի, հետաքրքրության կամ ուսումնասիրությունների համար մեջը պահում զանազան մանր կենդանիներ. ակվարիումը նախատեսված է ձկների ու ջրային այլ կենդանիների, իսկ տեռարիումը՝ սողունների, երկկենցաղ կենդանիների, միջատների համար:

Ինչպես ասացի, ինձ պահում էին տեռարիումում՝ մի ուրիշ աղոթարարի հետ: Ասեմ, որ նա սովորական աղոթարար չէր, այլ էկզոտիկ տեսակ էր, որին Չինաստանում ճանապարհորդելիս բռնել էր այդ տեռարիումի տերն ու տուն բերել: Կարճ ժամանակ անց մենք մտերմացանք: Չինական այդ աղոթարարն էլ հենց պատմեց ինձ Հոնկոնգ քաղաքում ժամանակին բնակված և համաշխարհային

հռչակ ունեցած իր հայրենակից Բրյուս Լիի ու նրա վարպետության մասին: Բրյուս Լին նրա կուռքն էր: Այդ աղոթարարը դարձավ իմ եղբայրը, մենք շատ էինք մտերմացել, նա ինձ սիրով արևելյան մարտարվեստ սովորեցրեց: Տանտերը, նայելով տեռարիումին, կարծում էր, թե մենք մշտապես կռվում ենք իրար հետ, այնինչ իրականում մենք մարզվում էինք՝ զարգացնելով մարտարվեստի հմտությունները: Եվ ահա, մի օր, մտածելով, թե մենք շատ ենք նեղացնում իրար և կարող ենք վնասել միմյանց, տեռարիումի տերն ինձ հանեց ու բաց թողեց: Իմ նման սովորական աղոթարար նա կարող էր բռնել երբ կամենար, իսկ այդ հազվագյուտ տեսակի աղոթարարը շատ թանկ էր տիրոջ համար: Դրա համար էլ նա հանգիստ բաժանվեց ինձնից, իսկ Չինաստանից բերված աղոթարարին՝ իմ լավագույն ընկերոջը, թողեց իր մոտ: Ես եկա այստեղ ու հիմա, շնորհիվ իմ ընկերոջ, իմ սեփական դպրոցն եմ հիմնել: Կարոտել եմ ընկերոջս՝ Աղոթարարսան Ձյուն Տյաոյին:

– Ի՛նչ դժվար արտասանվող անուն է, – մտածեց Լեոն և փորձեց կրկնել, – Աղոթարարսան Տյուն Ձյուն... Ձյուն Դյուն... Աղոթասան... Ծյան Ծյուն Տյաո... Աղոթարարսանսան Տյաո...

Տեսնելով, որ իր մոտ չի ստացվում այնպես, ինչպես ուսուցիչ աղոթարարի մոտ, գատիկն ասաց.

– Ավելի լավ է միայն Դուք անունով հիշեք նրան:

– Ա՛խ, տեսնես հիմա ինչպե՞ս է իմ ընկերը: Շատ եմ կարոտել իմաստուն ու խելացի Աղոթարարսան Ձյուն Տյաոյին: Երանի հնար լիներ նրան տեսնելու կամ գոնե իմաց տալու, որ իր ընկերը՝ ես, ողջ եմ, գործերս էլ լավ են:

– Ի դեպ, ներեցեք, սակայն ես կուզենայի մեկ ուրիշ

իմաստունի մասին նորից հարցնել: Դուք կասե՞ք, թե ինչպես գնամ փայտահատ բզեզի մոտ:

– Դե, իհարկե, ճատիկ,– ասաց աղոթարարը և հանգամանորեն բացատրեց Կաղնու իմաստունի տեղը:

## ԳՐՈՒՄ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոյի առջև բացվում է ջրային անեզր աշխարհը*

Մինչև մեծ կաղնուն հասնելը Լեոն պիտի անցներ լճակի կողքով: Դա տեղ-տեղ գրեթե ճահճացած բնական մի ջրամբար էր, որ գտնվում էր անտառի եզրին: Այստեղ ապրում էին ոչ միայն միջատներ, այլև՝ երկկենցաղներ, ձկներ, տրիտոններ, տզրուկներ, խխունջներ:

Լեոն թռավ-թռավ ու հասավ եղեգների: Նա տեսավ, որ ջրամբարից այն կողմ վիթխարի ծառեր են ու հասկացավ, որ դա է հենց կաղնուտը, և հենց այդտեղ էլ՝ կաղնիներից ամենատարիքով կաղնու վրա, ապրում է իմաստուն բզեզը:

Սակայն, մինչ անտառ հասնելը զատիկը նախ պիտի անցներ այս ջրամբարը:

Եվ ահա, երբ նա արդեն բավականին մոտ էր այդ լճակին, նկատեց, որ օդում թռչում են բազմաթիվ մոծակներ:

– Ներեցեք,– դիմեց նա նրանցից մեկին:– Դուք չե՞ք ասի՝ լճակը շա՞տ հեռու է:

– Բարձրացիր վերև ու կտեսնես,– կոպտորեն ասաց մոծակներից մեկն ու թռավ-հեռացավ:

Ջատիկը մի փոքր վերև թռավ ու ի՛նչ տեսնի, ջրային մի մեծ տարածք, որ երիզված էր բարձր եղեգներով: Ճահճացող այդ լճակը շրջապատված էր իրեն հատուկ բուսականու-



թյամբ՝ եղեգ, կկվավուշ, բոշխ և այլն: Զատիկը նկատեց, որ շուրջբոլորը ամենից շատ տարածված էին տարբեր մամուռներն ու քարաքոսները:

Եվ այսպես, Լեոյի առջև բացվեց ճահճացող լճակը՝ իր բոլոր բնակիչներով: Ամենուրեք լսվում էին բզզոցներ ու տզզոցներ. դա մոծակներն ու ճպուռներն էին, որ թռչում էին շուրջբոլորը:

– Այդ ո՞ւմ ես փնտրում, – լսվեց գատիկի գլխավերևում:

Լեոն վեր նայեց ու տեսավ մի գեղանի ճպուռի:

– Բարև ձեզ:

– Բարև փոքրիկ, – ասաց ճպուռն՝ իր նուրբ, կանացի ձայնով:

– Ներեցեք, կաղնուտը լճակի հակառակ կողմնում է: Չե՞ք ասի, ես կարող եմ թռչել-անցնել լիճը, թե՞ այն շատ մեծ է:

– Քեզ համար այն բավական մեծ է, և կարծում եմ, որ միայնակ չես կարողանա թռչելով կտրել-անցնել լիճն ու մյուս ափ հասնել, քանի որ երկար թռիչքի ժամանակ կիոզնես ու կընկնես ջուրը: Իսկ այդ ժամանակ, նախ, մեծ է հավանականությունը, որ քեզ կքաշի անմիջապես ջրի հատակը, քանի որ լճակում ճահճացած մասեր կան, և հետո, ջրում ապրում են բազմաթիվ գիշատիչներ, որոնք տեղում կուտեն քեզ: Ես կարծում եմ, որ ավելի լավ է չփորձես բախտդ, այլապես քո թռիչքը տխուր ավարտ կունենա:

Լեոն ահաբեկված լսում էր:

– Այդ դեպքում, չե՞ք ասի, թե ինչպես հասնեմ լճակի մյուս ափը: Ես անպայման պիտի գտնեմ Կաղնու իմաստունին:

– Ալեքսանդրի՞ն:

– Այո, նրան, ես հարցով եմ գնում նրա մոտ:

– Այդ դեպքում, ես կօգնեմ քեզ: Նստիր իմ մեջքին, և ես կհասցնեմ քեզ լճի մյուս կողմը:

– Իսկ ես Ձեզ նեղություն չե՞մ պատճառի, – համեստորեն նկատեց Լեոն:

– Ամենևին, ես հաճույքով կօգնեմ քեզ, ինձ համար առանձնապես դժվար չէ թռչել-անցնել մյուս ափ. օրական մի քանի անգամ ես մի ափից մյուսն եմ թռչում:

Լեոն թռավ ու նստեց ճպուռի մեջքին:

– Շատ ներողություն, – ասաց նա ճպուռին: – Չե՞ք ասի, թե ինչպես դիմեմ Ձեզ:

– Դորոթեա: Քո անունն ի՞նչ է:

– Լեո: Տիկին Դորոթեա, շատ շնորհակալ եմ Ձեզ, Դուք շատ բարի եք:

– Խնդրեմ, Լեո: Դե՛, հարմար տեղավորվիր, հիմա թռչելու եմք:

Ճպուռն արագ թափահարեց իր երկու գույգ երկար ու գեղեցիկ թևերը և թռավ՝ մեջքին տանելով Լեոյին: Թռիչքի ընթացքում Դորոթեան սկսեց ծանոթացնել գատիկին լճակի բնակիչներին:

– Տե՛ս, գատիկ, այնտեղ նկատվող փոքրիկ, գորշ ամպը գոյացել է մժղուկներից: Նրանց այստեղ կարելի է անգամ հազարներով հաշվել:

Այդ վայրկյանին ջրի երեսին երևաց մի մեծ, գորշ-շագանակագույն գունդ ու նորից կորավ՝ տեղը ջրի օղակներ թողնելով:

– Այդ ի՞նչ էր, – զարմացած հարցրեց Լեոն:

– Լողաբզեզն էր, – պատասխանեց ճպուռը:

– Լողաբզե՞զ, – զարմացավ գատիկը:

– Այո, դա մի մեծ ջրային բզեզ է:

– Փաստորեն, մեծ բզեզներ ապրում են նաև ջրում,–  
բարձրաձայն մտածեց Լեոն:

– Ի՞նչ,– հարցրեց Դորոթեան:

– Ոչինչ, ոչինչ:

– Նայիր, տեսնո՞ւմ ես ջրում լողացող մեծ, կլոր գլխով ու  
լողապոչով այս տարօրինակ կենդանիներին:

– Այո,– հետաքրքրվեց Լեոն:

– Դրանք շերեփուկներ են: Նրանք հետո լճագորտեր են  
դառնում:

– Լճագորտն է՞լ է բզեզ,– միամիտ հարցրեց Լեոն:

– Դե, ո՞չ, ինչ ես ասում: Լճագորտը և առիասարակ՝ բոլոր  
գորտերը միջատներ չեն, նրանք երկկենցաղներ են: Լճում  
գորտեր շատ կան, նրանք այստեղի մշտական բնակիչներն  
են: Լսո՞ւմ ես նրանց անդադար ձայնը:

Եվ իսկապես, Լեոն ականջ դրեց ու լսեց միալար հնչող  
ձայների մի սիմֆոնիա: Շուրջբոլորը լսվում էր «կվաաաա՛,  
կվաաա՛...»:

Ճպուռն ու գատիկն արդեն հասել էին լճակի կենտ-  
րոնական մասը: Լեոն ամուր բռնել էր ճպուռի մեջքից և  
զարմացած նայում էր շուրջը՝ փորձելով որքան հնարավոր է  
շատ բան իմանալ ջրային այս զարմանահրաշ բնակիչների  
մասին:

– Նայիր այս կողմ,– ասաց ճպուռը:– Տեսնո՞ւմ ես, դա  
կոճախխունջն է, իսկ ջրի մեջ տեսա՞ր այն ավելի մեծ  
խխունջին, դա էլ լճախխունջն է:

Լեոն հափշտակված նայում էր լճակի բնակիչներին:  
Աչքին արդեն ամեն գունդ խխունջ էր թվում:

– Լե՛ո, փոքրի՛կ,– թռչչքի ընթացքում շարունակեց Դորո-  
թեան:– Ջրի մեջ, իսկապես, ապրում են քեզ համար շատ

վտանգավոր կենդանիներ: Լճակում ապրող իմ թրթուրն էլ է շատ վտանգավոր, ունի սարսափելի ծնոտներ ու խժռում է ինչ պատահի, անգամ՝ մանր շերտփուկների: Տեսա՞ր, ջրի մեջ, հենց նոր անցավ. դա իմ թրթուրն էր: Նկատեցի՞ր, թե ինչ կայծակնային արագությամբ ջրի վերնամասում նա բռնեց շերտփուկին, որ ուտի:

Լեոն գարմանքից քար էր կտրել: Նա չէր պատկերացնում, թե ինչքան հետաքրքիր, գրավիչ ու վտանգներով լի է ջրային միջավայրում ապրող միջատների կյանքը:

Այդպես գրուցելով նրանք հասան լճակի մյուս կողմը:

Լեոն ցած թռավ ու խորին շնորհակալություն հայտնեց Դորոթեա ճպուռին՝ օգնության համար:

– Տիկին Դորոթեա, երբեք չեմ մոռանա, թե ինչպես օգնեցիք ինձ անցնել լճակը:

– Խնդրեմ, փոքրիկ, հաճույքով: Գտիր Ալեքսանդր իմաստունին: Նա հենց այս կաղնուտում է ապրում, – ասաց ճպուռն ու հետ թռավ դեպի լճակի մյուս ափը:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոն հանդիպում է Կաղնու իմաստունին*

Լեոյի առջև բացվել էր կանաչով լի անտառի հրաշալի տեսարանը: Խորքում լսվում էին անտառային թռչունների անուշ ծվվոցները:

Լեոն թռավ կաղնիների ուղղությամբ, գտավ դրանցից ամենախոշորն ու հաստաբունը և մոտեցավ ծառին: Վիթխարի կաղնին ասես դարպաս լիներ դեպի մեծ անտառ: Լեոն թռավ այդ ծառի ճյուղին և մոտեցավ մի փոքր փչակի, որտեղ

էլ, իր համոզմամբ, պիտի լինէր իմաստունը: Փչակում մութ էր: Ընդհանրապէս, շուրջբոլորն էր ստվերի տակ, քանի որ ծառերի ճյուղերի ու տերևների ստվերը ծածկել էր գետինն ու թփերը:

Լեոն գլուխը մտցրեց փչակի մեջ:

– Է հե՛յ, – գոչեց նա:

– Հե՛յ, հե՛յ, – լսվեց նրա արծազանքը:

– Ներեցեք, – բարձրածայն ասաց զատիկն՝ իր արծազանքը շփոթելով ուրիշի հետ:

– Ալեքսանդր իմաստունն այստե՞ղ է ապրում:

– Պրո՛ւմ, պրո՛ւմ, – լսվեց փչակում:

– Ինչ տարօրինակ լեզվով է խոսում փչակի այս բնակիչը, – մտածեց Լեոն:

Ջատիկը դեռ երկար կխոսեր իր թվացյալ, տարօրինակ զրուցակցի հետ, սակայն անսպասելի ոտնաձայներ լսվեցին. ինչ-որ մեկը դուրս էր գալիս փչակից: Լեոն հետ-հետ գնաց: Իր բարձրածայն զրույցը, հավանաբար, լսել էր փչակի բնակիչը և, ամենայն հավանականությամբ, դա հենց Կաղնու իմաստունն էր: Ոտնաձայներն ավելի էին ուժեղանում: Սուք փչակի միջից հանկարծ երևաց մի բեղ, հետո՝ մյուսը: Բեղերն այնքան երկար էին, որ դեռ չէր երևում բզեզի գլուխը: Վերջապէս, բեղերից հետո, հայտնվեց բզեզի սև գլուխը, հետո՝ սև իրանը, և շուտով փչակից ամբողջովին դուրս եկավ մի մե՛ծ, երկարամեջք, սևափայլ բզեզ:

– Բաասարև Ձեզ, – փոքր-ինչ վախեցած՝ ասաց Լեոն:

Վախից նրա թաթիկներն արդեն մի փոքր խոնավացել էին:

– Բարև, – թավ ու թովիչ ձայնով ասաց իմաստունը:

– Նեեերեցեք, Դուուուո՞ւք եք Ալեքսանդր իմաստա-տունը:

– Ես եմ, – ասաց բզեզը, – սակայն ինչո՞ւ ես այդպես հուզված ու վախեցած: Ինչո՞ւ ես դողում: Հանգստացի՛ր փոքրիկ, ասա տեսնեմ՝ ի՞նչ է պատահել:

– Պարոն Ալեքսանդր, – համարձակությունը փոքր-ինչ վերագտնելով՝ ասաց Լեոն: – Ես Լեոն եմ, մի հարցով պիտի Ձեզ դիմեմ ու եթե անհանգստություն չեմ պատճառի, ապա խնդրում եմ, որ լսեք ինձ:

– Ասա տեսնեմ ի՞նչ է եղել, Լեո: Լսում եմ քեզ, փոքրիկ գատիկ:

– Ինչպե՞ս, Ղուք գիտե՞ք, որ ես գատիկ եմ, – զարմացավ Լեոն:

– Ես բոլոր կենդանիներին էլ գիտեմ: Եթե դու հասել ես այստեղ, ուրեմն շատ կարևոր հարցով ես եկել: Ասա, լսում եմ, փոքրիկս:

Լեոն շատ ուրախացավ Կադնու իմաստունի սիրալիր, բարի վերաբերմունքից և ոգևորված, շունչը պահած, սկսեց պատմել իր հետ կատարվածը:

– Սպասի՛ր, փոքրիկ, մի՛ շտապիր, պատմիր առանց շտապելու և հուզվելու, – հանգիստ ասաց Ալեքսանդրը:

Լեոն պատմեց նրան ամեն ինչ. թե ինչպես է երազանք պահել՝ տեսնելով մայիսյան բզեզին, թե ինչպես է սկսվել իր ճամփորդությունը, ինչպես է հայտնվել մրջյաննոցում, այնուհետև՝ փեթակում, ինչպես է անցել լիճը և եկել անտառ: Մի խոսքով, ամենայն մանրամասնությամբ պատմեց իր հետ պատահած բոլոր դեպքերի ու իրեն հանդիպած բոլոր կենդանիների մասին:

Ալեքսանդր իմաստունն ուշադիր և համբերությամբ լսեց, և երբ գատիկը վերջացրեց, ասաց.

– Եվ այսպես, դու ուզում ես մեծ բզեզ դառնալ:

– Այո, ես երագում եմ այդ մասին, Ձեզ նման մե՛ծ բզեզ եմ ուզում դառնալ, որպեսզի ինձ էլ ճանաչեն ու սիրեն, ինձ հետ էլ հաշվի նստեն ու չանտեսեն այն բանի համար, որ այսքան փոքր եմ: Դուք կարո՞ղ եք օգնել ինձ, գիտե՞ք, թե ես ինչպես վերածվեմ մեծ բզեզի:

Կաղնու իմաստուն բզեզը ժպտաց բեղի տակ: Նա իր բարի հայացքով նայում էր այդ անկեղծ գատիկին: Քիչ անց ասաց.

– Լսիր, փոքրիկ Լեո, քո հարցի պատասխանը ես գիտեմ, սակայն ես ուզում եմ, որ դու ինքդ գտնես այդ պատասխանը, ինքդ գաս դեպ քո իսկ հարցի բացահայտմանը: Ասեմ միայն,– խորհրդավոր ծայնով շարունակեց Ալեքսանդրը,– որ քո հարցի պատասխանը թաքնված է մարդկանց աշխարհում: Դու կգտնես քեզ հուզող հարցի պատասխանը՝ հանդիպելով մարդկանց:

– Մարդկա՞նց,– զարմացավ Լեոն՝ արդեն որերորդ անգամ լսելով այդ էակաների մասին:– Իսկ նրանք վտանգավոր չե՞ն:

– Դա էլ կիմանաս, երբ հանդիպես:

– Իսկ ես ինչպե՞ս գտնեմ մարդկանց:

– Հիմա ես քեզ կասեմ: Ուրեմն այսպես, ուշադիր լսիր: Երբ դուրս գաս անտառից, ապա հեռվում կտեսնես մշակովի մի դաշտավայր, այդտեղ ցորեն է աճում: Ցորենը ցանում են մարդիկ, որ հետո դրանից իրենց համար սնունդ՝ հաց պատրաստեն: Կթռչես ու կանցնես ցորենի արտն ու կտեսնես կարտոֆիլի մշակովի դաշտ: Երբ դա էլ անցնես, ապա մի շա՛տ երկար ճանապարհ կտեսնես, որն ուղիղ տանում է դեպի մարդկանց աշխարհը. դա քաղաք տանող ճանապարհն է: Երբ հասնես քաղաք, ապա կհանդիպես մարդկանց և կգտնես քո հարցի պատասխանը:

Լեոն ուշադիր լսեց, իսկ հետո խորին շնորհակալություն հայտնեց բարի իմաստունին: Լեոն հասկացավ, որ նա, իրոք, ճիշտ է. ավելի լավ է սեփական ուժերով հարցի պատասխանին հանգել:

Կաղնու իմաստունն իր արժեքավոր խորհրդով ցույց տվեց ճիշտ ճանապարհը: Փաստորեն, միայն մարդկանց աշխարհում Լեոն ինքն իր համար կգտներ իրեն այսքան ժամանակ տանջող հարցի այդքան սպասված պատասխանը, կարևորը՝ սեփական ուժերով:

### ԳՆՈՒՄ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոն հայտնվում է մեծ ու խորհրդավոր անտառում ու նաև շատ բան իմանում միջատների անձնական կյանքի մասին*

Լեոն դուրս եկավ կաղնուտից և հայտնվեց անտառի խիտ թավուտում:

Անտառում մոլորվելը շատ հեշտ էր, և Լեոն հենց արդեն մոլորվելու ճանապարհին էր, երբ նկատեց մի փոքրիկ վաճառակետ: Հետաքրքրությամբ մոտեցավ: Վաճառակետի վերևում գրված էր «Անտառփոստ»: Ներքևում վաճառատեղան էր, իսկ դրա հետևում կանգնած էր մի դմբուզ իշամեղու: Նա վաճառողն էր այն ամենի, ինչ դրված էր սեղանին:

Լեոն ավելի մոտեցավ:

– Բարև, բարեկամ: Մոտեցիր, նայիր, թե ինչեր կան, սրտիդ ուզած գրականությունը, էժան, շա՛տ էժան գներով,– իր ապրանքը վաճառելու մեծ ցանկությամբ ու վարպետությամբ՝ զատիկին աշխուժորեն դեպ իրեն գրավեց իշամեղուն:



– Բարև Ձեզ, ես առաջին անգամ եմ այստեղ և մոլորվել եմ: Ինչպե՞ս կողմնորոշվեմ այս մեծ անտառում:

– Բարեկա՛մ, դու ճի՛շտ տեղ ես եկել: Ամենաթարմ ու վերջին հրատարակություններն իմ մոտ են, խնդրե՛մ՝ թերթերի այսօրվա համարները, ամսագրեր, բուկլետներ, քարտեզներ:

Եվ իսկապես, գատիկը սկսեց նայել, թե ինչեր են դրված սեղանին: Այստեղ նա տեսավ բազմաթիվ ու բազմատեսակ բրոշյուրներ, թերթեր, գրքեր, նկարազարդ բուկլետներ՝ անտառի ու դրա բնակիչների մասին, փոստանիշներ, օրացույցներ, պաստառներ: Լեոն հաճելիորեն զարմացավ՝ սեղանին տեսնելով Ադա թագուհու «Իմ հուշերը» վերնագրով գիրքը, ինչպես նաև Ցեց Մուշտակի «Իմ վերջին պահարանը» վեպն ու բանաստեղծ Մորեխ Կայծակի «30 օր դաշտում» երկերի ժողովածուն: Սեղանին Լեոն նկատեց նաև Ալեքսանդր իմաստունի «Փրկենք անտառը» մենագրությունը:

– Ներեցեք, կարելի՞ է ծանոթանալ այս թերթին, – հարցրեց Լեոն՝ նկատելով հայտարարությունների մի գունազարդ շաբաթաթերթ:

– Իհարկե, վերցրու, նայիր, այս շաբաթվա համարն է:

Լեոն բացեց թերթը: Նա, նախ, սկսեց կարդալ ծանոթությունների մի քանի ուշագրավ հայտարարություններ: Ի դեպ, այդ հայտարարությունները տված միջատներն ապրում էին ամենատարբեր տեղերում.

*«Հասուն բզեզ եմ, երկարությունս՝ 3 սանտիմետր, քաշս՝ 30 գրամ, լավ կազմվածքով: Փնտրում եմ մինչև 70 գրամ քաշով փափիկ, հաճելի բզեզուհու՝ ընտանիք կազմելու նպատակով»:*

*«25 օրական բարետես, հաճելի արտաքինով, շեկ բեղերով թիթեռնիկ եմ, փնտրում եմ զուգընկերոջ, ցանկալի է՝*

մինչև 30 օրական, ծաղիկով ապահովված, կիրթ ու հաճելի արու»:

«Ցանկանում եմ ծանոթանալ կարմիր գույնի հանդեպ դրական տրամադրված ցանկացած որդի հետ: Դիմել Որդան կարմիրին»:

«Կծանոթանամ հաճելի, հետաքրքիր, կիրթ ու մաքրասեր բոռի հետ՝ ամուսնանալու ու ընտանիք կազմելու նպատակով: Այրի եմ, ապահովված եմ աշխատանքով, ունեմ կրթություն»:

«15 օրական, նուրբ, հաճելի արտաքինով, հումորի զգացումով խավարասեր եմ: Կծանոթանամ տարիքով մեծ խավարասերի հետ: Երիտասարդ խավարասերներին խնդրում եմ չանհանգստացնել»:

«Փնտրում եմ բարի տրամադրված էգ սարդի, որը բեղմնավորումից հետո ինձ չի ուտի: Ցանկալի է՝ հաճելի արտաքինով»:

«Ցանկանում եմ ծանոթանալ առնական, բարետես, հումորի զգացումով, աշխատանքով ապահովված բզեզի հետ: Մանրամասների համար դիմել կեչու փչակ»:

«Ամուսնանալու նպատակով փնտրում եմ աղբակիր բզեզի, ով հումորով է վերաբերվում մեր՝ աղբակիր բզեզներին, կյանքի բնույթին: Դիմել աղբակիր բզեզուհուն»:

Լեոն նկատեց, որ թերթում կա նաև իր նոր բարեկամ Ջագուի տեղադրած հայտարարությունը.

«Կծանոթանամ թիթեռ չդարձած բախտակից որդերի հետ՝ ընկերության նպատակով: Սեռը կարևոր չէ: Ջանգահարել բարդու ծառ»:

Կային նաև անշարժ գույքի գնման ու վաճառքի հայտարարություններ.

«Վաճառվում է երիցուկ՝ վերանորոգված, լի նեկտարով, դաշտի կենտրոնական մասում, տեսարան՝ դեպի լեռները: ՌՒՆԻ մշտական ջուր, ցողունը եվրավերանորոգված է: Գինը՝ պայմանագրային»:

«Վաճառվում է 3 սենյականոց փշակ: ՌՒՆԻ կապիտալ վերանորոգման կարիք: Արևկող է: Փջակն ունի ձայնամեկուսիչ համակարգ: Գինը՝ 3000 բլոճ»:

«Վարձով է տրվում սարդոստայն: Որսացանցը նոր է, ամուր, փորձված»:

«ԱՇԽԱՏԱՆՔ» բաժնում Լեոն կարդաց այսպիսի հայտարարություններ.

«Հասուն որդ եմ: Փնտրում եմ կրծողի աշխատանք: Կկրծեմ բարդու, կեչու, կաղնու, սոճու տերևներ: ՌՒՆԵՄ աշխատանքային մեծ փորձ. կրծել եմ անտառաեզրին աճող կաղնու գրեթե բոլոր տերևները»:

«Փնտրում եմ կամավոր՝ արյուն ծծելու նպատակով: Սադոմազոխիստներին խնդրում եմ չանհանգստացնել: Մոժակ»:

«Պահանջվում են բարետես, հաճելի արտաքինով 19-25 օրական թիթեռնիկներ՝ անտառի գիշերային ակումբում աշխատելու համար: Աշխատանքային փորձը՝ պարտադիր: Ընդունելության համար դիմել Մայր գիշերաթիթեռին: Ներկայացնել թևերի պատճեն ու մեկ լուսանկար»:

Լեոն կարդաց նաև մի հայտարարություն, որի հասցեն իրեն շատ ծանոթ էր.

«Պահանջվում է իրավաբանական բարձրագույն կրթությամբ և ոգելից խմիչքների հանդեպ սեր չունեցող մրջյուն: Փաստաթղթերը ներկայացնել մրջնանոց»:

– Հավանաբար մեղադրող կողմի այն հարբեցող մրջյունին աշխատանքից հեռացրել են, – մտածեց Լեոն և շարունակեց կարդալ:

*«Փնտրում եմ դայակի աշխատանք: Կիսնամեն ծվեր, թրթուրներ: Ռինեն դայակի մեծ փորձ»:*

Կային նաև արտասովոր հայտարարություններ.

*«Այլևս չեմ փնտրում դայակի աշխատանք: Կուշտ եմ ձեր թրթուրներից էլ, ձեզնից էլ»:*

*«Փնտրում եմ կամավոր միջատներ՝ ուտելու նպատակով: Դիմել Անկուշտ սարդին»:*

*«Վարձով են տրվում բարձրորակ թևեր, խայթեր, բեղեր: Մեծածախ գնումների համար դիմել խաչասարդին»:*

*«Կորցրել եմ ձախ բեղս: Գտնողին խոստանում եմ դրամական պարգև: Երկարաբեղիկ»:*

*«Գտել եմ ինչ-որ մեկի ձախ բեղը: Սպասում եմ դրամական պարգևին»:*

Լեոն նկատեց, որ հայտարարությունների շարքում կային շատ անսպասելի, զարմանալի, զատիկի երևակայության մեջ չտեղավորվող հայտարարություններ:

*«Էլ չեմ խոսում բռնի հետ»:*

*«Ես էլ քեզ հետ չեմ խոսում»:*

*«Փոքրիկ մրջյունին ծննդյան օրվա առթիվ շնորհավորում եմ մայրիկը, հայրիկը, տատիկը, պապիկը և տասը հազար մորաքույրները»:*

– Ներեցեք, – ասաց Լեոն, – Դուք ունե՞ք անտառի որևէ ուղեցույց:

– Այո, խնդրեմ, ահա, հրաշալի մի ուղեցույց է, սակայն Դու կարո՞ղ ես վճարել դրա համար:

– Ոչ, ես վճարելու բան չունեմ, – տխուր ասաց Լեոն:

– Այդ ի՞նչ շքանշան է մոտդ, այդ շքանշանը տուր ուղեցույցի փոխարեն: Շքանշաններ հավաքող մի թիթեռի գիտեմ: Այ, նա հաստատ կուրախանա՝ տեսնելով դա ու կարգին կվճարի դրա դիմաց:

– Ներեցեք, սակայն ես սա չեմ վաճառում, քանի որ այն շատ թանկ է ինձ համար: Այս շքանշանը մեղուները շնորհել են ինձ՝ իրենց փեթակին օգնելու համար: Ինձ շնորհվել է «Փեթակի պատվավոր բնակիչ» կոչումը:

– Իսկ Դու ի՞նչ ես արել փեթակի համար, որ արժանացել ես այդ կոչմանը:

– Ես զգուշացրել եմ մեղուներին կրետների հարձակման մասին, որից հետո ահավոր պատերազմ եղավ ու մեղուները հաղթեցին:

– Ապրե՛ս Դու, – ուրախացավ իշամեղուին: – Ինձ համար պատիվ է հանդիպել քեզ: Ես էլ եմ, իհարկե՝ ինչ-որ առումով, մեղու և շատ ուրախ եմ հանդիպել մեկին, ով այդպես օգնել է իմ ցեղակիցներին: Վերցրու այդ ուղեցույցն անվճար, ես այն նվիրում եմ քեզ մեծ հաճույքով:

– Շնորհակալություն, – ասաց Լեոն, վերցրեց ուղեցույցն ու հրաժեշտ տալով իշամեղվին՝ շարունակեց ճանապարհը:

Բացելով ուղեցույցը՝ նա կարդաց անտառի մասին հանրագիտարանային տեղեկություններ: Լեոն իմացավ, որ անտառը Երկիր մոլորակի վրա ապրող բոլոր արարածների բարեկամն է: Փագանների, թռչունների ու շատ այլ կենդանիների համար այն հանդիսանում է հարազատ տուն:

Դաշտերի համար անտառը հրաշալի պահապան է քամուց: Օրինակ, եթե չլիներ անտառը, ապա քամին

այնպես ազատ ու անկաշկանդ կփչեր, որ դաշտից կքշեր կտաներ հողի ամբողջ բերրի շերտը՝ չորացնելով ու ամայացնելով դաշտը:

Անտառը լավ բարեկամն է նաև ջրային ավազանների, գետի ու նրա բնակիչների՝ ձկների, խեցգետինների, գորտերի, տրիտոնների, կուղբերի:

Դե, իսկ մարդու համար անտառն ամենաշռայլ բարեկամներից մեկն է: Դժվար է թվարկել այն ամենը, ինչ տալիս է անտառը՝ սկսած փայտից մինչև մաքուր օդն ու նաև սնունդը՝ հատապտուղներից մինչև սնկերը և այլն: Մարդը խորին երախտագիտությամբ է լցված անտառի հանդեպ՝ դաշտերի բերրիության, խոր ու զուլալ գետերի, մաքուր օդի համար: Մարդն օգտվում է այդ ամենից: Անտառը մի ուրիշ նշանակություն էլ ունի: Այն մարդկանց է նվիրում իր անկրկնելի, անձեռակերտ գեղեցկությունը: Եվ իսկապես, հարուստ ու անչափ գեղեցիկ է անտառը: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր ծառ, թուփ, կամ էլ խոտ, ինչպես նաև անտառի բոլոր բնակիչներին, պետք է սիրել ու պահպանել:

Լեռն կարդում էր ու նայում շուրջբոլորը՝ հիանալով անտառի անձեռակերտ գեղեցկությամբ: Կուսական անտառն ասես դրախտավայր լիներ, ուր երջանիկ ու անհոգ ապրում էին բազմաթիվ ու բազմատեսակ կենդանիներ, առատորեն աճում տարբեր տեսակի բույսեր՝ խոտերից, թփերից մինչև հսկա ծառերը: Հրաշալի էր անտառը և գերում էր իր բույրով, իր թարմությամբ, իր ականջ շոյող, անուշ ու բազմապիսի ձայներով, իր գույներով ու տեսարաններով, իր մեծությամբ ու խորությամբ:

Հիանալով անտառով՝ Լեռն շարունակում էր մեկ կարդալ ուղեցույցը, մեկ հիանալ անտառի տեսարաններով: Նա

հետևում էր ուղեցույցում եղած քարտեզին, որպեսզի արագ կողմնորոշվի ու դուրս գա անտառից:

Եվ ահա, այդպես աննկատ անցավ մի որոշ ժամանակ, ու Լեոն ինքն էլ չնկատեց, թե ինչպես դուրս եկավ անտառից՝ հետևում թողնելով այդ խորհրդավոր ու գերող աշխարհը:

Վերջին օրերին Լեոն էլ ուր ասես, որ չեղավ, ինչ արկածներ ասես, որ չունեցավ: Եվ հիմա էլ առջևում անհայտ ու խորհրդավոր հորիզոնն էր:

Հասնելով մի թփի՝ նա հարմար տեղավորվեց ու քնեց, քանի որ շատ հոգնել էր երկար ճամփորդությունից:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

*Որտեղ գատիկը ծանոթանում է կոլորադոյան բզեզի հետ*

Առավոտյան Լեոն վեր կացավ թարմ ուժերով և մարդկանց աշխարհը հասնելու հաստատակամությամբ լեցուն: Մի քիչ թռչելուց հետո նա տեսավ ընդարձակ ու դեղին մի դաշտավայր և հասկացավ, որ ցորենի արտն է դա: Թռավ դեպի արտը: Նա մտածում էր, թե ինչպե՞ս պիտի թռչի անցնի այդ մեծ արտը, երբ, հանկարծ, թեթև քամի սկսվեց ու գատիկին քշեց առաջ: Քամին օգնեց գատիկին, որ նա արագ անցնի արտը: Կարճ ժամանակ հետո նա իրոք հայտնվեց կարտոֆիլի դաշտի առջև, որի մասին պատմել էր Կադնու իմաստունը: Երբ նա բավականաչափ մոտեցավ դաշտին, տարօրինակ հոտ առավ ու լսեց մի տարօրինակ ձայն.

– Հաաաա՛ փչի՛:

– Տեսնես՝ սա ի՞նչ էր: Հավանաբար, մեկը հարբուխ է ընկել, – մտածեց Լեոն:

- Հաաաա՛ փչի՛, – կրկնվեց:
- Ներեցեք, ո՞վ կա այստեղ, – հարցրեց Լեոն:
- Կարտոֆիլի բույսի ցողունի հետևից հայտնվեց մի շերտավոր, կլորիկ բզեզ:
- Բարև Ձեզ, – քաղաքավարի ասաց զատիկը:
- Բաաաաա՛րև, հաաաա՛ փչի՛, – մի կերպ ասաց բզեզը:
- Առողջությո՜ւն: Ներեցեք, ինչո՞վ կարող եմ օգնել Ձեզ, Դուք մրսե՞լ եք:
- Չէ, բարեկամ, ի՞նչ մրսել, պարզապես մարդիկ ամբողջ դաշտում թունաքիմիկատ են սրսկել, որպեսզի մեզ ոչնչացնեն: Իսկ ես ալերգիա ունեմ այդ զանազան թունաքիմիկատներից, պատրաստուկներից, միջատասպան նյութերից, և հենց դաշտը սրսկում են, մոտս հարբուխ է սկսվում, հաաա՛ փչի՛, – փռշտալով վերջացրեց իր խոսքը բզեզը:
- Էլի՞ մարդիկ, – սարսափած ասաց Լեոն: – Նրանք ցանկացել են սպանե՞լ Ձեզ:
- Այո, մենք ուտում ենք կարտոֆիլ բույսը, ու դրա համար նրանք մեզ ոչնչացնում են: Մենք համարվում ենք գյուղատնտեսական բույսերի վնասատուներ, կենդանիներ, որոնք վնասում կամ ոչնչացնում են մշակովի բույսերը: Ի դեպ, ծանոթանանք, ես կարտոֆիլի կոլորադյան բզեզն եմ, անունս Ռիկ է, իսկ Դո՞ւ:
- Ես զատիկ եմ, Լեո է անունս, շատ հաճելի է:
- Փոխադարձ:
- Իսկ Ձեզ պես վնասատուներ շա՞տ կան:
- Այո, եղբայր, մարդիկ մեզ վնասատուներ են համարում: Ինձնից բացի, գյուղատնտեսական բույսերի էլի շատ վնասատուներ կան՝ պտղակերներ, ծաղկակերներ, սերմնակերներ,



տերևակերներ, ողկուզակերներ: Մեր շարքին են դասվում այնպիսի վնասատուներ, ինչպիսիք են բալենու ճանճն ու երկրաչափ թիթեռը, խաղողի ողկուզակերն ու կաղամբի ձերմակաթիթեռը, որդնավիճն ու ոսկետուտը, խնձորենու անկուշտ պտղակերն ու առվույտի տերևային երկարակնճիթը, կաղամբի ցեցն ու իշախառանջը, ոստայնատզերն ու լվիճները: Էլ չեմ ասում, որ բացի միջատներից, գյուղատնտեսական վնասատուներ կան նաև այլ կենդանիների մեջ, օրինակ՝ դաշտամկները: Իսկ ինչ վերաբերում է միջատներին, ապա իմացիր, որ հայտնի բոլոր միջատների մեկ տոկոսն է աշխարհում, որ իրական վնաս է հասցնում գյուղատնտեսական կուլտուրաներին ու նաև ուղղակի կամ անուղղակի վնաս պատճառում մարդուն: Սակայն, վնասատուները երբեմն ոչնչացնում են մի ամբողջ բերքատու այգի կամ մշակովի հողատարածք, և մարդկանց քրտնաջան աշխատանքն ու տանջանքը ջուրը գցում՝ հաշված օրերի կամ ժամերի ընթացքում: Հաաա՛ փչի՛, կներես:

– Առողջություն, – կրկնեց Լեոն:

– Շնորհակալություն: Ե՞րբ կվերջանա այս ավերգիան: Լավ է, որ գոնե ավերգիա է, թե չէ իմ մյուս ցեղակիցներն անմիջապես սատկում են, չեն դիմանում:

– Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Ռիկ, – լսվեց ցողունի վերևից:

Ռիկն ու Լեոն գլուխները բարձրացրին ու տեսան կարմրավուն, որդանման մի կենդանու. դա կոլորադյան բզեզի թրթուրն էր:

– Նա գատիկ է, մեր կողմերում առաջին անգամ է լինում, – ասաց Ռիկը:

Թրթուրն իջավ ներքև:

– Բարև Ձեզ, – ասաց նա:

- Բարև Ձեզ, – ասաց Լեոն:
- Ես կոլորադոյան բզեզի թրթուր եմ, իմ համարն է 3402: Անուն դեռ չունեմ: Կունենամ, երբ դառնամ հասուն բզեզ:
- Շատ ուրախ եմ ծանոթանալ Ձեզ հետ, հարգելի՛ 3402: Իսկ Դուք ինչպե՞ս եք:
- Ես էլ եմ ինձ վատ զգում, բարեբախտաբար՝ թունաքիմիկատ քիչ եմ կուլ տվել: Իսկ Դուք ի՞նչ եք անում այս կողմերում:
- Ես փնտրում եմ մարդկանց աշխարհը. քաղաք եմ գնում:
- Քաղա՛ք, – զարմացան Ռիկն ու 3402-ը: – Մինչև քաղաք դեռ երկար ճանապարհ կա:
- Իսկ ես ե՞րբ կհասնեմ քաղաք:
- Ես քեզ մի լավ խորհուրդ տամ, – ասաց Ռիկը: – Ջգո՛ւյշ եղիր մարդկանցից: Նրանք վտանգավոր են: Ճիշտ է, մենք վնաս ենք տալիս իրենց, սակայն նրանք անկանխատեսելի են ու քեզ էլ կվնասեն:
- Բայց Կադնու իմաստունն ինձ ասել է, որ փնտրեմ ու գտնեմ մարդկանց, քանի որ հենց նրանց շնորհիվ ես կիմանամ իմ հարցի պատասխանը:
- Դե, եթե իմաստունն է այդպես ասել, ուրեմն մի բան գիտի, – ասաց Ռիկը:
- Ասեմ, թե ինչ անեք, – ասաց 3402-ը: – Կարտոֆիլի դաշտից դուրս Դուք իսկապես կգտնեք երկար մայրուղի: Այդ մայրուղիով անցնում են ավտոմեքենաներ: Պարզապես պիտի կարողանաք նստել մի այդպիսի ավտոմեքենայի վրա, ու այն Ձեզ կտանի ուղիղ դեպի քաղաք:
- Լեոն հրաժեշտ տվեց Ռիկին ու թրթուրին՝ մաղթելով նրանց առողջություն և ուղևորվեց դեպի ավտոճանապարհը:
- Լեոն համառորեն անցավ կարտոֆիլի բուլոր տնկիներն ու

վերջապես դուրս եկավ դաշտից՝ հասնելով ճանապարհին: Նա նկատեց, որ այդ ճանապարհի մակերևույթը շատ կարծր է և գորշագույն, ու հիշեց Անձրևատրդ քեռու պատմածը. Լեոն հասկացավ, որ դա ասֆալտն էր: Հագիվ էր նա հասցրել լավ զննել այդ ասֆալտապատ մայրուղին, երբ մի մեքենա սուրալով անցավ: Լեոն շատ վախեցավ: Նա որոշեց մայրուղու եզրին սպասել, մինչև ևս մեկ մեքենա անցնի, որպեսզի փորձի բարձրանալ դրա վրա: Քիչ անց երկրորդ մեքենան երևաց հեռվում: Լեոն պատրաստվեց թռիչքի: Երբ մեքենան արդեն բավականաչափ մոտ էր, զատիկը թռավ ու դժվարությամբ կարողացավ իջնել մեքենայի վրա: Ամուր բռնելով ապակուց՝ Լեոն ուղևորվեց դեպի մարդկանց անհայտ ու խորհրդավոր աշխարհը...

## ԳՆՈՒՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ

*Որտեղ Լեոն հայտնվում է բնակարանում*

Մեքենան մեծ արագությամբ հասցրեց Լեոյին քաղաք, և նրա առջև բացվեց վիթխարի ու անժանոթ մի աշխարհ: Նրա դիմաց խոյացել էին մեծ, բարձրահարկ բետոնե կառույցներ՝ շենքեր, իսկ փողոցում սլանում էին մեքենաները:

Երբ մեքենան կանգ առավ, Լեոն սարսափած ցած թռավ ու հասավ մի պատուհանագոգի: Նա առաջին անգամ, վերջապես, տեսավ մարդկանց, ում մասին այդքան լսել էր, և որոնք քայլում էին մայթերով, վարում մեքենաներ, մտնում շենքերն ու դուրս գալիս դրանցից: Երկոտանի հսկա այդ արարածներն առեւելի չափեր ունեին զատիկի համեմատ, և նա շատ վախեցած էր:

Քաղաքի աղմուկն ուղղակի շշմեցրել էր Լեոյին: Նա, տեղում գամված, անդադար նայում էր մարդկանց ու մեքենաների խելահեղ հոսքին: Շուրջբոլորը մեքենաների ազդանշանների ձայներ էին: Բնության խաղաղությանը սովոր փոքրիկ կենդանու համար շատ անսովոր էր այդ անտանելի աղմուկը: Նա նայեց պատուհանին ու, արանք գտնելով, պատշգամբից ներս մտավ՝ հայտնվելով մարդկանց մերօրյա կացարանում՝ բնակարանում: Զատիկի համար դա բացահայտումներով լի մի նոր, մեծ ու խորհրդավոր աշխարհ էր:

Լեոն զգուշորեն թռավ պատուհանի տակ դրված սեղանի վրա և սկսեց զննել սենյակը: Նա ապշած նայում էր այնտեղ դրված իրերին՝ կահույքին, հեռուստացույցին, աթոռներին, գորգին, պատից կախված նկարին ու ժամացույցին, սենյակի անկյունում գտնվող դաշնամուրին, մի խոսքով՝ ամեն ինչին:

Սենյակում ոչ ոք չկար: Լեոն անաղմուկ թռավ, ու անցնելով բազմոցն ու երկու բազկաթոռները, հասավ մի դռան, անցավ այդ դռնից ներս ու հայտնվեց մեկ այլ սենյակում. դա խոհանոցն էր: Այստեղ գտնվող սառնարանը, գազօջախը և մյուս իրերն ու սարքերը նույնպես շատ զարմացրին նրան, սակայն ամենից շատ նա զարմացավ խոհանոցի կահույքի մի անկյունում գտնվող լվացարանակոնքը տեսնելով, որի վերևում ջրի ծորակն էր, իսկ դրանից էլ ջուր էր հոսում: Լեոն ապշել էր, պարզապես քար կտրել զարմանքից: Նա ջուր տեսել էր միայն լճակում և մտածեց. «Մի՞թե այդ տարօրինակ խողովակից լճակի ջուրն է գալիս»: Նա չգիտեր, որ մարդիկ խմում են քաղցրահամ, խմելու համար պիտանի ջուր, որը մաքուր ու անվտանգ է: Մի բան Լեոն տեղին էր նկատել. ջրի ծորակն անտեղի բաց էր ու ջուրը

հոսում էր. մարդիկ երբեմն անփութորեն ջուրը բաց են թողնում, մինչդեռ խմելու անգին ջուրը պետք է խնայողաբար օգտագործել, որպեսզի աշխարհում ջրի պակաս չլինի, չէ՞ որ շատ վայրեր կան, որտեղ խմելու ջրի մեծ պակաս կա կամ էլ ջուր ընդհանրապես չկա:

Եվ ահա, հենց խոհանոցում էլ Լեոն լսեց մի տոգոց: Նայեց շուրջը և տեսավ մի միջատի, ինչպիսին երբևէ չէր տեսել: Այդ միջատը պտտվում էր հենց իր գլխավերևում՝ կտրուկ փոխելով թռիչքի ուղղությունն ու անկյունը և ուշադիր զննում էր իրեն: Հետո նա արագ ցած իջավ և հարցրեց.

– Դու ո՞վ ես, Քեզ երբեք չեմ տեսել այս տանը:

– Ես այս տանը, ինչպես Դուք եք կոչում այս վայրը, առաջին անգամ եմ գտնվում: Քիչ առաջ մտա: Բարև Ձեզ: Ես գատիկ եմ, անունս՝ Լեո: Ծանոթանա՞նք:

– Ծանոթանանք: Ես Ֆիլիպն եմ՝ սենյակային ճանձ:

– Դուք այստե՞ղ եք ապրում, – հարցրեց Լեոն:

– Այո, ես ապրում եմ բնակարանում: Մենք՝ սենյակային ճանձերս, այստեղ ապրում, սնվում ու սերունդ ենք տալիս:

– Իսկ սա ո՞ւմ տունն է:

– Մարդկանց: Այստեղ մի ընտանիք է ապրում: Ի միջի այլոց, մեր մեջ ասած, շատ փնթի են: Հիմա նրանք տանը չեն:

– Իսկ նրանք վտանգավոր չե՞ն: Ինչպե՞ս եք նրանց հետ կողք կողքի ապրում:

– Դե, աշխատում ենք նրանց հետ գործ չունենալ, քանի որ մարդիկ մեզ սպանում են, սատկացնում, եթե շատ ենք նյարդայնացնում իրենց:

– Իսկ Դուք շա՞տ եք նյարդայնացնում:

– Պատահում է: Մեկ-մեկ շատ ճանձեր են լցվում տուն, ամեն տեղ նստում, ամենուրեք կեղտոտում, և մարդիկ էլ

կամ ճանճասպան փայտով են մեզ հարվածում, կամ կաչուն թղթեր կախում, որոնք գրավում են մեզ, սակայն հետո կաչուն ենք դրանց, կամ էլ փակում են պատուհանները ու չենք կարողանում ներս մտնել: Բայց, միևնույն է, ես սիրում եմ այստեղ ապրել, ինձ այստեղ դուր է գալիս՝ չնայած բոլոր դժվարություններին ու վտանգին: Մեզ՝ ճանճերիս համար այստեղ լավ է, քանի որ մարդկանց տանը միշտ ինչքա՛ն ուզես սնունդ կա, տաք է և միշտ կգտնես մի անկյուն կամ անցք՝ թաքնվելու համար: Համ էլ ասեն, որ քաղաքի ամենալավիկ, սիրունիկ օրիորդ ճանճերը հանդիպում են հենց բնակարաններում, այստեղ միշտ մի ընկերուհի կգտնես:

– Ներեցեք, իսկ Դուք այստեղ ի՞նչ եք ուտում:

– Ինչ պատահի, ամեն ինչ սիրում ենք, նստում ենք վրան ու լիզում: Հաճախ մարդկանց վրա էլ ենք նստում, դա նրանց հատկապես զայրացնում ու նյարդայնացնում է, երբ պառկած հանգստանում են կամ քնած են լինում: Մի խոսքով, ախպերս, – մի կողմ թողնելով քաղաքավարությունն ու անցնելով լրիվ ազատ, անկաշկանդ, մտերիմ զրույցի՝ ասաց ճանճը, – էդ մարդկանցից լավ բան չսպասես, դրանցից միայն վտանգ կա: Արի, ես հիմա քեզ մի բան ցույց տամ:

Ճանճը թռավ, գատիկն էլ՝ նրա հետևից: Նրանք թռան դեպի մի փոքր սենյակ, որի պատերից մեկի վրա Ֆիլիպը ցույց տվեց շրջանակների մեջ, ապակու տակ չորացրած թիթեռների ու բզեզների:

Լեոն սարսափեց: Ճանճը սկսեց վրդովված պատմել մարդկանց մասին:

– Տե՛ս, – ասաց Ֆիլիպը: – Ի՛նչ դաժան են էս մարդիկ, խեղճերին բռնել ու չորացրել են, հիմա էլ հաճույք են ստանում էդ խրտվիլակ դարձրած միջատներից:

Լեոն տեսավ պախրա-բզեզի, գեղեցիկ, մեծ թիթեռների, որոնց չորացրել էին իրենց գրավիչ արտաքինի համար, սպանել ու դրել շրջանակի մեջ՝ որպես գեղեցկություն:

Ձատիկը հուզվել էր, նրա աչքերը լցվեցին, հուզմունքից կրկին թրջվեցին թաթիկները:

– Բա՛, պապերս, տես, թե ոնց են չորացրել խեղճերին: Ի՞նչ է, չէ՞ր կարելի նկար կախել տանը, մի՞թե ավելի լավ չէր լինի, որ այս խեղճերը ողջ լինեին և իրենց անհոգ կյանքով ազատ ապրեին բնության գրկում:

Լեոն հուզված, տխուր լսում էր Ֆիլիպին, երբ հանկարծ ճանճի աչքերը փայլեցին ու նա ինքնամոռաց, բարձրաձայն գոչեց.

– Պանի՛ր, պանրի հո՛տ եմ առնում:

– Ի՞նչ, ի՞նչ պատահեց, – զարմացավ զատիկը:

– Ախպերս, ես խելագարի պես սիրում եմ պանիր: Ների՛ր, բայց չեմ կարող դիմադրել, պիտի թռչեմ դեպի պանիրը...

– Ֆիլի՛պ, Ֆիլի՛պ, ուշքի արի, հանգստացիր, ո՞ւր է պանիրը, այստեղ ոչ մի պանիր չկա:

– Դա հաստատ կողքի բնակարանում է, ես զգում եմ պանրի անո՛ւշ հոտը: Ա՛խ, պանի՛ր: Ես թռչում եմ դեպի այնտեղ, էլ չեմ դիմանում: Արի՛ իմ հետևից, – բռնելով Լեոյի ձեռքը՝ նրան էլ իր հետ տարավ դեպի պատշգամբը, և բաց պատուհանից երկուսով դուրս եկան այդ բնակարանից:

– Առա՛ջ դեպի պանիրը, – գոչեց ճանճը:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՍԵԿԵՐՈՐԴ

*Որտեղ մեր պատմության հերոսը վերջապես գտնում է  
իր հարցի պատասխանը*

Եվ ճիշտ որ, կողքի բնակարանում տան տիրուհին սեղան էր գցում և բացելով սառնարանը՝ այնտեղից հանել էր զանազան կերակուրներ, ուտելիքներ ու նաև՝ թարմ պանիր:

Ֆիլիպն ու Լեոն թռան դեպի այդ բնակարանի պատշգամբը:

– Ես գալիս եմ քեզ մոտ, պանիր, – բարձրաձայն ասում էր Ֆիլիպը:

Բարեբախտաբար, բնակարանի պատուհաններից մեկը բաց էր, և նրանք ներս մտան:

Ֆիլիպն անմիջապես շտապեց դեպի լիքը սեղանը:

– Ֆիլիպ, սպասիր, – բղավեց Լեոն:

Սակայն Ֆիլիպին պահելն այլևս անհնար էր: Նա ինքնամոռաց նետվեց դեպի պանիրը, նստեց դրա վրա ու պատրաստվեց ուտել: Տան տիկինը նկատեց ճանձին, ձեռքի սրբիչով փորձեց քշել նրան, և երբ Ֆիլիպը փոքր-ինչ վերև թռավ ակսեից, կինը սրբիչով խփեց ճանձին՝ շարտելով նրան հեռու:

– Ֆիլիպ, – գոռաց Լեոն:

Ֆիլիպը թռավ: Նա ողջ մնաց, սակայն հարվածից շշմել էր ու թաքնվեց մի տեղ՝ ուշքի գալու համար:

– Ինչ անխելք եմ այս ճանձերը, – մտածեց Լեոն: – Նա իրեն վտանգեց՝ հանուն մի կտոր պանրի:

Լեոն թռավ դեպի մի ինչ-որ սենյակ և, նստելով վարագույրին, փորձեց թաքնվել, որպեսզի իրեն չնկատեն: Նա հետևում էր, թե ինչ էր կատարվում խոհանոցում. տան



տիրուհին ափսեների մեջ ինչ-որ բան լցրեց, որից անուշ հոտ էր գալիս ու գոլորշի էր ելնում, կանչեց տան անդամներին՝ ասելով. «Ճաշը պատրաստ է», որից հետո սեղանին մոտեցավ մի տղամարդ՝ նրա ամուսինը: Այնուհետև նրանք երկուսով կանչեցին մանկական սենյակում խաղացող իրենց փոքրիկ աղջկան:

– Գալիս եմ, մայրի՛կ,– լսվեց երեխայի ձայնը:

Մեկ էլ հանկարծ, այն պահին, երբ աղջիկն անցնում էր վարագույրի կողքով, նկատեց Լեոյին:

– Վա՛յ, տեսե՛ք, գատի՛կ է,– ասաց աղջիկն իր քնքուշ ձայնով և ձեռքը մոտեցրեց Լեոյին:

Ջատիկը վախից ճչաց՝ կարծելով, թե երեխան հիմա իրեն կսպանի:

Նա փակեց աչքերը, կուչ եկավ և վախից սկսեց դողալ:

– Տե՛ս, հայրիկ, տե՛ս մայրիկ, գատիկ եմ գտել,– ասաց աղջիկը՝ մատներով զգուշորեն բռնելով գատիկին և տանելով ու ցույց տալով ծնողներին: Այնուհետև աղջիկը դրեց Լեոյին մյուս ձեռքի ափի մեջ:

Ջատիկն աղջկա մատների վրայով սկսեց խուճապահար այս ու այն կողմ վազել: Նա ուզում էր փրկվել:

– Տեսե՛ք, տեսե՛ք, ինչպես է նա քայլում, ի՛նչ լավն է, ի՛նչ սիրուն է,– հիացած և շատ ուրախացած ասում էր փոքրիկը:

Լեոն զարմացավ: Սկզբում նրան թվաց, թե երեխան կսպանի իրեն, բայց հակառակը՝ նա մատով շոյում էր իրեն, քնքուշ խոսքեր ասում, հրճվում ու փորձում խաղալ իր հետ:

– Մի՞թե մարդիկ բարի էլ են լինում,– մտածեց նա:

Լեոն շուտով հասկացավ, որ այդ երեխայից ոչ մի վտանգ չկա: Նա հրաշալի մի էակ էր, որ այդ պահին մեծ ուրախություն էր ապրում:

– Դե՛, աղջիկս, տար նրան պատուհանի մոտ ու բաց թող,– բարի ծայնով ասաց երեխայի հայրը:

– Իհարկե, հայրիկ: Հիմա քեզ ազատ կարծակեմ,– զատիկին նայելով՝ ասաց աղջիկն ու շարունակեց,– քեզ բաց կթողնեմ, որ դու թռչես ու ապրես ազատ:

Երեխան մոտեցավ պատշգամբին, ձեռքը հանեց բաց պատուհանից դուրս, բացեց ափը, որպեսզի զատիկը թռչի:

– Թռի՛ր, իմ սիրուն զատիկ, թռի՛ր քեզ համար, գնաս բարով:

Լեոն մի պահ չհավատաց, որ աղջիկն իրեն իսկապես ազատ է արձակում, հետո արագ բացեց իր վերնաթևերը, ուղղեց թևերը և թռա՛վ:

– Տեսե՛ք, նա թռավ,– ուրախացած զոչեց բարի աղջնակը:

– Չատիկը լավ բզեզ է, գեղեցիկ ու լավ, փոքրիկ բզեզ,– ասաց երեխայի մայրիկը, որը նույնպես մոտեցել էր պատուհանին: – Ապրե՛ս, որ բաց թողեցիր նրան:

Լեոն լսեց այդ ամենը, լսեց, թե ինչպես իրեն անվանեցին գեղեցիկ, փոքրիկ ու լավ բզեզ, լսեց նաև, թե ինչպես մայրիկը գովեց իր երեխային լավ ու բարի արարքի համար: Չատիկն ուրախ թռավ ու հեռացավ: Նա այնքան երջանիկ էր այդ վայրկյանին, որ կարևոր չէր, թե ուր կթռչի:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

*Որտեղ ավարտվում է Լեոյի պատմությունը*

Այդ ճակատագրական հանդիպումը մարդկանց և հատկապես անուշ ու բարի, փոքրիկ աղջկա հետ շատ բան փոխեց մեր գատիկի կյանքում: Նա խորը հետևություններ արեց: Լեոն հասկացավ, որ մարդիկ լինում են նաև բարի, սրտացավ, հասկացավ, որ նրանց մեջ կան այնպիսիք, ովքեր բնությունը, մասնավորապես՝ կենդանիներին ու բույսերին, շատ են սիրում: Լեոն, վերջապես, գտավ իր հարցի պատասխանը. ամեն մի արարած գեղեցիկ ու կարևոր է յուրովի: Պետք չէ դառնալ մեծ բզեզ, որպեսզի քեզ սիրեն ու նկատեն, քանի որ գատիկին սիրում են հենց այնպիսին, ինչպիսին նա կա: Լեոն հասկացավ նաև, որ բնության մեջ կարևոր ու անկարևոր կենդանիներ չկան, բոլորն էլ կարևոր են: Մարդը պաշտպանվում է վնասատու միջատներից, բայց միևնույն ժամանակ՝ սիրում, գնահատում ու պահպանում օգտակարներին: Զատիկը հասկացավ, որ լինելով այդքան փոքրիկ չափերի բզեզ, նա վայելում է մարդկանց սերն ու հիացմունքը: Լեոյի համար արդեն պարզ էր, որ ամեն մի բզեզ յուրահատուկ է իր չափերով, տեսքով, բնության մեջ ունեցած դերով. պետք չէ կյանքում ձգտել նմանվել ուրիշին, այլ պետք է ինքդ լինես ինքնատիպ, առանձնահատուկ: Եվ երբ գատիկը գիտակցեց այս ամենը, ապա շատ երջանիկ զգաց, որ ինքը գատիկ է, հենց գատիկ և ոչ թե մեկ այլ կենդանի: Այդ վայրկյանին Լեոն աշխարհի ամենաերջանիկ գատիկն էր: Նա ոգևորված թռչում էր, իր ներսում ուրախությունից ամեն բան տակնուվրա էր լինում: Նա անսահման սիրեց մարդկանց և շատ ուրախ էր, որ հանդիպումը նրանց հետ այդպիսի

ավարտ ունեցավ: Լեոն հիշեց Կաղնու իմաստունին. որքա՛ն ճիշտ էր Ալեքսանդր իմաստունը, երբ ասաց, որ նա իր հարցի պատասխանը կգտնի մարդկանց հանդիպելով և ճանաչելով: Լեոն մարդկանց շնորհիվ կարողացավ գնահատել իրեն ու չամաչել, որ նա փոքր բզեզ է:

Այդպես ոգևորված և ուրախ նա թռա՛վ-թռա՛վ ու հասավ մայթեզրին աճող մի մեծ բարդու մոտ: Նստեց նրա տերևներից մեկի վրա: Եվ հանկարծ Լեոյի հետևից ծայն լսվեց.

– Լե՛ո, Լե՛ո, – կանչեց նրան այդ ծայնը:

Լեոն շրջվեց և իր հետևում տեսավ հիասքանչ մի թիթեռի: Նրա կարմրանարնջագույն թևիկները, դրանց վրա՝ նուրբ բծերն ու զոլերն արևի լույսի տակ այնքան գեղեցիկ էին, որ միանգամից աչքի էր զարնում բարդու ժապավենավոր թիթեռի գեղեցկությունը:

– Ներեցեք, մենք ծանոթ ենք, – զարմացած հարցրեց Լեոն՝ փորձելով ճշտել, թե որտեղի՞ց է այդ անծանոթ թիթեռը ճանաչում իրեն:

– Դե, իհարկե եղբայր, իհարկե ծանոթ ենք, ավելին՝ Դու իմ լավագույն բարեկամն ես:

– Բայց ես... ախր...

– Այդ ե՛ս եմ, Ջագուն, ի՞նչ է, չե՞ս հիշում ինձ:

– Ջագո՛ւ, – բացականչեց Լեոն, և նրանք գրկախառնվեցին: – Այդ դո՛ւ ես, ինչպե՛ս ես փոխվել:

– Այո՛, իրականացավ իմ երազանքը, ինձ արդեն ոչ ոք չէր հավատում, արդեն սկսել էին ծաղրել, սակայն դա տևեց մինչ այն պահը, երբ հանդիպեցի քեզ: Ո՛ր հիմա տե՛ս, թե ինչպիսի՜ն դարձա այն հաստիկ ու շատակեր թրթուրից, – ուրախ ծիծաղով ասաց Ջագուն ու լայն բացեց իր թևերը, որպեսզի Լեոն ևս մեկ անգամ տեսնի ու հիանա իր գեղեցկությամբ:

– Անչափ ուրախ եմ քեզ համար: Ես գիտեի, որ այդպես կլինի, – ասաց զատիկը:

– Եղբայրս, այդ դու ինձ օգնեցիր, քո շնորհիվ է, որ չկորցրի հույսս: Հիշո՞ւմ ես, թե ի՞նչ դժվար ու հուսալքված թույններ էի ապրում: Դու ինձ ասացիր թիթեռ դառնալու ճիշտ ուղին: Ես միշտ շնորհակալ կլինեմ քեզ:

– Խնդրեմ, մեծ սիրով:

– Դե, քեզանից պատմիր, ինչպե՞ս ես, ի՞նչ եղավ, գտա՞ր այն հարցի պատասխանը, իրականացա՞վ երազանքդ:

– Գտա՛ հարցիս պատասխանը:

– Եվ ի՞նչ:

– Ես երջանիկ եմ, որ զատիկ եմ, ինձ համար այս աշխարհում զատիկ լինելուց լավ բան չկա, – ասաց Լեոն ու պատմեց իր ընկերոջն այն ամենը, ինչ պատահել էր իր հետ վերջին մի քանի օրերին:

Դուք կհարցնեք, հաստատ, թե ի՞նչ էր անում Զագուն քաղաքում: Բանն այն է, որ նա թռել ու հասել էր քաղաք՝ իր ծանոթներից մեկին հանդիպելու: Հիշո՞ւմ եք, որ նա, թրթուր եղած ժամանակ, հայտարարություն էր տվել: Պարզվում է, որ բազմաթիվ ծանոթներ էր ձեռք բերել: Եվ ահա, այդպիսի մի ծանոթի էլ եկել էր հանդիպելու:

– Ես այստեղ հանդիպեցի մի քնքուշ թիթեռնիկի, որը ժամանակին ինձ պես թրթուր էր, և մենք նամակագրական կապի մեջ էինք: Եկա, ծանոթացանք մոտիկից: Շա՛տ հավանեցի նրան, երևի ամուսնանամ նրա հետ: Ի դեպ, Լե՛ո, մեր կողմերում մի գեղեցիկ զատիկուհու եմ տեսել, – շարունակեց Զագուն: – Շատ լավիկն է, իսկը քեզ համար, քեզ շատ սագում է: Երբ վերադառնանք՝ անպայման կծանոթացնեմ:

- Շատ շնորհակալություն, – ուրախացավ Լեոն:
- Ներեցե՛ք, մի հարցով կարո՞ղ եմ Ձեզ դիմել,  
– հանկարծ լսվեց մի ձայն:
- Ջատիկն ու թիթեռը շրջվեցին ու տեսան մի գեղեցիկ, խոշոր աղոթարարի:
- Կներեք, որ անհանգստացնում եմ, պարզապես ես երբևէ այս կողմերում չեմ եղել և օգնության կարիք ունեմ, – ասաց աղոթարարը:
- Խնդրեմ, ինչո՞վ կարող ենք օգնել Ձեզ, – ասաց Լեոն:
- Բանն այն է, որ ես երկար ժամանակ ապրել եմ տեռարիումի մեջ, սակայն ազատությունից թանկ բան չկա: Չի՛ կարելի կենդանուն պահել վանդակի, ակվարիումի, տեռարիումի կամ տարայի մեջ: Ես փախել եմ այնտեղից, որպեսզի գտնեմ իմ վաղեմի ընկերոջը, որի հետ ժամանակին նույն տեռարիումի մեջ էի ապրում:
- Ի՞նչ հրաշք, – բացականչեց Լեոն՝ անմիջապես գլխի ընկնելով, որ այդ աղոթարարը նույն ինքը Աղոթարարսան Ձյուն Տյանն է, որի մասին պատմել էր իրեն արևելյան մարտարվեստի վարպետ աղոթարարը:
- Պարոն Աղո... թա... սան.. սան... Ծյան... Ձյան, – փորձելով մի կերպ արտաբերել չինական աղոթարարի դժվար անունը՝ շարունակեց Լեոն, – ես գիտեմ, թե ում եք փնտրում: Ես պատիվ ունեմ ճանաչելու Ձեր ընկերոջը: Նա և իր սաները ինձ փրկել են չար սարդի ճանկերից:
- Նա և իր սանե՞րը, – գարմացավ աղոթարարը: – Ի՞նչ սաներ:
- Այո՛, նա արևելյան մարտարվեստի դպրոց է բացել, մարզում է իր սաներին: Ասեմ, որ միշտ հիշում է Ձեզ ու կարոտում, – ասաց զատիկը: – Ա՛յ, թե կուրախանա, երբ

տեսնի Ձեզ: Այսպես. ուղիղ գնացեք, կանցնեք կարտոֆիլի դաշտն ու ցորենի արտը, կիսանեք կաղնուտին ու կգտնեք նրա դպրոցը: Իմ կողմից էլ անպայման բարևեք նրան:

– Շատ շնորհակալ եմ, բարի՛ գատիկ, անչափ երախտապարտ եմ քեզ,– ասաց աղոթարարը, արևելյան ձևով խոնարհաբար հրաժեշտ տվեց և գնաց:

Լեոն ու Ջագուն որոշեցին միասին վերադառնալ տուն՝ իրենց հայրենի վայրերը: Երկուսով ճանապարհն ավելի ուրախ ու արագ կանցնեի: Բարձր տրամադրությամբ նրանք բռնեցին տունդարձի ճանապարհը:

Մինչ նրանք ուրախ զրուցում են և պատմում այն ամենը, ինչ պատահել է իրենց հետ, ես ուզում եմ Ձեզ շնորհակալություն հայտնել, որ այս ամբողջ ընթացքում հետևեցիք փոքրիկ Լեոյի անհավանական ու մեծ արկածներին և խնդրել, որ սիրեք ու պահպանեք կենդանիներին ու բույսերին, որպեսզի բոլորն ապրեն երջանիկ և լինեն այնպես ուրախ, ինչպես հիմա Լեոն է՝ իր հարցի պատասխանը գտած Ջատիկը:

Եվ հիշեք՝ բոլոր կենդանի արարածները հավասար իրավունք ունեն ապրելու մոլորակի վրա:

ԱՌԼԵՆ ՄԱՅԻՍԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

## ՉԱՏԻԿ ԼԵՈՆ

*Տեխնիկական և գեղարվեստական խմբագիր՝*

**Վ. Ռ. Խալաֆյան**

*Խմբագիր՝ Ա. Մ. Մովսիսյան*

*Սրբագրիչ՝ Գ. Ս. Գադայան*

*Շարվածքը, շապիկի մրահղացումը և ձևավորումը՝*

**Ա. Մ. Շահվերդյանի**

Հանձնվել է տպագրության 11.08.2008:

Թուղթը՝ օֆսետ: Ձևաչափը՝ 60×84 1/16:

Հրատարակչական 6,5 մամուլ: Տպաքանակը՝ 100:

Տառատեսակը՝ «Arial LatArm»: Տպագրությունը՝ ռիզոգրաֆիա:

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:

Ք. Երևան, Տերյան 72, հեռ. 58.22.99, 56.24.52

E-mail: [info@limush.am](mailto:info@limush.am)